# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

39ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 12 (1912) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 30, 2019
VOLUME 39, NO. 12 (1912) SATURDAY MARCH 30, 2019

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


**ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ**

## Պէտք Չէ Ենթարկուիլ «Լիտիան Արմինիայի» Սպառնալիքներուն

Ամուլսարի ոսկի հանքի հետ կապուած հարցը կը շարունակէ մնալ Հայաստանի կառավարութեան օրակարգին վրայ: Բնապահպանութեան գծով պայքարող կազմակերպութիւնները ու անոնց ակտիւիստները յեղափոխութենէն ի վեր կը շարունակեն փակ պահել դէպի հանքավայր տանող ճանապարհները, այդպիսով կասեցնելով հոն կատարուող աշխատանքները:

Բնապահպանութեան ջատագովներու եւ հանքի պատճառելիք վնասներով մտահոգ մասնագէտներու ուսումնասիրութիւններուն համաձայն, Ամուլսարի սիանիտային ոսկիի շահագործման հետեւանքով յառաջացող թթուները, ծանր մետաղները եւ վտանգաւոր նիւթերը ունակ են աղտոտելու Արփա, Որոտան եւ Դարբ գետերը, վնաս հասցնելով նաեւ Սպանդարեանի եւ Կեչուտի ջրամբարին, Որոտան-Արփա թունէլին ու Սեւանայ Լիճին: Հետեւանքները կրնան տեւել հարիւրաւոր տարիներ: Այս բոլորի կողքին կրնան թունաւորուիլ նաեւ Ջերմուկի հանքային ջուրերը, որոնք կը նկատուին Հայաստանի բնական հարստութիւններէն:

Իշխանութեան գալէն ասդին Նիկոլ Փաշինեանի կառավարութիւնը կը փորձէ լուծում տալ այս հարցին, սակայն հիմնականին մէջ վարելով ձգձգումի քաղաքականութիւն մը, որ ուշ թէ կանուխ կարիք ունի հիմնական լուծում ստանալու: Վերջերս մօտ 400 հազար տոլար պետութեան պիւտճէէն յատկացում կատարուեցաւ, միջազգային կազմակերպութեան մը կողմէ անկախ փորձաքննութիւն իրագործելու համար: Սակայն, տարիներ առաջ հանքի շահագործման արտօնագիր ձեռք ձգած՝ «Լիտիան Արմինիա» ընկերութիւնը վերջերս սկսած է կոշտ լեզուով խօսիլ՝ միջազգային դատարաններ դիմելու եւ ցարդ ունեցած եւ ապագային գոյանալիք վնասներուն դիմաց Հայաստանի պետութենէն միլիոնաւոր տոլարներու հատուցում պահանջելու սպառնալիքներով:

«Լիտիան Արմինիա» ընկերութեան բաժնետէրերը կը հանդիսանան կարգ մը Հայեր ու նաեւ միջազգային ընկերութիւններ, որոնք ըստ մասնագէտներու, մեծ փորձառութիւն չունին հանքերու շահագործման եւ հաւանական վտանգներու դիմաց կանխարգելիչ սարքաւորումներ տեղադրելու մարզէն ներս: Անոնք նոյնիսկ թերացած են պայմանագրով իրենց ստանձնած որոշ պարտաւորութիւնները կատարելու մէջ:

Ամուլսարի ոսկիի հանքի հարցով իշխանութիւնները պէտք է դիմեն վճռական քայլերու, չենթարկուելով «Լիտիան Արմինիայի» սպառնալիքներուն:

«ՄԱՍԻՍ»

## ԵԽԽՎ-ի Զեկուցողները Արձանագրած Են Դրական Փոփոխութիւններ՝ Հայաստանի Մէջ




*Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողները Հայաստան կատարած այցի արդիւնքներով յայտարարած են, որ երկրի իշխանութիւնները հիանալի կը հասկնան հանրութեան ակնկալիքները: Հայաստանի հարցերով համազեկուցողներ Եուլիա Լովոչքինան (Ուքրանիա) եւ Անտրէյ Շիրցելին (Սլովենիա) լոյս յայտնած են, որ Հայաստանի մէջ սպասուող բարեփոխումները կը յանգեցնեն յստակ եւ զգալի արդիւնքներու:*

*Զեկուցողները ողջունած են Ազգային ժողովին համակարգին մէջ կեդրոնական դեր յատկացնելու խորհրդարանականներու պատրաստակամութիւնը, ինչպէս նաեւ իշխանութեան ճիւղերը տարանջատելու գործադիրի ցանկութիւնը:*

*«Հայաստանի մէջ «ուղղաձիգ իշխանութեան» աւանդոյթը հինցած է, եւ կարելի է միայն ողջունել ուժերու իրաւական հաւասարակշռութիւն ստեղծելու ցանկացած պատրաստակամութիւն»,- ըսած են համազեկուցողները՝ ընդգծելով, որ այն կրնայ նպաստել Հայաստանի մէջ ժողովրդավարական մշակոյթի արմատաւորման՝ հիմնուած բազմակարծութեան եւ հանդուրժողականութեան վրայ:*

*Հայաստանի մէջ ունեցած հանդիպումներու ընթացքին համազեկուցողները տեղեկացուած են, որ իշխանութիւններու մօտ տեղի ունեցած են տրամադրութեան եւ վերաբերմունքի ակնյայտ փոփոխութիւններ շարք մը ուղղութիւններու նկատմամբ, ինչպիսիք են սեռային հաւասարութիւնը, կաշառակերութեան դէմ պայքարը: Անոնք նաեւ տեղեկացուած են, որ կաշառակերութեան դէմ պայքարի առաջին արդիւնքները արդէն առկայ են:*

*«Մենք կ'ողջունենք պատրաստուող բարեփոխումներու մեծ մասը, որոնք կը վերաբերին դատական իշխանութեան անկախութեան, նոր քրէական քաղաքականութեան*

Շար.ը էջ 5

## Կլատիս Պերեճիքլեանը Ընտրուած է Նահանգային Վարչապետ



Կլատիս Պերեճիքլեան ելոյթ կ'ունենայ ընտրութեան արդիւնքները յայտնի դառնալէն ետք

*Աւստրալահայ քաղաքական գործիչ Կլատիս Պերեճիքլեանը Նոր Հարաւային Ուէյլզ (New South Wales ) նահանգի մէջ տեղի ունեցած ընտրութիւններուն յաղթանակ տանելով դարձաւ նահանգի վարչապետ:*

*Պերեճիքլեանի քաղաքական յենարան՝ Լիպերալ կուսակցութիւնը յաղթած է ընտրութիւններուն,*

Շար.ը էջ 5

## Փասատինայի ՀԿԲՄ-ի Սրահի Բարեզարդման Ի Նպաստ Ճաշկերոյթի Ընթացքին Հանգանակուեցաւ 150 Հազար Տոլար

*Վերջին տարիներուն խիստ անհրաժեշտ կը նկատուէր Փասատինայի Հ.Կ.Բ.Մ.ի կեդրոնի Կարօ Սողանալեան սրահի եւ յարակից բաժանմունքներու վերանորոգութիւնն ու բարեզարդումը, քայլ պահելու համար ժամանակի եւ արդիական պահանջներուն: Այս նպատակով կազմակերպուած էր յատուկ յանձնախումբ մը, որուն բազմակողմանի գործերէն մին եղաւ հանգանակային ճաշկերոյթի մը, որ տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ Մարտ 23, 2019 Կարօ Սողանալեան սրահին մէջ:*

*Միջոցառումին ներկայ էին Արեւմտեան Թեմի նախկին առաջնորդ Գեր. Վաչէ Արք. Յովսէփեան, ՍԴՀԿ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տօքթ. Համբիկ Սարաֆեան կեդրոնէն ներս գործող տարբեր կառոյցներու վարչական անդամներ եւ համակիրներ:*

*Սոյն միջոցառումի կազմակերպիչ յանձնախումբի անունով Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ մարմնի ատենապետուհի Կարինէ Գոճապապեան, իր ելոյթին մէջ, ջերմօրէն շնորհաւորեց հրաւիրեալներն ու հիւր անձնաւորութիւնները, որոնք եկած էին քաջալերելու այս հայրենանուէր հաստատութիւնն ու անոր օգտաշատ առաջադրանքները:*



Տէր եւ Տիկին Թադէոս եւ Նորա Քէորողլեաններ՝ շրջապատուած յանձնախումբի անդամներով եւ ՍԴՀԿ ղեկավարներով

*Օրուան հանդիսավարն էր Ստեփան Յովակիմեան, որ իւրայատուկ զուարթախօսութեամբ ընթացք տուաւ յայտագրին:*

*Շնորհալի Ջութակահար Մերուժան Մարգարեանի դասական եւ ժողովրդային նուագներու ներքեւ տեղի ունեցաւ համադամ ընթրիքի սպասարկումը, ընկերային զուարթ մթնոլորտի մը մէջ:*

*ՍԴՀԿ Վարիչ Մարմինի փոխատենապետ Գաբրիէլ Մոլոյեան իր ելոյթին մէջ համապարփակ տեղեկութիւններ տուաւ 50 տարիներ առաջ Լիբանանի մէջ հիմնադրուած Հ.Կ.Բ.Մ.ի կրթանուէր եւ ժո-*

Շար.ը էջ 7

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Փաշինեանի Փակ հանդիպումը Բանակի Հետ. Ալիեւը Հասկացաւ, որ խաղն աւարտուած է

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Մարտի 29-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու Ատրպէյճանի նախագահ Ալիեւը լինելու են Վիեննայում, որտեղ նրանցից իւրաքանչիւրի հետ առանձին հանդիպում կ՚ունենայ Աւստրիայի նախագահ Ալեքսանդր Վան Դեր Բելենը: Կը լինի՞ արդեօք Փաշինեան-Ալիեւ հանդիպում, այդ մասին յայտնի չէ:

Մի քանի շաբաթ առաջ Մինսկի խմբի համանախագահները յայտարարեցին, որ Հայաստանի վարչապետն ու Ատրպէյճանի նախագահը իրենց ռեգիոնալ այցի ընթացքում հաւաստիացրել են հանդիպելու պատրաստակամութեան մասին: Սակայն, հանդիպման կոնկրետ տեղ եւ օր համանախագահները չէին նշել: Նրանց յայտարարութիւնից յետոյ եղան հետաքրքիր զարգացումներ, Հայաստանի վարչապետի այցն Իրան եւ այնտեղ հնչեցրած քաղաքական յայտարարութիւնները, դրան զուգահեռ Արցախ-իրանեան սահմանին Հայաստանի ԱԱԾ պետի արած յայտնի յայտարարութիւնը տարածքների ու վերաբնակեցման մասին:

Ի վերջոյ, Մարտի 12-ին Ստեփանակերտում Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան խորհուրդների համատեղ նիստը եւ Նիկոլ Փաշինեանի ելոյթը, որի ընթացքում նա փաստացի յայտարարեց, որ հայկական կողմի համար «մադրիդեան սկզբունքներ» կոչուածն ընդունելի չէ:

Դրան նախորդել էր Մինսկի խմբի մէկ այլ յայտարարութիւն, որտեղ խումբը ակնարկել էր բանակցային ձեւաչափի «միակողմանի» փոփոխութեան անթոյլատրելիութեան մասին: Դա մեկնաբանուել էր իբրեւ դիտողութիւն Նիկոլ Փաշինեանի, նաեւ ԱԱԾ պետի յայտարարութիւնների կապակցութեամբ:

Սակայն, հենց համանախագահների այդ յայտարարութեանն էլ պատասխանեց Երեւանը՝ Ստեփանակերտում համատեղ նիստով եւ վարչապետի ելոյթով:

Դրանից բացի, օրերս տեղի ունեցած մամուլի ասուլիսի ընթացքում էլ Հայաստանի վարչապետը յայտարարեց, որ Արցախի բանակցային մասնակցութիւնը ոչ թէ ձեւաչափի փոփոխութիւն է, այլ վերականգնում, որպէս փաստարկային հիմք յղում անելով նոյն ԵԱՀԿ փաստաթղթերին:

Պաքուն բնականաբար մերժում է այդ մօտեցումը, սակայն ակնառու է, որ Երեւանի երկխօսութիւնը համանախագահների, կամ աւելի շուտ միջազգային ուժային կեդրոնների հետ է՝ ներառեալ համանախագահ եռեակը, ոչ թէ Պաքուի: Մի կողմից շատ յստակ դրուած է, որ Պաքուն պէտք է պատրաստ լինի խօսել Ստեփանակերտի հետ, միւս կողմից նոյնքան պարզորոշ ասուել է, որ Երեւանը պատրաստ է խօսել խաղաղութիւնից, եթէ պատրաստ է Պաքուն:

Իսկ ի՞նչ է նշանակում խօսել խաղաղութիւնից, կամ պատրաստուել խաղաղութեան: Դա առաջին հերթին հենց նշանակում է խօսել Ստեփանակերտի հետ եւ սեփական հանրութեանը պատրաստել դրան, որ Ստեփանակերտի հետ պէտք է խօսել ոչ զէնքի լեզուով:

Ալիեւը բաւականին լաւ հասկացել է խնդիրը: Նրա վերջին «ժողովրդավարական» շարժերը դրա վկայութիւնն են: Պաքուն արձանագրել է, որ Երեւանն ու համանախագահները, Երեւանն ու ռեգիոնալ իրադրութեամբ շահագրգռուած կեդրոնները այլեւս իրար հետ խօսում են բոլորովին այլ լեզուով, եւ Ատրպէյճանը դուրս է մնում դրանից: Ալիեւը փորձում է «միանալ», հետ չմնալ: Յատկապէս այն բանից յետոյ, երբ Նիկոլ Փաշինեանն իր ասուլիսում յայտարարեց, որ, եթէ Ալիեւն անկարող է ատրպէյճանցիների հետ խօսել խաղաղութեան լեզուով, ապա ինքը այդ լեզուով խօսելու բան ունի եւ պատրաստ է:

Դրանից յետոյ Ալիեւը տիկնոջ հետ դուրս եկաւ «փողոց», ատրպէյճանցիների հետ լուսանկարուելու, թէեւ իհարկէ այնքան էլ յստակ չէ, թէ լուսանկարուողներից քանիսն էին շարքային ատրպէյճանցի եւ քանիսը անվտանգութեան աշխատակից: Բայց էականն իհարկէ շարժն էր, ցուցադրութիւնը, որով Ատրպէյճանի նախագահը փորձում էր «տէր կանգնել» իր հանրութեանը:

Թաւշեայ յեղափոխութիւնից եւ Արցախի հարցում հայկական կողմի նոր մօտեցումներից յետոյ Ալիեւն ակնյայտօրէն դուրս է մնացել իր «ափսեից»:

Ռազմական շանտաժը փորձը, որ նա արեց խոշոր զօրավարժութեամբ, Երեւանին ոչ միայն չշեղեց ընտրուած ուղուց, այլ արժանացաւ նոյնիսկ կոնցեպտուալ եւ փաստարկուած պատասխանի՝ Ստեփանակերտի յայտարարութեամբ եւ Երեւանում ասուլիսի ընթացքում ներկայացուած փաստերով:

Ընդ որում, ասուլիսից ժամեր անց յայտնի դարձաւ եւրասիական ռեգիոնում Ատրպէյճանի նախագահի հոգեւոր-քաղաքական յենասիւներից մէկի՝ Նուրսուլթան Նազարբաեւի հրաժարականը՝ 29-ամեայ անդադար նախագահութիւնից յետոյ: Եւ որքան էլ Հայաստանում մի շարք մտաւորական շրջանակներ փորձում են հանրութեանը համոզել, որ Հայաստանն այդ ամէնի հետ կապ չունի, Ալիեւն ի վերջոյ լաւ է հասկանում, որ Նազարբաեւը իրավիճակ էր խորհրդանշում եւ անգամ «էպոխա», որը գնում է այն ռեգիոնալ իրավիճակից յետոյ, որը եկաւ Հայաստանում թաւշեայ յեղափոխութեամբ:

Երեւանում էլ Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ կը խօսի, երբ ժամանակը գայ, կամ այլ կերպ ասած՝ Նիկոլը շարունակում է լինել ճիշտ, Հայաստանը դուրս բերելով իր սխալի հետեւանքից: Ի վերջոյ, անհրաժեշտ է արձանագրել, որ Սերժ Սարգսեանն այդ յայտարարութիւնն արեց Արցախից վերադառնալուց յետոյ, ուր գտնւում էր վերջին օրերին, այդ թւում Մարտի 12-ի պատմական նիստի օրը: Իսկ Սարգսեանի մէկ նախադասութիւնը էական է այն հանգամանքի ֆոնին, որի մասին դեռ Դաւոսից յետոյ արձանագրել է Նիկոլ Փաշինեանը՝ Ալիեւի հետ խօսում են կարգաւորման գործընթացի «պատմութիւնից», ինչը խորքային առումով նշանակում է հենց այն, որ Ատրպէյճանի նախագահը հեռացող գնացքում է: Կը յաջողուի՞ նրան ցատկել այլ ուղղութեամբ ընթացող շարժակազմ:

Համանախագահները գործնականում մատնացոյց արեցին, որ դա այժմ կախուած է Երեւանից, մասնաւորապէս, թէ ինչ է ասելու Փաշինեանը Վիեննայում: Վիեննայի «կայարան» մեկնելուց առաջ Հայաստանի վարչապետը փակ հանդիպում է անցկացնում հայկական զինուժի կազմի հետ, Ատրպէյճանի նախագահի մօտ պատրանք թոյլ չտալու համար:

«ԼՐԱԳԻՐ»

# Կայ Անցեալին Ե՛ւ Քաղաքական, Ե՛ւ Իրաւական Գնահատական Տալու Անհրաժեշտութիւնը

ՀՀ պաշտպանութեան նախկին փոխնախարար Վահան Շիրխանեանի բաց նամակը, որում նա ծանր մեղադրանքներ էր ներկայացրել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանին, մեծ իրարանցում է առաջացրել քաղաքական դաշտում:

ՀՀ գ լխաւոր դատախազը Շիրխանեանի նամակն ուղարկել է ԱԱԾ եւ ՀՔԾ դրանում նշուած փաստերը ստուգելու համար: Նամակում մատնանշուած փաստերից մէկը վերաբերում է 1999թ. Հոկտեմբերի 27-ի գործին, նաեւ պնդում կայ՝ յանցախմբի ղեկավար Նայիրի Յունանեանն ԱԱԾ գործակալ է եղել:

ԱԱԾ պետ Արթուր Վանեցեանը ո՛չ հերքել, ո՛չ էլ հաստատել է այդ լուրերը, այլ միայն ասել, որ Հոկտեմբերի 27-ի գործով նոր հանգամանքներ ի յայտ գալու դէպքում այն կը վերաբացուի, կամ նոր գործ կը յարուցուի:

Շիրխանեանի նամակի երկրորդ հատուածը վերաբերում է 1998թ. նախագահական ընտրութիւնները կեղծելուն, երբ ասել էր, թէ Քոչարեանն իրականում 27 տոկոս է ստացել, բայց 59 տոկոսով հռչակել իրեն նախագահ: Եւ, ահա, երէկ յայտնի դարձաւ, որ ՀՔԾ-ն նիւթեր է նախապատրաստում 1998թ. նախագահական ընտրութիւնները կեղծելու դրուագով: Լաւ է, որ իրաւապահ համակարգն այսպէս արագ է արձագանքել Շիրխանեանի նամակին, սակայն, նկատենք, այդ կեղծիքներն արուել են 20 տարի առաջ, եւ կեղծուել են ոչ միայն 1998թ., այլեւ 2003թ., 2008թ., 2013թ. նախագահական բոլոր ընտրութիւնները, ու կեղծուել են ամենաաղաղակող ձեւերով: Այդ ամէնը եղել է բոլորիս աչքի առաջ: Վազգէն Մանուկեանն ու իր շրջապատը պնդում են՝ կեղծիքներ եղել են աւելի վաղ՝ 1996թ. ընտրութիւններին:

Որեւէ կասկած չկայ՝ 1998թ. ընտրութիւնների մասով քրէական գործ յարուցուելու դէպքում որոշ շրջանակներ կը սկսեն աղմկել, թէ այդ դէպքում պէտք է ՀՔԾ-ն ուսումնասիրութիւնները սկսի 1996թ. նախագահական ընտրութիւններից: Իհարկէ, կայ անցեալին ե՛ւ քաղաքական, ե՛ւ իրաւական գնահատական տալու անհրաժեշտութիւնը: Քաղաքական գնահատականը տուեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Մարտի 1-ի իր ուղերձով: Իրաւական գնահատական տրուել է միայն Մարտի 1-ի իրադարձութիւններին, երբ քրէական գործ յարուցուեց սահմանադրական կարգը տապալելու եւ զինուած ուժերը ներքաղաքական իրադարձութիւններում օգտագործելու վերաբերեալ: Սակայն նախագահական ընտրութիւնները կեղծելու վերաբերեալ քրէական գործի յարուցումը հազիւ թէ արդիւնաւէտ լինի: Սա թէկուզ այն պարզ պատճառով, որ 20 տարի առաջ տեղի ունեցածի ոչ բոլոր մասնակիցներն են այսօր ողջ. հազիւ թէ հնարաւոր լինի ամբողջութեամբ բացայայտել ճշմարտութիւնը: Բացի այդ, կեղծուած ընտրութիւնների մասով ամենակարեւոր գնահատականը կարող է Սահմանադրական Դատարանը տալ, մանաւանդ որ 98թ.-ին թեկնածուներից Քոչարեանի ՀՀ քաղաքացիութեան խնդրի սահմանադրականութիւնը վիճարկելի է առ այսօր:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»




ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Արթուր Վանեցեանը ո՛չ Հերքեց եւ ո՛չ ալ Հաստատեց Նայիրի Յունանեանի՝ ԱԱԾ Գործակալ Ըլլալու Պարագան

Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) պետ Արթուր Վանեցեանը «Ազատութեան» հարցին ի պատասխան ոչ հերքած, ոչ ալ հաստատած է, թէ արդեօք Հոկտեմբեր 27, 1999-ի գործով ցմահ ազատազրկման դատապարտուած Նայիրի Յունանեանը ԱԱԾ գործակալ է, թէ՝ ոչ:




ԱԱԾ պետ Արթուր Վանեցեան

Յիշեցնենք՝ օրեր առաջ Պաշտպանութեան նախկին փոխնախարար Վահան Շիրխանեանը բաց նամակ գրած էր՝ ուղղուած երկրորդ Նախագահ Ռոպերթ Քոչարեանին, ուր նշած էր, թէ 27 Հոկտեմբերէն ետք իրեն, Գագիկ Ջհանգիրեանին եւ Ռոպերթ Քոչարեանին ԱԱԾ նախկին տնօրէն Գորիկ Յակոբեանը ներկայացուցած է թղթապանակ մը՝ ԱԱԾ գործակալ Նայիրի Յունանեանի մասին, սակայն յետագային այդ թղթապանակը անհետացած է:

«Մոռցա՞ք յայտնել, թէ ո՞վ հրահանգեց ոչնչացնել այդ գործը, որը մենք չորս զոյգ աչքերով տեսանք Կարէն Տեմիրճեանի աշխատասենեակի սեղանին», - Ռոպերթ Քոչարեանին հեռակայ հարցուցած էր Վահան Շիրխանեանը:

Վահան Շիրխանեանը իր նամակին մէջ նաեւ պնդած է, որ Ռոպերթ Քոչարեանը 27 Հոկտեմբերի ոճրագործութեան օրը ուշացումով խորհրդարան գացած է, քանի որ «սպասում էիր կատարուածի արձագանգին՝ յուսալով, որ ժողովուրդը ոճրագործին կը հերոսացնի, սպասում էիր գործողութեան շարունակութեանը՝ նոր ուժերի ներգրաւումով, յոյս ունէիր, որ Վազգէնի թիմը կը գրոհի դահլիճի վրայ, կոչնչացնի տականքներին, եւ դու կ՛ունենաս թիմը ոչնչացնելու բոլոր հիմքերը: Հանդիպումդ տականքիդ հետ ուշացրիր 13 ժամ, որպէսզի նրանք արիւնաքամ լինեն, եւ եթէ նրանց մէջ լինէր վիրաւոր, փրկելու շանս չմնար: Նման հաշուարկ կարող էիր անել միայն դու», - գրած է Վահան Շիրխանեանը:

Հարցին, թէ արդեօ՞ք պաշտպանութեան նախկին փոխնախարարի նամակին մէջ 27 Հոկտեմբերի հետ կապուած նոր հանգամանքներ կան, Արթուր Վանեցեանը պատասխանած է, թէ Գլխաւոր դատախազը Շիրխանեանի յայտնի նամակը ուղարկած է ԱԱԾ եւ ՅՔԾ, կը կատարուին համապատասխան ստուգողական աշխատանքներ, եւ եթէ ըլլան փաստեր, որոնք հիմք կու տան վերաբանալ 27 Հոկտեմբերի գործը, կամ յարուցել նոր քրէական գործ, ապա այդ մէկը միանշանակ կը կատարուի:

Մինչ Յատուկ Քննչական ծառայութիւնը կը հաստատէ կամ կը հերքէ 27 Հոկտեմբերի հետ կապուած Վահան Շիրխանեանի յայտարարութիւնները, նաեւ ցմահ ազատազրկման դատապարտուած Նայիրի Յունանեանի՝ ԱԱԾ գործակալ ըլլալու փաստի հետ կապուած, Ազգային ժողովի Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի Նախագահ Անդրանիկ Քոչարեանը «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ շեշտած է՝ Վահան Շիրխանեանի կողմէ հրապարակուած հարցաշարը իր մէջ կը պարունակէ շատ կարեւոր դրոյթներ եւ լուրջ բացայայտումներու հնարաւորութիւն կու տայ:

## Օֆշորային Սքանտալի Գործով Միհրան Պօղոսեանը Հրաւիրուած է Հարցաքննութեան

Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) նախկին պատգամաւոր, Դատական ակտերու (գործերու) հարկադիր կատարման (ԴԱՀԿ) ծառայութեան նախկին ղեկավար Միհրան Պօղոսեանը հրաւիրուած է Յատուկ քննչական ծառայութիւն (ՅՔԾ) հարցաքննութեան՝ 2016-ի օֆշորային սքանտալի գործով, «Ազատութեան» հարցին ի պատասխան ըսած է ՅՔԾ խօսնակ Մարինա Օհանջանեանը:



Նախկին պատգամաւոր, Միհրան Պօղոսեան

Օհանջանեանի խօսքով, Պօղոսեանը չէ ներկայացած հարցաքննութեան՝ պատճառաբանելով, որ երկրէն դուրս է:

Պօղոսեանը առաջարկած է իրեն հարցաքննել տեսակապի միջոցով, ինչը մերժուած է, քանի որ, ըստ ՅՔԾ խօսնակի, այդպիսի ընթացակարգ օրէնքով նախատեսուած չէ:

ՅՔԾ-ն այս տարուան Յունուարին վերսկսած է այս գործի վարոյթը: Քրէական գործը յարուցուած էր ձեռնարկատիրական գործունէութեան ապօրինի մասնակցելու յատկանիշներով: Անոր համար հիմք հանդիսացած էր «Հետք»-ի հրապարակումը այն մասին, որ նախկին գլխաւոր հարկադիր կատարող Միհրան Պօղոսեանը Փանամայի մէջ գրանցած օֆշորային ընկերութիւններու միջոցով պիզնես ըրած է, պաշտօնը օգտագործած է սեփական գործի զարգացման համար՝ թաքցնելով եկամուտները:

Նախկին իշխանութիւններու օրով այս հարցով սկսած դատաքննութիւնը շատ չանցած փակուած էր, որմէ ետք Միհրան Պօղոսեան ընտրուեցաւ նաեւ պատգամաւոր:

## Կրթական Համակարգը Պէտք է Ապաքաղաքականացուի. Փաշինեան

Ամբողջ կրթական համակարգը պէտք է ապաքաղաքականացուի՝ սկսած բուհական համակարգէն, մինչեւ դպրոցական համակարգ, կառավարութեան նիստի ժամանակ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Փաշինեանը ընդգծած է՝ կրթական համակարգը կուսակցական բջիջներ դարձուցած, ուսանողներուն վրայ դուներ փակած ռէկտորները նոր Հայաստանի մէջ ընելիք չունին:

«Օրինակ՝ այն ռեքթորները, որոնք բարձրագոյն կրթական համակարգը դարձրել են կուսակցական բջիջներ, այն ռեքթորները, որոնք ուսանողների վրայ դռներ են փակել, այդ ռեքթորները նոր Հայաստանում անելիք չունեն: Սա իմ շատ յստակ դիրքորոշումն է, եւ մենք չպէտք է վախենանք այդ դիրքորոշումն ասել: Թող դռներից ճանկռեն, իրենց սեղաններից ու բազկաթոռներից ճանկռեն, բայց իրենք նոր Հայաստանում անելիք չունեն, թող գնան իրենց համար գտնեն այլ աշխատանք, այլ անելիք, այլ առաքելութիւն: Չի կարող Հայաստանի Հանրապետութիւնում ուսանողի վրայ դուռ փակած ռեքթորը, կամ կրթական գործընթացը կուսակցականացրած ռեքթորը եւ ղեկավարութիւնը շարունակի Հայաստանում աշխատել: Չի կարող էդպիսի բան լինել, յեղափոխութիւնը սկսել է այդ պահանջով եւ աւարտուելու է այս պահանջով: Չկայ տարբերակ, սա քաղաքական որոշում է եւ մի շաբաթ էս կողմ, մի շաբաթ էն կողմ, կիրագործուի, որեւէ մէկը յանկարծ չմտածի, որ մենք կը մոռանանք, թէ ինչի համար ենք հաւաքուել, յոյս չունենան», - ըսած է վարչապետը:

## 2019-ի Փետրուարին Տնտեսական Աշխոյժութիւնը կազմած է 7,6 տոկոս

Այս տարուան փետրուարին Հայաստանի մէջ տնտեսական աշխոյժութեան ցուցանիշը կազմած է 7,6 տոկոս, մինչդեռ Յունուարին այն 6 տոկոս էր: Ըստ այդմ, այս տարուան 2 ամիսներու կտրուածքով 2018-ի Յունուար-Փետրուարի համեմատ տնտեսական աշխոյժութեան ցուցանիշը կազմած է 6,5 տոկոս:

ՀՀ ազգային վիճակագրական կոմիտէի տուեալներով, շինարարութեան ծաւալը այս տարուան փետրուարին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածներու համեմատ աճած է 21,3 տոկոսով, իսկ Յունուար- փետրուարին՝ 21,6 տոկոսով:

Արդիւնաբերական արտադրանքի ծաւալը 2019-ի փետրուարին նախորդ տարուան փետրուարի նկատմամբ աճած է 4,7 %-ով, իսկ առաջին երկու ամիսներու կտրուածքով՝ 1,9 %-ով: 19,3 տոկոսով փետրուարին աճած է ծառայութիւններու ծաւալը (առանց առեւտուրի), իսկ առեւտուրի շրջանառութիւնը աճած է 8,3 տոկոսով:

Մինչդեռ, ելեկտրականութեան արտադրութիւնը կտրուկ նուազած է. այս տարուան փետրուարին 2018-ի փետրուարի նկատմամբ 14,5 %-ով, իսկ Յունուար-Փետրուարին՝ 21 %-ով:

2019-ի փետրուարին նախորդ տարուան փետրուարի համեմատ 1,9 % գնաճ գրանցուած է: Անոր զուգահեռ միջին ամսական անուանական աշխատավարձը փետրուարին 2018-ի փետրուարի նկատմամբ աճած է 5,3 %-ով, պետականը՝ 2,6, ոչ պետական՝ 5,4 %-ով:

Արտաքին առեւտրաշրջանառութիւնը փետրուարին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ աճած է 31,3 %-ով՝ կազմելով 568,2 միլիոն տոլար կամ 277,4 միլիառ դրամ: Միայն վերջին մէկ ամսուան՝ 2019 -ի Յունուարի համեմատ փետրուարին արտաքին առեւտրաշրջանառութիւնը աճած է 28 %:

Ներմուծման ծաւալները գրեթէ 2 անգամ կը գերազանցեն արտահանման ծաւալները: Արտահանման ծաւալը 2019-ի փետրուարին կազմած է 192,6 միլիոն տոլար կամ 94,0 միլիառ դրամ, իսկ ներմուծումը՝ 375,6 միլիոն տոլար կամ 183,4 միլիառ դրամ:

Յատկանշական է, որ արտահանումը նուազած է 8,2 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 2,5 տոկոսով:

## Ապրիլի Վերջին Շաբաթ Օրը Պիտի Նշուի Որպէս Քաղաքացիի Օր

ՀՀ կառավարութեան որոշմամբ, Հայաստանի մէջ յետայսու Ապրիլի վերջին Շաբաթ օրը պիտի նշուի որպէս «Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիի օր»:

«Նախագծի ընդունման անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է 2018 թուականի Ապրիլին Հայաստանի Հանրապետութիւնում տեղի ունեցած աննախադէպ քաղաքական իրավիճակով: Ստեղծուած բազմաթիւ ընկերային-տնտեսական, իրաւական եւ քաղաքական բնոյթի խնդիրների շուտափոյթ լուծման անհրաժեշտութեամբ օրեր շարունակ հազարաւոր քաղաքացիներ ցոյցերի եւ երթերի ձեւով իրենց պահանջներն էին ներկայացնում իշխանութիւններին: Համաժողովրդական շարժման արդիւնքներից մէկը եղաւ վարչապետի հրաժարականը եւ համաժողովրդական շարժման յաղթանակը», - նշուած է գործադիրի որոշման հիմնաւորման մէջ, ուր այնուհետեւ կը կարդանք. - «Առաջարկուող կարգաւորումը հնարաւորութիւն կ՛ընձեռնի հայոց պատմութեան մէջ նոր էջ բացած Հայաստանի Հանրապետութեան հազարաւոր քաղաքացիների կողմից իրականացուած համաժողովրդական շարժման առիթով սահմանել Հայաստանի Հանրապետութեան քաղաքացու օր»:

Կառավարութեան որոշման ֆէյսպուքեան իր էջին վրայ անդրադարձած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ գրելով, որ «Սա ոչ թէ նոր կառավարութեան, այլ ժողովրդի ու ժողովրդավարութեան յաղթանակի օրը պիտի լինի եւ պիտի դառնայ իրօք ժողովրդական տօն, այնպիսի տօն, ինչպիսին էր բուն յեղափոխութիւնը»

# ԼՈՒՐԵՐ

## Անընդունելի է Ցեղասպանութեան Շահարկումը՝ Իսրայէլ-Թուրքիա Յարաբերութիւններու Լարուածութեան Ֆոնին. ԱԳՆ Խօսնակ

*«Մեզ համար անընդունելի է ցեղասպանութեան շահարկումը Թուրքիայի հետ յարաբերութիւնների որոշակի լարուածութեան ֆոնին: Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումն առաջին հերթին բարոյական հարթութեան հարց է»,-այս մասին ըսած է ՀՀ Արտաքին գործոց նախարարութեան մամուլի խօսնակ Աննա Նաղդալեանը՝ անդրադառնալով Էրտողան-Նաթանիահու բանավէճին մէջ ցեղասպանութեան յիշատակման:*

*Խօսելով ՀՀ-Իսրայէլ յարաբերութիւններու ու դեսպանատան բացման մասին, նշած է, որ ՀՀ դիւանագիտական ներկայացուցչութիւններու ընդլայնումը միշտ ալ օրակարգի վրայ է:*

*Պատասխանելով Ալիեւ-Փաշինեան յառաջիկայ հանդիպման օրակարգի վերաբերեալ հարցին՝ Աննա Նաղդալեանը նշած է, որ այդ մասին արդէն յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը, այն հիմնական նուիրուած պիտի ըլլայ այն բանին, թէ ինչպէս կը մեկնաբանուին փաստաթուղթին մէջ ամրագրուած սկզբունքներն ու դրոյթները, որոնք վկայակոչուած են նաեւ Մինսքի խումբի համանախագահներու կողմէ:*

*Ատրպէյճանի լայնածաւալ զօրավարժութիւններու իրականացման մասին հարցին ի պատասխան նշած է, որ առանց ծանուցման յարձակողական բնոյթի զօրավարժութիւնները ԵԱՀԿ գործիքակազմով նախատեսուած միջազգային պարտաւորութիւններու խախտում է եւ այն որեւէ ձեւ չի նպաստեր տարածաշրջանին մէջ վստահութեան մթնոլորտի ամրապնդման: Այս հարցը ԵԱՀԿ-ի մէջ բարձրացուցած է նաեւ ՀՀ ներկայացուցիչը:*

*Անդրադառնալով տարածուած տեղեկութեան, թէ Ատրպէյճանը Հայաստանի հետ սահմանին նոր զօրամաս տեղակայած է, Նաղդալեանը նշած է, որ ՀՀ-ն ու Արցախը ունին վճռականութիւն եւ կարողութիւն՝ պաշտպանուելու եւ հակահարուած հասցնելու, ինչով ալ պայմանաւորուած է նաեւ ՀՀ յանձնառութիւնը՝ քայլեր ձեռնարկելու խաղաղութեան հաստատման ուղղութեամբ:*



**Արտաքին գործոց նախարարութեան մամուլի խօսնակ Աննա Նաղդալեան**

*Մարտ 13-ին, երկարատեւ ընդմիջումէ ետք, արցախա-ատրպէյճանական շփման գիծին վրայ ատրպէյճանական զինուժը կիրառած է ականանետ: Նաղդալեանի խօսքերով, այս քայլը եւս չի նպաստեր ժողովուրդներու խաղաղութեան նախապատրաստման, վստահութեան ամրապնդման:*

*«Այս առումով մենք յոյս ենք յայտնում, որ կողմերը յանձնառու կը լինեն այն պայմանաւորուածութեանը, որը ձեռք է բերուել Տուշանպէի հանդիպման ժամանակ»,- ըսած է Նաղդալեանը:*

*Պոլսոյ մէջ նախորդ շաբաթ տեղի ունեցած Պոլսոյ պատրիարք Մեսրոպ Մութաֆեանի յուղարկաւորութեան ՀՀ-էն ներկայացուցիչներու բացակայութեան հարցի հետ կապուած Նաղդալեանը ըսած է, որ Հայաստանի անունէն մասնակցած է Սեւծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան մէջ ՀՀ մշտական ներկայացուցիչը, Պատրիարքարան փոխանցուած են վարչապետի ու նախագահի ցաւակցական հեռագրերը:*

## Շատ Կը Խօսուի Գումարի Բացակայութեան Մասին, Սակայն Խնդիրը Այլ Հարթութեան Վրայ է. Նիկոլ Փաշինեան




Նիկոլ Փաշինեան Գիտութիւններու ազգային ակադեմիայէն ներս տեղի ունեցած տարեկան ժողովի ժամանակ

*ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը իւրաքանչիւր ծրագրի վրայ գումար ծախսելու ժամանակ կարեւոր կը համարէ հարցադրումը՝ ատոր դիմաց պետութիւնը, ժողովուրդը ինչ պիտի ստանայ: Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնբփրես»-ը, Գիտութիւններու ազգային ակադեմիայէն ներս տեղի ունեցած տարեկան ժողովի ժամանակ Նիկոլ Փաշինեանը նշած է, որ շատ կը խօսուի գումարի բացակայութեան մասին, սակայն խնդիրը այլ հարթութեան վրայ է:*

*Անոր խօսքով՝ ռազմաարդիւնաբերական համալիրը այն ոլորտներէն է, որ յստակ խնդիրներ կը դնէ գիտութեան առջեւ, բայց վերջին տարիներու վիճակագրութեան համաձայն՝ պիւտճէն ռազմաարդիւնաբերական համալիրի գիտահետազօտական մասով թերակատարուած է: «Այսինքն՝ պետութիւնը յստակ խնդիր է դնում գիտութեան առաջ, ֆինանսաւորումը տալիս է եւ պարզւում է, որ գիտութիւնը այդ խնդիրը առնուազն պատշաճ ժամանակում չի լուծում եւ այդ ֆինանսաւորումն էլ չի ստանում: Սա հենց յստակ օրինակն է, երբ խօսքը բացարձակապէս փողի բացակայութեան մէջ չէ: Փողը կայ, տրուած է, բայց այդ փողը չի ծախսւում, որովհետեւ պարզւում է, որ մենք ունենք մասնագիտական ներուժի խնդիր եւ այլ բազմաթիւ խնդիրներ»,- ըսած է Փաշինեանը:*

*Վարչապետը նշած է, որ 2018 թուականի մայիսէն Հայաստանի Հանրապետութեան վարչապետ ընտրուելէն ի վեր չէ եղած մէկ դէպք ինչ-որ ծրագիր մերժուի միայն այն պատճառով, որ գումար չկայ:*

*«Եթէ պարզուի, որ որեւէ ծրագիր Հայաստանի Հանրապետութեանը պէտք է, գումար կը գտնուի: Մեր աշխատանքը, այդ թւում գիտութեան ոլորտում, պէտք է միտուած լինի յստակ գործնական խնդիրների լուծմանը, այն խնդիրների լուծմանը, որոնք ոչ միայն գումար են ծախսում, այլեւ գումար են բերում, եթէ ոչ կարճաժամկէտ, ապա երկարաժամկէտ կտրուածքով: Եթէ մենք փողը ծախսում ենք առանց իմանալու, թէ ինչ ենք ստանալու դրա դիմաց  հնարաւոր է այսօր չենք ստանալու, հնարաւոր է 50 տարի յետոյ ենք ստանալու, բայց չի կարող լինել այնպէս, որ հարց չտանք՝ փողը ծախսում ենք, իսկ դրա դիմաց մեր երկիրը, մեր պետութիւնը, մեր ժողովուրդը ինչ է ստանալու: Սա այսօր մեր գիտութեան ամենամեծ խնդիրն է»,- եզրափակած է Փաշինեանը:*

## Ալիեւ. Ատրպէյճանը Դէմ է Բանակցային Ձեւաչափի Փոփոխութեան

*Ղարաբաղեան խնդիրը կրնայ կարգաւորուիլ միայն Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան շրջանակէն մէջ, Նովրուզի առթիւ հրապարակած շնորհաւորական ուղերձին մէջ յայտարարած է Իլհամ Ալիեւը: Ատրպէյճանի նախագահը վերստին նշած է՝ Պաքուն դէմ է բանակցային ձեւաչափի փոփոխութեան, եւ պնդած է, թէ այս դիրքորոշումը կը պաշտպանեն նաեւ խնդրով զբաղուող միջնորդները:*

*«Հայկական կողմը հարց բարձրացուցած է բանակցային ձեւաչափի փոփոխութեան մասին, Ատրպէյճանը, բնականաբար, դէմ է անոր: Միաժամանակ, Մինսքի խումբի համանախագահները՝ Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Ռուսաստանի ներկայացուցիչները, հանդէս գալով կարեւոր յայտարարութեամբ, ընդգծած են, որ ձեւաչափը պէտք է մնայ անփոփոխ: Նոյնաբովանդակ յայտարարութիւններով հանդէս եկած են նաեւ Եւրոմիութեան բարձրաստիճան պաշտօնեաները: Սա միանշանակ լուրջ ազդակ է Հայաստանի համար եւ կը վկայէ, որ Ատրպէյճանի դիրքորոշումը երթալով աւելի մեծ աջակցութիւն կը ստանայ», - ըսած է Ալիեւը:*

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարած էր՝ Ղարաբաղը բանակցային սեղան վերադարձնելու առաջարկը ոչ թէ ձեւաչափի փոփոխութեան, այլ բանակցային ձեւաչափի վերականգնման առաջարկ է, փաստելով, որ 1994 թուականի հրադադարի համաձայնագիրը ստորագրուած է հակամարտող երեք կողմերու՝ Հայաստանի, Ղարաբաղի եւ Ատրպէյճանի կողմէն, յետոյ ալ այդ ձեւաչափը ամրագրուած է միջազգային այլ փաստաթուղթերու մէջ:*

*Ատրպէյճանի նախագահը հայկական կողմի այս փաստարկներուն որեւէ կերպ չէ արձագանգած: Իլհամ Ալիեւը միայն պնդած է, որ «Ղարաբաղը Ատրպէյճանի պատմական տարածքն է, եւ խնդիրը պէտք է կարգաւորուի Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան շրջանակներէն ներս»:*

## Հայաստանը 13 Կէտով Բարելաւած է Դիրքերը Աշխարհի Ամենաերջանիկ Երկիրներու Ցանկին վրայ

*ՄԱԿ-ը հրապարակած է «Երջանկութեան համաշխարհային զեկոյց»-ը, ուր Հայաստան անցեալ տարուան համեմատ 13 կէտով բարելաւած է դիրքերը՝ յայտնուելով 116-րդ տեղը: Հայաստանը ստացած է 4,559 միաւոր: «ԱրմէնբՓրես»-ի հաղորդմամբ՝ նախորդ տարուան զեկոյցին մէջ Հայաստան ամէնէն երջանիկ երկիրներու ցանկին մէջ 129-րդն էր:*



*Աշխարհի ամէնէն երջանիկ երկիրներու ցանկին մէջ առաջինը Ֆինլանտան է՝ 7,769 միաւորով: Ֆինլանտային կը յաջորդեն Դանիան (7,600 միաւոր), Նորվեկիան ( 7,554 միաւոր ), Իսլանտան ( 7,494 միաւոր), Հոլանտան (7,448 միաւոր): Լաւագոյն տասնեակին մէջ են նաեւ Զուիցերիան, Շուէտը, Նոր Զելանտան, Գանատան, Աւստրիան:*

*Ատրպէյճան 5,208 միաւորով կը գրաւէ 90-րդ տեղը, Վրաստանը 4,519 միաւորով 119-րդն է, Թուրքիան 5,373 միաւորով 79-րդ, իսկ Իրանը՝ 4548 միաւորով 117-րդն է:*

## «Տարածքներու Յանձնումը Արցախի եւ Հայաստանի Անվտանգութեան Ոչնչացում է». Մասիս Մայիլեան



Արցախի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեան

*Արցախի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեան «Ռեգնում» գործակալութեան գլխաւոր խմբագրին տուած հարցազրոյցին մէջ խօսած է Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացի, Արցախի ունեցած մտահոգութիւններու մասին:*

*Արցախի արտաքին գործոց նախարարը, անդրադառնալով իշխանափոխութենէն ետք Երեւանի եւ Պաքուի միջեւ հանդիպումներու աշխուժացման, նշած է, որ կողմերը կը ցանկան ծանօթանալ ատրպէյճանա-ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման մօտեցումներուն:*

*Ինչ կը վերաբերի Արցախը բանակցութիւններուն մէջ ներգրաւելու հարցին, Մասիս Մայիլեանը յստակեցուցած է բանակցութիւններու եռակողմ ձեւաչափի վերականգնման վերաբերեալ Երեւանի ու Ստեփանակերտի մօտեցումները նոյնն են:*

*«Մենք խօսում ենք Արցախի՝ բանակցային սեղան վերադառնալու մասին՝ ելնելով բանակցային գործընթացում իրական առաջընթացի հասնելու անհրաժեշտութիւնից: Եռակողմ բանակցութիւնների վերականգնման համար առկայ են անհրաժեշտ բոլոր նախադրեալները»,-ըսած է ան:*

*ԱԳ նախարարը ընդգծած է, ինչպէս ցոյց տուած է ժամանակը այդ ձեւաչափը ամենաարդիւնաւէտը եղած է: Այդ ձեւաչափով ձեռք բերուած է միակ շօշափելի արդիւնքը՝ հրադադարի վերաբերեալ, որ կնքուած է 1994-ի 12 Մայիսին, Ռուսաստանի միջնորդութեամբ:*

*Տարածքներ յանձնելու վերաբերեալ ալ Արցախի արտաքին գերատեսչութեան ղեկավարը ընդգծած է, որ այդ ուղղակիօրէն կը ոչնչացնէ ոչ միայն Արցախի, այլեւ Հայաստանի անվտանգութեան համակարգը, ինչը վտանգի տակ կը դնէ պատմական հայրենիքի մէջ բնիկ ժողովուրդի գոյութիւնը:*

*«Ատրպէյճանի ղեկավարի յայտարարութիւններից կարելի է հետեւութիւն անել, որ պաշտօնական Պաքուի ռազմավարական նպատակը ոչ միայն Արցախի գրաւումն է, այլեւ Սիւնիքի մարզի, նոյնիսկ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի: Մենք պէտք է լրջօրէն վերաբերուենք Ատրպէյճանի նախագահի ու Զինուած ուժերու գերագոյն հրամանատարութեան յայտարարութիւններին եւ չհեշտացնենք իրենց ռազմավարական նպատակին հասնելու ճանապարհը: Ընդհակառակը, պէտք է շարունակել ձեռնարկել անհրաժեշտ ռազմական ու քաղաքական, դիւանագիտական քայլեր՝ զսպելու այդ երկրի ղեկավարութեան ակրեսիւութիւնն ու զաւթողական մտադրութիւնները»,-ըսած է ան:*

## ԵԽԽՎ-ի Զեկուցողները Արձանագրած Են

Շարունակուած էջ 1-էն

*ընդունման, փտածութեան եւ խտրականութեան դէմ պայքարի հիմնարկներու ստեղծման»,- ըսած են համազեկուցողները:*

*Կը նշուի, որ համազեկուցողները ուշադրութեամբ պիտի հետեւին վերը նշուած բարեփոխումներու իրականացման ընթացքին: Անոնք Հայաստանի իշխանութիւններուն կոչ ըրած են օգտագործել հանրային լայն աջակցութիւնը, որպէսզի աշխուժացնեն ջանքերը ընկերային բարեփոխումներ իրականացնելու հարցի վերաբերեալ՝ ներառեալ բոլոր հայերու համար ընկերային ծառայութիւններու բարելաւումը:*

*Համազեկուցողները բարձր գնահատած են այն հաստնութիւնը, որ դրսեւորած են Հայաստանի քաղաքական ուժերն ու հայ ժողովուրդը խաղաղ յեղափոխութեան ընթացքը կառավարելու եւ անոր յաջորդած քաղաքական անցումը իրականացնելու հարցի վերաբերեալ:*

*«Այդ անցումը աւարտած է 2018 թուականի Դեկտեմբերին կայացած ընտրութիւններով, որոնք բոլոր միջազգային դիտորդները եւ Հայաստանի քաղաքական գործիչներու ճնշող մեծամասնութիւնը, որուն հետ մենք հանդիպած ենք, համարած են արդար»,- նշած են անոնք:*

*Անոնք աւելցուցած են, որ Հայաստանի մէջ իրականացուելիք փոփոխութիւնները խոր են: «Եւրոպայի խորհուրդը եւ անոր խորհրդարանական վեհաժողովը հայ ժողովուրդի եւ անոր ներկայացուցիչներու տրամադրութեան տակ են՝ այդ փոփոխութիւնները նախապատրաստելու եւ կեանքի կոչելու հարցով»,- եզրափակած են համազեկուցողները:*

## Հայաստանի ու Ատրպէյճանի Միջեւ Վերջապէս Խաղաղութեան Հնարաւորութիւն Ստեղծուած է. The Washington Post

*Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ վերջապէս խաղաղութեան հնարաւորութիւն ստեղծուած է, կը գրէ «The Washington Post»-ի վերլուծականը, փաստելով՝ տասնամեակներ շարունակուած անարդիւնք բանակցութիւններէն ետք՝ հիմա էական փոփոխութիւն արձանագրուած է, որ կրնայ տանիլ դէպի կարգաւորում:*

*«Մէկ տարի առաջ Հայաստանի մէջ ցուցարարները պաշտօնանկ ըրին վարչապետը՝ ճանապարհ հարթելով Դեկտեմբերին կայացած ազատ ընտրութիւններուն: Հայաստանի ժողովրդավարական առաջընթացը կրնայ հակամարտութեան երկու կողմերուն մօտ ալ փոխել առաջնորդներու յաւակնութիւնները», - պնդած է վերլուծականը՝ մանրամասնելով. - «Գիտական վերջին հետազօտութիւնները կը փաստեն, որ երբ տարածաշրջանը առաւել ժողովրդավար կը դառնայ, հակամարտութեան կարգաւորման հեռանկարը կ՛աճի, թշնամանքի միտումը՝ կը նուազի: Ժողովրդավար հասարակութիւնները հարեւաններուն հետ խաղաղ շփումներու կողմնակից են, կը ձգտին առաջ տանիլ համագործակցութիւնն ու փոխզիջումները, ինչը կը թուլացնէ աջակցութիւնը՝ խնդրի ռազմական կարգաւորման»:*

*Վերլուծականը միաժամանակ փաստած է՝ տարածաշրջանի ժողովրդավարացումը անհրաժեշտ, բայց ոչ բաւարար պայման է: «Հետազօտութիւնները նաեւ ցոյց կու տան, որ համաձայնութեան աւելի հաւանական է հասնիլ, եթէ բոլոր կողմերը ներգրաւուած ըլլան բանակցութիւններուն: Հիմա հրատապը հակամարտութենէն տուժած բոլոր խումբերու՝ շփման գիծի մօտ ապրող գիւղական համայնքներու, կիներու, փախստականներու ու Լեռնային Ղարաբաղի ներգրաւումն է կարգաւորման գործընթացին մէջ», - կը պնդէ «The Washington Post»-ի յօդուածը՝ փաստելով, որ բոլոր այս խումբերը տարիներ շարունակ դուրս թողուած են բանակցութիւններէն:*

*«Անշուշտ, երբ զինուորականները կը շարունակեն վերահսկել սահմանները եւ տարածաշրջանին մէջ անվտանգութեան երաշխիքներ չկան, կողմերու միջեւ շփումներու կոչը անիրատեսական կրնայ թուալ», - կը փաստէ «The Washington Post»-ի վերլուծութիւնը՝ ներկայացնելով, թէ ինչ կարելի է ընել այդ ուղղութեամբ յաջողութեան հասնելու համար. - «Հայաստանը, Ատրպէյճանը, Վրաստանն ու Լեռնային Ղարաբաղը, հասարակական կազմակերպութիւններն ու քաղաքացիական խումբերը պէտք է ներգրաւուին տարածաշրջանին մէջ առաւել ընդարձակ անվտանգութիւն ապահովող համաձայնագրերու ու հիմնարկներու կայացման մէջ: Անոնք կրնան ըլլալ տարածաշրջանով մէկ գործող կանոններ, պայմանագրեր ու դաշնագրեր, որոնք թոյլ կու տան համայնքներու առաջնորդներուն համագործակցիլ իրար հետ՝ ընդհանուր խնդիրներու, օրինակ՝ թմրամիջոցներու ապօրինի շրջանառութեան, գիւղական աղքատութեան դէմ պայքարի, առեւտրային ուղիներու վերականգնման, ջուրի փոխանակման կամ մշակութային ժառանգութեան պահպանման շուրջ»:*

*«Կողմերու միջեւ նման կապերու ստեղծումը կ՛օգնէ դիւանագիտութեան կարճատեւ փոխզիջումներու փոխարէն կեդրոնանալ առաւել տեւական, ողջ տարածաշրջանին վերաբերող հանապազօրեայ խնդիրներու վրայ: Նման բազմակողմ երկխօսութիւնը կրնայ նաեւ նուազեցնել թշնամութիւնը Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ եւ հնարաւորութիւն տալ, որ միջազգային միջնորդներն ու երկու կողմերու առաջնորդները աւելի նպաստաւոր պայմաններու մէջ դիմեն հանրութեան՝ փոխզիջման հարցով», -ըսուած է յօդուածին մէջ:*

*Խօսելով հակամարտող բոլոր կողմերու ներգրաւուածութեամբ բանակցութիւնները առաջ տանելու առաւելութիւններու մասին, «The Washington Post»-ի վերլուծականը կը փաստէ. - «Եթէ այս քայլերը չձեռնարկուին, սահմանագիծի երկու կողմերուն միջեւ շփումները պիտի մնան հատուկենտ, խաղաղութեան շուրջ համաձայնագրերն ալ կարճատեւ կեանք պիտի ունենան»:*

*Յօդուածը հրապարակուած է «The Washington Post»-ի վերլուծական բաժնին մէջ, այն հեղինակած է Մասաչուսեթսի Սթոնհիլ քոլեճի քաղաքագիտութեան ու միջազգային յարաբերութիւններու գծով փրոֆեսոր, հակամարտութիւններու կարգաւորման մասին շարք մը աշխատութիւններու հեղինակ Աննա Օհանեանը:*

## Կլատիս Պերեճիքլեանը Նահանգային Վարչապետ

Շարունակուած էջ 1-էն

*առաւելութեան հասնելով իր հիմնական մրցակցին՝ Աշխատաւորական կուսակցութեան:*

*Նոր Հարաւային Ուէյլզի մայրաքաղաքն է Սիտնի քաղաքը, ուր կ՛ապրին բաւական թիւով հայեր:*

*«Ես մեծապէս հպարտ եմ այն վայրի համար, ուր մենք կ՛ապրինք: Եւ ամենակարեւորը ինծի համար այն է, որ անկախ անկէ, թէ ինչ ծագում ունիս, ուր կ՛ապրիս ու ինչ պայմաններու մէջ ես, այս նահանգին մէջ իւրաքանչիւրը ունի հնարաւորութիւն ըլլալու լաւագոյնը»,- ըսած է Պերեճիքլեան յաղթանակէն ետք իր կողմնակիցներուն առջեւ ունեցած ելոյթի ժամանակ:*

*Ընդդիմութեան առաջնորդ, Աշխատաւորական կուսակցութեան ղեկավար Մայքլ Տելին թէեւ նշած է, որ ընտրութիւններու յայտարարուած արդիւնքները դեռ վերջնական չեն, այդուհանդերձ զանգահարած եւ շնորհաւորած է Կլատիս Պերեճիքլեանը*

*Նշենք, որ Կլատիս Պերեճիքլեանը 2017 թուականէն կը զբաղեցնէր Նոր Հարաւային Ուէյլզի վարչապետի պաշտօնը: Այդ ժամանակ Լիպերալ կուսակցութեան առաջնորդ Մայք Պայրտը հրաժարական տուած էր, եւ կուսակցութեան անդամները միաձայն նոր առաջնորդի եւ նահանգի ղեկավարի պաշտօնին ընտրած էին Պերեճիքլեանը:*

# Վահան Շիրխանեանի Սենսացիոն Նամակը Ռ. Քոչարեանին



ՀՀ պաշտպանութեան նախկին փոխնախարար Վահան Շիրխանեանը «Առաջին լրատուական»-ի հրապարակմանն է տրամադրել ներքոյ գրեալ բաց նամակը՝ ուղղուած ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանին.

*«Ռոբերտ, քանի որ դու ոչ մի կերպ չես ուզում տեսնել, հասկանալ, ըմբռնել քո իրական տեղը, արժէքն ու դերակատարումը հայաստանեան իրողութիւնում, ստերի հաւաքածուն գիրք ես կոչում, ուզում եմ յիշողութիւնդ թարմացնել մի քանի դրուագներով.*

*1. 1992 թիւ, Յունիս ամիս: Ստեփանակերտի հրապարակը եւ մարզադաշտը լցուած էր 35000 փախստականներով Շահումեանից եւ Մարտակերտից: Ես եկայ քեզ մօտ եւ ասացի, որ նրանց բոլորին պէտք է տեղաւորել Ստեփանակերտի շրջակայքում ազատագրուած հինգ գիւղերում, Շուշիում եւ Խոջալուում, իսկ ես կը պայմանաւորուեմ Հայաստանի կառավարութեան հետ, որ ամէն ընտանիքին օգնութիւն տրուի, քանի որ երկրաշարժից, ատրպէյճանահայ փախստականներից յետոյ Հայաստանում ոչ մի ազատ հանրակացարան, հիւրանոց, դպրոց չկար: Ես մեկնեցի Լաչին, որտեղ հաւաքուած էր փախստականների եւս մէկ խումբ, գիշերեցի այնտեղ, իսկ առաւօտեան վերադարձայ Ստեփանակերտ: Լիսագուից նոր էի անցել, տեսայ՝ ճանապարհը լցուած է փախստականներով, բոպիկ, ցնցոտիաւոր ծեր ու մանուկներով, սոված ու ծարաւ:*

*Հարցիս, թէ ո՞ւր էք գնում, պատասխանեցին՝ Քոչարեանը ասաց, որ գնացէք Հայաստան, Ղարաբաղում տեղ չկայ: Տեսարանը ահաւոր էր: Ես հասայ Ստեփանակերտ, մտայ քեզ մօտ եւ ասացի՝ «դու անասուն ես»: Բռունցքներդ սեղանին, գլուխդ կախ՝ ոչինչ չկարողացար պատասխանել: Արդիւնքում Արցախը զրկուեց 35000 բնակչից, եւ Հայաստանի փախստականների թիւը համալրուեց նոյնքանով: Նրանց մեծամասնութիւնը յետագայում արտագաղթեց Հայաստանից: Գուցէ դա քո անթաքոյց ատելութեան դրսեւորո՞ւմն էր դաշտային արցախցիների նկատմամբ: Ես այդ օրը համոզուեցի, որ մարդը քեզ համար արժէք չի ներկայացնում, որ դու զուրկ ես պետական մտածելակերպից:*

*Դէ, իհարկէ, Ստեփանակերտը, Լաչինը, Վանքը, Մարտունին, Սարսանգը, Քարինտակը, Ֆիզուլին, Ջաբրայիլը, Կուբաթլին եւ այլ բնակավայրերը, ուր ես եղել եմ հարիւրաւոր անգամ, սահմանից «հեռու» են 50-100 կմ, ինչպէս դու ես գրում քո «եւեւեւեւեւեւեւեւ»-ում: Պարզւում է՝ դու Արցախի տարածքի աշխարհագրութիւնից պատկերացում չունես:*

*Միտումնաւոր դեռեւս բաց եմ թողնում մինչեւ 98-ը եղած մանրուքները, չնայած դրանք բոլորովին էլ մանրուքներ չեն:*

*2. 1998 թ. 30 Մարտի, նախագահական ընտրութիւնների 2-րդ փուլ: Բացառապէս Վազգէն Սարգսեանի խօսքին տրուած 27 տոկոս քուէն դարձրիր քեզ համար 59% եւ քեզ հռչակեցիր ՀՀ նախագահ: Իսկ 73 % ստացած Կարէն Դէմիրճեանին «մեծահոգաբար» տուեցիր 41%՝ խոստանալով նաեւ վարչապետի պաշտօնը՝ Վազգէնի պահանջով: Եւ, իհարկէ, խաբեցիր, ինչպէս միշտ:*

*3. 1998 թ. Դեկտեմբերի 10. Վահրամ Խորխոռունու սպանութիւնը հնարաւոր դարձրեց Հոկտեմբերի 27-ի ազգադաւ ոճրագործութեան իրագործումը: Ի դէպ, դու քո այս բազմաչարչար գործում յիշատակե՞լ ես քո եւ ԼՂՀ ՆԳ փոխնախարար, Հայաստանից գործուղուած Վահրամ Խորխոռունու առաւել քան լարուած յարաբերութիւնների մասին: Եթէ մոռացել ես, ես կարող եմ յիշեցնել:*

*4. Քո՝ նախագահ ինքնահռչակուելուց երկու ամիս անց Վազգէնը ինձ հրաւիրեց իր մօտ: Նա առաւել քան մտահոգ էր: Ասաց՝ Շիրխանեան, էս ի՞նչ արինք: Էս մարդը հայ չի, նա չի սիրում հային, Հայաստանը: Զրոյցի վերջում նա յանձնարարեց ընտրել ընդունելի գաղափարախօսութեամբ կուսակցութիւն եւ սկսել այն ստեղծելու աշխատանքը: Նա որոշել էր Հայաստանը քեզանից ազատել բաց ու ազնիւ քաղաքական պայքարի միջոցով, ոչ թէ տեռորով:*

*4. Խաբելով Կարէն Դեմիրճեանին՝ Վազգէնին դրդեցիր վերջինիս հետ դաշինքի: Դու սարսափում էիր այդ դաշինքից, որովհետեւ երկուսից էլ ահաւոր վախենում էիր: Քո վախկոտութիւնը, թէ գռողութիւնը թոյլ չտուեցին, որ մասնակցես «Միասնութիւն» դաշինքի՝ Օպերայում անցկացուող հիմնադիր համագումարին, ինչը Վազգէնը եւ Դեմիրճեանն ընդունեցին քմծիծաղով:*

*5. 1999թ. ՊՆ գարնանային կոլեգիայի նիւթերը Վազգէնը չուզեց ներկայացնել քեզ անձամբ, որովհետեւ չէր ուզում երեսդ տեսնել, եւ ուղարկեց ինձ: Դու կատաղած էիր, եկար նիստի, ու քեզ ոչ ոք չդիմաւորեց ՊՆ-ում: Նման բան երբեք չէր եղել, որ Գերագոյն գլխաւոր հրամանատարին նախարարը անձամբ չդիմաւորեր: Բայց դու քո գռոզ եւ կամակոր բնաւորութեամբ շարունակում էիր քեզ երեւակայել Գերագոյն գլխաւոր հրամանատար:*

*6. 1999 թ. Ապրիլին Վազգէնը կտրականապէս հրաժարուեց քեզ հետ մեկնել Ուաշինկթոն՝ ՆԱՏՕ-ի 50-ամեակի վեհաժողովին մասնակցելու համար, եւ ստիպեց ինձ գնալ: Հայաստանի եւ Ատրպէյճանի ինքնաթիռները ժամանեցին Ուաշինկթոն նոյն օրը: Մեզ դիմաւորեց ինքնաթափ աւտոբուսը, տեղափոխեց սրահ, որտեղ իմ, քո եւ Վարդան Օսկանեանի իրերը մանրակրկիտ ստուգեցին, թիկնապահներիդ զինաթափեցին: Յաջորդ օրը «Ուաշինկթոն Փոսթ»-ում ես տեսայ, որ Ալիեւին դիմաւորել է անձամբ Օլբրայթը՝ ինքնաթիռի մօտ, կարմիր գորգի վրայ: Ես այդ թերթով մտայ քո սենեակ եւ պահանջեցի վերադառնալ: Հայութեանը եւ Հայաստանի պետութեանը հասցուած էր խոր վիրաւորանք, բայց դու սկսեցիր ինձ համոզել հակառակում՝ ասելով, որ ամբողջ աշխարհն է գալիս, ո՞ր մէկին դիմաւորեն: Դու եւս մէկ անգամ ապացուցեցիր, որ Հայաստանի եւ հայութեան հանդէպ դու պատասխանատուութեան, պատուախնդրութեան, յարգանքի որեւէ զգացմունք չունես: Հետաքրքիր է՝ այս դրուագը քո «գրքում» կա՞յ, նաեւ այն, թէ ինչպէս խայտառակուեցիր Ապրիլի 24-ին հայութեան առաջ՝ եկեղեցում ունեցած քո «անգլերէն» ելոյթով:*

*7. 1999թ. Յունիսին՝ կառավարութիւնը Վազգէն Սարգսյանին յանձնելու ժամանակ, յայտարարուեց, որ պիւտճէն ունի 37 մլրդ. դրամի ճեղքուածք, սակայն մէկ շաբաթ յետոյ պարզուեց, որ պիւտճէի ճեղքուածքը... 137 մլրդ դրամ է: Ո՞ւր կորաւ քո երկամեայ կառավարման ժամանակ այդ հսկայ գումարը: Մէկ շաբաթ անց պարզուեց, որ կորել է նաեւ 400 մլն տոլար, ՌԴ-ի կողմից Հայաստանին՝ գազամատակարարման ցանցի դիմաց տրուած գազի գումարը, որը պէտք է մուտքագրուէր պիւտճէ, բայց պիւտճէն մէկ լումա էլ չէր ստացել: Եւ դու խօսում ես խաբեբայութեան եւ խաբեբաների մասի՞ն:*

*8. 1999թ. Յունիս. Վազգէն Սարգսեանը կառավարութեան նիստում յայտարարեց, որ արգելում է նախարարներին շփուել քեզ հետ առանց իր թոյլտուութեան: Այս կարգադրութիւնը կատարում էին բոլոր նախարարները՝ բացի մէկից՝ Սերժ Սարգսեանից, որը արագօրէն զրկուեց սուպերնախարարի կարգավիճակից, եւ ՆԳՆ-ն յանձնուեց Սուրէն Աբրահամեանին:*

*9. 1999 թ. Յուլիս. Վազգէն Սարգսեանի կարգադրութեամբ ստեղծուեց յանձնաժողով, որը պէտք է ստուգէր «Հայոսկի», «ԱրմէնՏել» եւ Կոնիակի գործարան ձեռնարկութիւնների վաճառքի օրինականութիւնը: Այս երեքի վաճառքի հեղինակը եղել ես դու եւ Հայաստանին, միայն այս երեքով, հասցրել ես 1.5 մլրդ $-ի վնաս: Այս առուծախի գործողութիւններում բացայայտուեցին բազմաթիւ խարդախութիւններ, որոնց հիման վրայ դու, նուազագոյնը, պէտք է պաշտօնանկ արուէիր, նորմալը՝ դատուէիր, սակայն 27-ը կանխեց աշխատանքների աւարտը: Քո եւ Վազգէնի յարաբերութիւնները օր օրի աւելի էին լարւում:*

*10. 1999 թ. Օգոստոսից Վազգէնը իր վրայ վերցրեց հանգուցային բոլոր կադրերի նշանակումը:*

*11. 1999 թ. Սեպտեմբեր. Վազգէնը վերադարձաւ ամերիկեան գործուղումից կատաղած (ի դէպ, մեկնելուց առաջ նա վարչապետի ժամանակաւոր պաշտօնակատար նշանակեց ինձ, ինչպէս եւ այլ դէպքերում, երբ նա գործուղման մէջ էր լինում), հրաւիրեց իր մօտ եւ բառացի ասաց հետեւեալը. «այս տականքը (քո մասին է) համաձայնել է Մեղրին փոխանակել Լաչինի հետ:*

*Ալբերտ Գորը նշեց, որ շատ ուրախ է, որ Ղարաբաղեան խնդիրը վերջապէս կը կարգաւորուի: Ես նրան ասացի, որ նման փոխանակում երբեք չի լինի: Զրոյցը շատ ծանր աւարտուեց»: Նոյն Մեղրու*

Շար.ը էջ 18

THE ARARAT-ESKIJIAN MUSEUM AND

THE NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN STUDIES AND RESEARCH (NAASR)

*PRESENT*



## THE MISSING PAGES:

*THE MODERN LIFE OF A MEDIEVAL MANUSCRIPT, FROM GENOCIDE TO JUSTICE*

**A Lecture by Dr. Heghnar Zeitlian Watenpaugh**

*Professor of Art History, University of California, Davis*

***Sunday, April 7, 2019, 4:00 PM***

**Ararat-Eskijian Museum, Sheen Chapel**

**15105 Mission Hills Road Mission Hills, CA**

The Missing Pages is the biography of the Zeytun Gospels, a manuscript illuminated by the greatest medieval Armenian artist, Toros Roslin, and which is at once art, sacred object, and cultural heritage. Its tale mirrors the story of its scattered community as Armenians have struggled to redefine themselves after genocide and in the absence of a homeland. Heghnar Zeitlian Watenpaugh follows in the manuscript's footsteps through seven centuries, from medieval Armenia to the killing fields of 1915, the refugee camps of Aleppo, Ellis Island, Soviet Armenia, the J. Paul Getty Museum, and ultimately to a Los Angeles courtroom. Reconstructing the path of the pages, Watenpaugh uncovers the rich tapestry of an extraordinary artwork and the people touched by it. At once a story of genocide and survival, of unimaginable loss and resilience, The Missing Pages captures the human costs of war and persuasively makes the case for a human right to art. Heghnar Zeitlian Watenpaugh is Professor of Art History at the University of California, Davis. She is the award-winning author of The Image of an Ottoman City: Architecture in Aleppo (2004). Her writing has also appeared in the Huffington Post and the Los Angeles Times.

**COPIES OF *THE MISSING PAGES* WILL BE AVAILABLE FOR PURCHASE.**

*For more information call the Ararat-Eskijian Museum at 747- 500-7584*

*or email eskijian@ararat-eskijian-museum.com*

ARARAT-ESKIJIAN MUSEUM

NAASR

## ՀՀ Գլխաւոր Հիւպատոս Արմէն Բայբուրդեանի Եռօրեայ Աշխատանքային Այցը Ֆրեզնօ



Լոս Անջելեսում ՀՀ գլխաւոր հիւպատոս Արմէն Բայբուրդեանը եռօրեայ աշխատանքային այցով մեկնել էր Ֆրեզնօ: Ֆրեզնոյում Քալիֆորնիայի համալսարանի նախագահ Ճոզեֆ Կաստրոյի ուղեկցութեամբ գլխաւոր հիւպատոսն այցելել եւ ծաղիկներ է խոնարհել համալսարանի բակում տեղակայուած՝ Հայոց ցեղասպանութեան զոհերի յուշակոթողին::

Այնուհետեւ դոկտ. Բայբուրդեանը եւ դոկտ. Կաստրոն առանձնազրոյց են ունեցել, որի ընթացքում քննարկել են Հայաստանի բուհերի եւ Ֆրեզնոյում Քալիֆորնիայի համալսարանի միջեւ գործակցութեան ծրագրեր՝ կենտրոնանալով երեք ուղղութիւնների վրայ՝ հայագիտութեան, ճարտարագիտութեան եւ գիւղատնտեսութեան:

Գլխաւոր հիւպատոսը նաեւ մասնակցել է Ֆրեզնոյի համալսարանի Հայկական ուսումնասիրութիւնների կենտրոնի աւարտական միջոցառմանը, որին հրաւիրուած էր՝ իբրեւ գլխաւոր բանախօս:

Աշխատանքային այցի ընթացքում դեսպան Բայբուրդեանը հանդիպում է ունեցել նաեւ Ֆրեզնոյի քաղաքապետ Լի Բրենդի հետ: Գլխաւոր հիւպատոսը կարեւորել է Ֆրեզնոյի հետ յարաբերութիւնների սերտացումը՝ շեշտելով, որ ԱՄՆ արեւմտեան ափում ամերիկահայ համայնքի արմատները գտնւում են հէնց Ֆրեզնոյում: Արմէն Բայբուրդեանը փաստել է նաեւ, որ Հայաստանը կարեւորում է գիւղատնտեսական տեխնոլոգիաների զարգացումը, եւ այդ առումով, Ֆրեզնոյի հետ փորձի փոխանակման մեծ դաշտ կայ: Այդ իմաստով գիւղատնտեսութիւնը գործակցութեան առաջնային ուղղութիւններից մէկը կարող է դառնալ, շեշտել է գլխաւոր հիւպատոսը: Զրուցակիցները կարեւորել են նաեւ Ֆրեզնօ-Էջմիածին քոյր-քաղաքների ծրագրի ակտիւացումը:

Գլխաւոր հիւպատոս Բայբուրդեանը հանդիպում է ունեցել նաեւ Ֆրեզնոյի մարզի տնտեսական զարգացման կորպորացիայի նախագահ Լի Էն Իգերի հետ: Նրանք քննարկել են տնտեսական գործակցութեան հեռանկարները: Լի Էն Իգերը սիրով ընդունել է Արմէն Բայբուրդեանի՝ Հայաստան այցելելու հրաւէրը՝ տնտեսական գործակցութեան ծրագրերին գործնական բնոյթ հաղորդելու համար:

Ֆրեզնօ կատարած այցի ընթացքում դեսպան Բայբուրդեանը մասնակցել է նաեւ համայնքային պաշտօնական ընդունելութեանը, որը գլխաւոր հիւպատոսի պատուին կազմակերպել էր Ֆրեզնոյում ՀՀ պատուաւոր հիւպատոս Պերճ Աբգարեանը:

ՀՀ գլխաւոր հիւպատոսն այցելել եւ յարգանքի տուրք է մատուցել նաեւ Սողոմոն Թեհլերեանի յիշատակին նուիրուած յուշարձանին, ինչպէս նաեւ այցելել է Ուիլեամ Սարոյեանի տուն-թանգարան:

## Փասատինայի ՀԿԲՄ-ի Սրահի Բարեզարդման Ի Նպաստ

Շարունակուած էջ 1-էն

ղովրդանուէր (դպրոց, դարմանատուն, եւայլն) բեղուն գործունէութեան մասին: Արդիւնաւէտ առաքելութիւն մը արդարեւ, որուն շառաւիղը հասած է մինչեւ ԱՄՆ:

Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, որ կեդրոնի հիմնադրութեան առաջին օրէն ի վեր միշտ օժանդակած է անոր, իր ելոյթին մէջ դրուատալից խօսքերով արժեւորեց այս հաստատութեան նուիրական առաքելութիւնը որպէս «լուսաւոր օճախ մը հայակերտումի»:

Տեսաերիզի վրայ ցուցադրուեցաւ «Կարօ Սողանալեան» սրահի եւ անոր յարակից բաժանմունքներու (խոհանոց, լուացարաններ եւայլն) նախկին եւ վերանորոգուած վիճակն ու նախատեսուած այլ բարեզարդումները, իրենց արդիական ձեւաւորումներով:

Ապա, ելոյթ ունեցաւ ԱՄՆ-ի Արեւմտեան շրջանի ՍԴՀԿ ատենապետ Գրիգոր Խոտանեան: Ան իր խօսքին մէջ յայտնեց, որ այս կեդրոնը եղած է տունը «Մասիս» շաբաթաթերթի, Հայ Մարմնամարզական Միութեան, Նոր Սերունդ Մշակութային Միութեան, շրջանի կուսակցական մասնաճիւղին եւ երիտասարդական ու պատանեկան միաւորներուն, որոնք ազգանուէր իրենց գործունէութեամբ կը ծառայեն Հայ ժողովուրդին: Ան յիշատակեց անունները անոնց, որոնք կարեւոր դերակատարութիւն ունեցած են կեդրոնի գնման ու զայն տարիներու ընթացքին կանգուն պահելու աշխատանքներուն մէջ:

«Այդ անուններուն վրայ կու գայ աւելնալու նուիրեալի մը անունը եւս», ըսաւ Ընկ. Խոտանեան մեծապէս գնահատելով այն գործնական աշխատանքը, որ այս օրերուն կը տանի Յանձնախումբի ատենապետ Ընկ. Թադէոս Քորողլեանը, որպէսզի կեդրոնի բարեզարդումը իրականութիւն դառնայ:

Ընկեր Խոտանեան շնորհակալութիւն յայտնեց նաեւ Յանձնախումբի միւս անդամներուն՝ Կարինէ Քոճապապեանին, Լենա Տէրտէրեանին, Արօ Գրիգորեանին եւ Սեպուհ Գաբրիէլեանին:

Ապա, յատուկ արարողութեամբ մը բարեզարդման յանձնախումբի անունով ոսկեմետալով եւ պատուոյ յուշատախտակով պարգեւատրուեցաւ ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Թադէոս Քէորողլեանը, առ ի գնահատութիւն իր նիւթաբարոյական աջակցութեան, նուիրումին եւ օգտաշատ ծառայութիւններուն:

Հանգանակային երեկոյի առթիւ Տէր եւ Տիկին Թադէոս եւ Նորա Քէօրօղլեաններ 50 հազար տոլար նուիրեցին օրուայ նպատակին: Կատարուեցան նաեւ բազմաթիւ մեծ ու փոքր նուիրատուութիւններ, որոնց ընդհանուր գումարը հասաւ 150 հազար տոլարի:

Փակման խօսքով հանդէս եկաւ ՍԴՀԿ կեդրոնական Վարչութեան ատենապետ Տօքթ. Համբիկ Սարաֆեան: Ան իր գոհունակութիւնը յայտնեց այս խանդավառ մթնոլորտին եւ գեղեցիկ նախաձեռնութեան համար: Գալով Հ.Կ.Բ.Մ.ի կեդրոնի առաքելութեան ան ըսաւ թէ հայութիւնը նոր մարտահրաւէրներու առջեւ կը գտնուի: Հարկ է բոլոր միջոցներով պայքարիլ, չի կորսնցնելու համար մեր լեզուն ու ինքնութիւնը: Պէտք է ամուր պահել մեր արմատները եւ հայրենասիրական դրօշը փոխանցենք յաջորդ սերունդին, նաեւ դառնալու ամրակուռ օղակը մայր հայրենիքի ներկայ իրականութեան հետ:

Երեկոյի ընթացքին ազգագրական եւ հայրենասիրական ելոյթներով հանդէս եկաւ շնորհալի երգչուհի Հայկուհի Բաբախանեան: Տիրող տօնական մթնոլորտը իր զուարթախօսութիւններով խանդավառեց Ստեփան Յովակիմեան:

www.massisweekly.com

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE.
PASADENA CA
91104
(626) 797-7680

CSUN
CALIFORNIA STATE UNIVERSITY NORTHRIDGE

Under the High Patronage of
Her Excellency Ms. Mirna Khawly
Consul General of the Republic of Lebanon in Los Angeles

The Armenian Studies Program at CSUN and Haigazian University

Cordially Invite You to a Book Presentation

ON THE RECORD
Armenian Deputies in the Lebanese Parliaments
Volume I: 1922-1972 & Volume II: 1972-2017

By the Author
Roupen Avsharian, Esq.

Thursday, April 11, 2019 at 8:00 p.m. at the Glendale Downtown Central Public Library
222 E. Harvard Street, Glendale, Ca. 91205.

Book Signing & Reception to Follow

For further information please contact
vahram.shemmassian@csun.edu or hasmig.baran@csun.edu

## Արցախի Քառօրեայ Պատերազմի Հերոսներուն Նուիրուած Ձեռնարկ՝ Հոլիվուտ Հիլզ Ֆորեսթ Լոնի Մէջ




Երկրորդ տարին ըլլալով, «Ֆորեսթ Լոն» հաստատութիւնը յատուկ ձեռնարկներ կը կազմակերպէ, յարգելու համար շրջանի հայութիւնն ու Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակը:

Այս տարուան յիշատակութեան ձեռնարկին օրը կը զուգադիպի Արցախի մէջ 2016-ի Ապրիլեան Պատերազմի երրորդ տարելիցի, հետեւաբար, կազմակերպողները զայն պիտի նուիրեն մեր քաջարի զինուորներուն յիշատակին, որոնք իրենց ամէնէն թանկագինը՝ կեանքը զոհեցին ի խնդիր հայրենիքի պաշտպանութեան: Անոնց ցուցաբերած անձնուիրութիւնն ու վճռակամութիւնը թոյլ չտուաւ, որ թուրք-ազերին այս անգամ ալ հասնի իր նպատակին, բռնագրաւել եւ տիրանալ Հայաստանի դարպասին՝ Արցախին:

Ծանօթ իրականութիւն է, որ դարերու ընթացքին, մանաւանդ վերջին մէկ ու կէս դարերուն, թուրքն ու ոճրագործ դաշնակիցները իրենց բոլոր կարելիութիւնները ի գործ դրին եւ կը դնեն, միանգամընդմիշտ վերցնելու համար փանթուրքիզմին դէմ խոչընդոտ հանդիսացող Հայաստանն ու հայութիւնը, սակայն միշտ ալ հանդիպեցան բուռ մը հայերու խիզախ եւ անձնուրաց դիմադրութեան. հայը մի՛շտ ալ իր սահմանափակ միջոցներով անկարելին կարելի դարձուց՝ ձախողութեան մատնելով իւրաքանչիւր փորձ: Վկայ մեր վերջին մէկ դարու ազատագրական պայքարի պատմութիւնն ու ինքնապաշտպանութեան կռիւները, վկայ 2016-ի Ապրիլեան պատերազմը: Հակառակ միլիառաւոր տոլարներու հասնող արդիական զէնքերուն, Պաքու չկարողակաւ իր նպատակին հասնիլ, շնորհիւ բուռ մը հայ քաջերու աննկուն կամքին եւ գիտակցութեան:

Պուլկարացի հանրածանօթ լրագրող եւ ժապաւէններու բեմադրիչ Ցվետանա Փասկալեւա, որ Արցախեան պատերազմի առաջին օրերէն սկսեալ ու ամբողջ տեւողութեան, նկարահանած եւ արձանագրած է պատմական դէպքերը, յատուկ վաւերագրական ժապաւէն մը պատրաստած է այդ հերոսներուն մասին, «Նուիրեալները» խորագիրով, անմահացնելով անոնց յիշատակը:

«Ֆորեսթ Լոն» հաստատութիւնը, ընդառաջելով ձեռնարկին կազմակերպիչ յանձնախումբին, հրաւէր ուղղած է ժապաւէնին հեղինակին, որ անձամբ ներկայ գտնուի եւ աւարտին, պատասխանէ ներկաներու հարցումներուն:

Ցուցադրութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, 7 Ապրիլին, կէսօրէ ետք ժամը 2էն սկսեալ: Ձեռնարկի սկզբնաւորութեան ու աւարտին, ներկաները առիթը պիտի ունենան ծանօթանալու նաեւ շրջանիս կարգ մը հայրենակցական միութիւններու կողմէ ցուցադրուելիք՝ իրենց շրջաններու պատմական տեղեկութիւններուն, ինչպէս նաեւ մշակութային եւ արուեստի աշխատանքներու նմուշներուն:

Ինչպէս անցեալ տարի, այս տարի եւս, ձեռնարկը ձրի է հանրութեան, ցուցադրութեան եւ հիւրասիրութեան ընթացքին, գեղարուեստական յայտագիրով ելոյթ պիտի ունենայ Արա Տապանճեան իր բարեկամներով:

Կոչ կ'ընենք շրջանիս հայութեան, որ խուռն ներկայութեամբ ոչ միայն յարգէն յիշատակը Արցախի մեր հերոսներուն, այլ նաեւ ցոյց տան համայն աշխարհին, որ Արցախէն հազարաւոր մղոններ հեռու գտնուող հայութիւնը հաստատ կը մնայ ոչ մէկ հող չզիջելու հայրենի ժողովուրդի կամքին եւ կը պահանջէ, որ յարգուին Արցախի հայութեան մարդկային եւ գոյութեան իրա-ւունքները:

## Գեղարուեստական Երեկոյ Նուիրուած Իրաքահայերու Բարեգործական Միութեան




Կազմակերպութեամբ Լոս Անճելըսի Իրաքահայերու Բարեգործական Միութեան մշակութային յանձնախումբին, 23 Մարտ 2019-ին, Թահանկայի մէջ տեղի ունեցաւ գեղարուեստական երեկոյ մը՝ Միութեան հիմնադրութեան հինգերորդ տարեդարձի առիթով, երեկոն երգի ու նուագի ելոյթ մըն էր, որ տեղական խառն ոճով երիտասարդները անուանած էին (հակական ճոխ երեկոյ):

Միութեան սրահը լեցուած էր հոծ բազմութեամբ. հոն ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսի ներկայացուցիչը, կուսակցութիւններու եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ, հիւրեր եւ անդամ ու անդամուհիներ:

Սարօ Աղպաշեան երեկոյին բացումը կատարելով Միութեան վարչութեան անունով բարի գալուստ մաղթեց բոլորին եւ հակիրճ ձեւով ներկայացուց միութեան կեդրոնատեղի մը ունենալու նիւթական հսկայ ծախսերու պահանջքը եւ յիշեց թէ ներկայիս Միութիւնը աւելի կարող է նիւթապէս եւ յոյս ունի որ մօտ ապագային իր սեփական կեդրոնը պիտի ունենայ բոլորին աջակցութեամբ, ինչպէս նաեւ վարչութեան կողմէ շնորհակալութիւն յայտնեց բոլորին ներկայ գտնուելու համար:

Գեղարուեստական բաժինը, որ երկու մասերէ կը բաղկանար, նուագ եւ երգ, սկսաւ «Իլիկներու պար» նուագախումբի կատարմամբ, որուն հետեւեցաւ «Պինկէօլ» երգը Կասիա Բուշեանի կատարմամբ, ապա «Ջէյթունի Ծառ» նուագը: Դալար Դագեսեան կատարեց «Ջեփիւռ կը Դառնամ» երգը, որմէ ետք նուագախումբը կատարեց «Վաղարշապատ»ը, ապա Գարէն Դագեսեան կատարեց «Լուսին եմ ամպի տակին» երգը. երեկոն շարունակուեցաւ «Ամպից կորաւ լուսնկան» նուագով, Կասիա Բուշեանը «Լէյլըմ Լէյլմ» երգով. վերջին մասն էր «Սարի սիրուն եար» նուագը, Գարէն Դագեսեանի «Քելէ Քելէ» երգը եւ վաստակաւոր երգիչ Արմէն Դագեսեանի «Իմ Երեւան» երգի կատարումը:

Բոլոր ելոյթները բուռն ծափահարութիւններով գնահատուեցան ներկաներու կողմէ, որոնք խանդավառուած իրենք ալ կը մասնակցէին երգերուն:

Փակման խօսքը կատարեց Միութեան երիտասարդ ատենապետ Հայկ Եսայեան, ան յայտնեց թէ կեդրոն ունենալու նպատակն է մէկտեղ հաւաքել փոքրիկները եւ պատանիները եւ անոնք ձուլումէն հեռու պահել. եւ աւելցուց, թէ միութեան նպատակն է նաեւ սերտ յարաբերութիւններ հաստատել հայկական կուսակցութիւններու եւ քոյր միութիւններու միջեւ:

Այս առիթով Միութեան յատուկ շքանշանով պարգեւատրուեցաւ Բարեգործականի վեթերան անդամուհի Տիկ. Սրբուհի Որբէրեան իր կատարած նուիրեալ աշխատանքներուն համար. Միութեան շքանշանով պարգեւատրուեցան նաեւ խումբի անդամները Վիգէն եւ Շիրակ Պետրոսեաններ, Լեւոն Թովմասեան, Վիգէն Մարտիրոսեան, Ռամզի Գաբրիէլեան, երեկոն պատրաստող Յարութ Ջագարեան եւ երգիչները:

Երեկոյի աւարտին բոլորը հրաւիրուեցան ճաշակելու պատրաստուած համադամ ճաշերը:

Թղթակից



# Massis Weekly

Volume 39, No. 12 Saturday, March 30, 2019

## New Envoy Reaffirms U.S. Commitment to Assisting 'Sovereign Armenia'

YEREVAN -- The newly appointed ambassador of the United States to Armenia has reaffirmed her government's commitment to assisting "sovereign Armenia" as she was received by the South Caucasus nation's Prime Minister Nikol Pashinian on Friday.

"Thankful for the warm welcome, [Ambassador] Lynne Tracy said she was honored to meet with Prime Minister Pashinian and reaffirmed the U.S. Government's strong commitment to assisting sovereign Armenia in implementing its democratic agenda and anti-corruption efforts, dealing with economic and regional bottlenecks, as well as in matters of international security," a statement published on the Armenian premier's official website reads.

"The U.S. Ambassador gave assurances that during her tenure she would make all necessary efforts to promote the development of bilateral economic cooperation," it adds.

According to the same source, welcoming the newly appointed U.S. ambassador, Pashinian emphasized that the Armenian government is "interested in the continued development of partnership with the United States, including in the political and economic spheres."

The Armenian prime minister said that "Armenia is consistently heading along the path of democratic reforms by fighting against corruption and monopolies, promoting human rights and freedom of speech."

In this respect, Pashinian stressed the importance of building closer ties of cooperation with the United States and implementing joint programs in the aforementioned areas, the statement reads.

According to the premier's official website, during their meeting Pashinian and Tracy discussed a number of issues that are on the agenda of U.S.-Armenian relations and exchanged views on the Nagorno-Karabakh conflict settlement process and other regional issues of mutual interest.

## Gladys Berejiklian Becomes First Woman Elected Premier of NSW




SYDNEY — Gladys Berejiklian has led the Coalition to a third term in government in New South Wales despite a rising tide of minor parties and independents, and has become the first woman elected premier of the state at a general election.

Berejiklian told an exuberant crowd of party faithful gathered at the Sofitel in Sydney, which included the former prime minister John Howard and the former premier Nick Greiner, that she was proud of NSW, "a state in which someone with a long surname – and a woman – can be the premier".

"I will continue to – my team and I – will continue to work our guts out to make sure this state and its people continue to ensure that we have the best opportunities on this planet," she said in her victory speech.

"That we continue to provide a strong budget for the projects, infrastructure and services they need to take the pressure off families."

Berejiklian said she would work closely with minority parties, "whether or not my government is a majority or minority government".

With most of the votes counted on Saturday night, the coalition had 46 seats – 34 for the Liberals and 12 for the Nationals.

Labor held 35, well short of the 47 seats needed to form a majority government.

## Pashinyan- Aliyev Summit Set for March 29




MOSCOW (RFE/RL) — Armenian Prime Minister Nikol Pashinian and Azerbaijani President Ilham Aliyev will reportedly meet on Friday for further talks on the Nagorno-Karabakh conflict.

Citing unnamed diplomatic sources in Vienna, the Russian Interfax news agency reported that the meeting will take place in Austria's capital. Armenia and Azerbaijan did not immediately confirm the information.

That Aliyev and Pashinyan will travel to Vienna later this week was announced by Austrian President Alexander Van der Bellen's office earlier in the day. It said that Van der Bellen will hold separate talks with the two men on Friday.

The Armenian and Azerbaijani leaders most recently met on January 22 on the sidelines of the World Economic Forum in Davos, Switzerland. They also talked during the summits of former Soviet republics held in September and December.

The Armenian and Azerbaijani foreign ministers have similarly held a series of lengthy negotiations in the past several months, fuelling more speculation about major progress towards a resolution of the Karabakh conflict.

The U.S., Russian and French mediators co-heading the OSCE Minsk Group said on March 1 that Aliyev and Pashinyan have agreed to meet again soon. But they gave no dates of the meeting.

Pashinyan afterwards sounded pessimistic about chances of a breakthrough in the protracted peace process. He said that Baku has not reciprocated Yerevan's stated readiness for mutual compromise and continues to threaten a military solution to the dispute. He also renewed his calls for Karabakh's direct involvement in Armenian-Azerbaijani peace talks, saying that he does not have a mandate to negotiate on behalf of the Karabakh Armenians.

On March 14, Aliyev denounced those calls as an "attempt to block the

Continued on page 3

## Armenian Investigators Probing Allegations of 1998 Election Fraud

YEREVAN (RFE/RL) — The Special Investigation Service (SIS) is looking into claims made recently by a former senior official about massive falsifications during the 1998 presidential election that allegedly gave victory to then Prime Minister Robert Kocharian, a spokesperson said on Friday.

Marina Ohanjanian said probing other assertions that former deputy defense minister Vahan Shirkhanian made in an open letter earlier this week, including that Nairi Hunanian, the leader of a group that carried out a deadly attack on the Armenian parliament in 1999, was a National Security Service (NSS) agent, is "outside the scope of the SIS's powers."

Meanwhile, earlier on Friday director of the NSS Artur Vanetsian neither confirmed, nor denied Shirkhanian's claim that Hunanian was an agent, referring journalists to the SIS that he said led the relevant investigation. He also said that the entire related information will be published after a "special procedure."

In his letter Shirkhanian, who occupied the senior Defense Ministry post in the 1990s and is now facing coup charges in a trial of a group of individuals arrested in 2015 and accused of plotting to seize power, claimed that the then head of the NSS Gorik Hakobian presented to Kocharian and military prosecutor Gagik Jhangirian "a file with the case of NSS agent Nairi Hunanian", but that file later allegedly disappeared.

Hunanian led an attack in which then Prime Minister Vazgen Sargsian, Parliament Speaker Karen Demirchian and six other senior lawmakers and government members were killed. Hunanian and five other members of his group were convicted on charges related to the attack and sentenced to life imprisonment in 2003. Another member of the group was sentenced to 14 years in prison, but did not survive his term.

In his letter Shirkhanian also claimed that Kocharian falsified the outcome of the runoff of the 1998 presidential election with Demirchian, a former leader of Soviet Armenia who made a political comeback and reemerged as quite a popular figure less than a decade after the USSR's collapse.

Demirchian conceded defeat and later allied himself with then powerful defense minister Sargsian. The duo went on to win parliamentary elections the following year. Their tandem remained powerful in the country for several months until the October 27, 1999 terrorist attack in which both were assassinated.

Continued on page 3

# Armenia Designates Last Saturday of April Citizen's Day to Mark 'Velvet Revolution'



YEREVAN — The Armenian government on Thursday endorsed a bill designating the last Saturday of April as Citizen's Day in memory of the victory of "the non-violent, velvet, popular revolution of April-May 2018."

In a Facebook post on Thursday Pashinyan said that Citizen's Day should be the day marking the victory of the people and democracy rather than the new government.

"And it should become a truly national holiday, a holiday like the revolution itself was," he said.

"As to what should be celebrated on that day, I think it will also be decided through public, online discussions," Pashinyan added.

By the government's decision, in cases when May 1 will fall on Saturday, Citizen's Day will be marked on the last Sunday of April.

Pashinyan and his political team came to power following sustained street protests against the government of Serzh Sarkisian who in April 2018 was elected prime minister after two consecutive terms as president following a constitutional reform that curtailed presidential powers in favor of the head of the government.

Facing a popular movement against him led by Pashinyan Sarkisian stepped down on April 23, 2018 after only six days in office as prime minister.

Sarkisian's then ruling Republican Party of Armenia (HHK) eventually had to elect minority candidate Pashinyan as the next prime minister to placate mass demonstrations in support of the then popular opposition leader.

Pashinyan's My Step alliance gathered over 70 percent of the vote in the December 9 early parliamentary elections in which the HHK failed to clear the five-percent threshold to be represented in the next National Assembly.

# PM Pashinyan Demands the Resignation of State University Chiefs

YEREVAN — Prime Minister Nikol Pashinyan on Monday publicly demanded the resignation of the rectors of state-run universities who he said are linked to Armenia's former leadership.

"Those rectors who turned the system of higher education into party cells, those rectors who locked the doors for students have nothing to do in the new Armenia," Pashinyan told a cabinet meeting in Yerevan. "This is my very explicit position and we must not be afraid of expressing that position."

"Let them cling to their doors, desks and armchairs, but they have nothing to do in the new Armenia. Let them find other jobs, other tasks, other missions," he said.

Pashinyan stressed that he and his government have made a "political decision" to get rid of such rectors. "Let nobody think or hope that we will forget what we rallied for [in April-May 2018,]" he added.

The remarks seemed primarily addressed to Aram Simonian, the long-serving rector of Yerevan State University (YSU) who remains affiliated with former President Serzh Sarkisian's Republican Party of Armenia (HHK).

Simonian has been under mounting pressure to step down since last spring's "velvet revolution" which brought Pashinyan to power. In December, a government body implicated the YSU administration in serious financial irregularities. The Armenian police likewise alleged last month that Simonian has embezzled YSU funds and engaged in other corrupt practices over the past decade.

Simonian, who has still not been formally charged with any crime, denies the allegations as politically motivated. He has said that he will not resign before serving out his current term in office in 2020.

YSU's Board of Trustees narrowly failed to sack the 63-year-old rector when it met on February 28. Half of its 32 members are appointed by the government. The other board members are chosen by the YSU faculty and students.

An HHK member since 1997, Simonian has long been accused by his detractors of suppressing student activism and placing YSU under the strong influence of the former ruling party.

Pashinyan personally accused the university administration of preventing YSU students from joining his street protests against Sarkisian shortly after launching them in April 2018. He charged at the time that YSU has become an HHK "lair."

Simonian on Monday declined to comment on Pashinyan's latest remarks, arguing that the prime minister did not name names. "He may or may have not referred to me," the YSU head told RFE/RL's Armenian service. "I can't tell."

# Secretary of States Mike Pompeo Visits Armenian Chapel at Jerusalem's Holy Sepulcher Church



JERUSALEM — US Secretary of States Mike Pompeo visited the Holy Sepulchre Church and the Armenian section inside the Church.

In the Armenian Chapel Mr. Pompeo lit a candle after which the Armenian Superior of the Holy Sepulchre Church Rev. Fr. Samvel Aghoyan addressed him on behalf of His Beatitude Abp. Nourhan Manougian and St. James Brotherhood welcoming his visit to the Holy Sepulchre Church.

Fr. Samvel talked about the presence of the Armenians in the Holy Land and concluded his wolds saying "We wish success in all your efforts to establish peace in the region, so that all the nations and followers of different religions can live in a peaceful and properiose region".

# Senate Committee Unanimously Passes California/Armenia International Trade Office Bill



SACRAMENTO — SB 302 authored by State Senator Anthony J. Portantino (D–La Cañada Flintridge), to reestablish a trade office between California and Armenia passed the State Senate Business and Professions Committee on Monday March 25. The bill received bi-partisan support and garnered a unanimous vote. Armenian Consul General Armen Baibourtian flew to Sacramento to offer testimony in favor of the proposal.

"Armenia is an important trade partner with California with strong and long-standing relationships. SB 302 will formalize trade and economic ties. As the representative of the largest Armenian community in a legislative district in the country, I am very honored and glad that this bill is moving forward in the Senate. California is embracing the Armenian Community and all it has to offer our state and it's exciting to be part of that excitement," commented Senator Portantino.

SB 302 will establish a regional trade office to promote economic relations in a developing area of the world that show emerging market potential. The regional trade office would be located in Armenia and would serve the developing economies of Eastern Europe and Western Asia. Armenia has worked hard to develop diplomatic and economic ties worldwide.

"One of my top priorities as Consul General is to increase economic opportunities between Armenia and the California. I was very pleased to offer testimony in support of this important proposal. There is tremendous excitement in Yerevan, Glendale and Sacramento about the burgeoning beneficial relationship on the horizon and feel we are capturing that excitement. Our hope it will lead to mutual benefit," concluded Armen Baibourtian, Consul-General Armenia.

Former CA State Senator Jack Scott originally created the California/Armenia International Trade Office through legislation. Former Governor Arnold Schwarzenegger terminated it in 2007. SB 302 would require the Yerevan trade and investment office to, among other things, promote the export of California goods and services into the Republic of Armenia and facilitate access to educational exchange programs between California and the Republic of Armenia

## EU to Finance €23 Million TUMO Convergence Center for Engineering



YEREVAN — TUMO Center for Creative Technologies and the European Union launched their partnership to build and operate the EU TUMO Convergence Center for Engineering and Applied Science, a state of the art STEM ecosystem in Yerevan, Armenia.

The center will be a hub for research, education and startups geared towards students and young professionals over 18. It will bring together partners, both local and international, to bridge the gap between higher education and industry in Armenia.

Its campus will be roughly 15,000 square meters in size, consisting of infrastructure for educational programming, a STEM research laboratory, a conference center, and revenue generating commercial space to ensure the center's long-term financial sustainability. Additionally, the campus will host the French University in Armenia (UFAR)'s Faculty for Informatics and Applied Mathematics.

The EU will provide €23 million to support educational reforms in Armenia, including €10.5 million for the development of STEM standards, while the remaining €12.5 million will go to the new TUMO initiative.

A centerpiece of the project is TUMO Labs, a technology education curriculum designed to complement local universities with project-based learning opportunities in cutting edge fields. TUMO Labs will be a logical continuation of the TUMO program that gives young adults professional experience and promotes business development in Armenia.

The ceremonial signing and groundbreaking for the center was attended by guests from the European Union, ministries of the Republic of Armenia, the IT sector and local universities. The event kicked off with a video address by EU Commissioner Carlos Moedas.

"[The center] captures this imagination that for me is the spirit of Armenia, and I think, is at the heart of the future of the European Union. That's why we all need to invest in innovation," said Lawrence Meredith, director of Neighborhood East at the European Commission's Directorate-General for Neighborhood and Enlargement Negotiations.

"We are thrilled to be creating a world-class STEM ecosystem in Armenia where the next generation of high tech professionals can learn and innovate," said Pegor Papazian, chief development officer of TUMO. "With support from the European Union, the Ministry of Education of the Republic of Armenia, and other partners both local and international, we will bridge a gap between higher education and the rapidly changing needs of the global economy."

After the signing, attendees walked to the site of the future center, where Lawrence Meredith, Pegor Papazian, Piotr Antoni Switalski, head of the European Union Delegation to Armenia, and Arayik Harutyunyan, minister of education for the Republic of Armenia, participated in a a ceremonial groundbreaking.

## Pashinyan- Aliyev Summit Set for March 29

**Continued from page 1**

negotiations process." Pashinyan countered a few days later that his insistence on Karabakh becoming a third negotiating party is "not a precondition."

In another joint statement issued earlier in March, the mediators urged the parties to avoid "demanding unilateral changes to the format without agreement of the other party or indicating readiness to renew active hostilities."

## Armenian Investigators Probing

**Continued from page 1**

Armenian opposition groups for years alleged that despite the arrest and trial of the immediate perpetrators of the attack its real mastermind has never been revealed.

Kocharian, who served as president for two consecutive five-year terms in 1998-2008, is currently in pretrial detention on charges of overthrowing the constitutional order in connection with the 2008 post-election crackdown on the opposition during which eight demonstrators and two security officers were killed.

Kocharian denies the accusations as politically motivated.

**www.massispost.com**

## Armenia Takes Part in the Ancient Civilizations Forum




YEREVAN (Panorama.am)— Armenia is represented at the Ancient Civilizations Forum that kicked off in La Paz, the capital city of Bolivia. Our country is represented by the Director of the "Matenadaran" Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts Vahan Ter-Ghevondyan and senior specialist at the Institute of Archaeology and Ethnography of RA NAS Arsen Bobokhyan.

The Ancient Civilizations Forum was launched in 2016 at the initiative of Greece and China and serves as a platform of cooperation and dialogue aimed at preserving cultural values and encouraging cooperation in the sphere of cultural heritage. Bolivia, Egypt, Iraq, Iran , Italy, and Peru are the founding members of the Forum. India and Mexico have an observer status. Armenia joint the Forum as a full member in July 3, 2018.

As the press service at Matenadaran reported, Vahan Ter-Ghevondyan will present a report on the topic of Old Armenian and its role in forming culture.

## Merdinian School 37th Annual Banquet Will Honor Dr. Daniel and Mrs. Juliette Abdulian



LOS ANGELES -- Dr. Daniel and Mrs. Juliette Abdulian will be honored for their many years of selfless devotion to the C&E Merdinian Armenian Evangelical School of Sherman Oaks, California on Sunday, April 28, 2019 at the Phoenicia Restaurant/ Banquet Hall in Glendale at 5:30 PM.

When Dr. Abdulian and Juliette were asked to express their feelings about Merdinian, they both shared the same attributes: The Merdinian School is an oasis of learning, with dedicated teachers and administrators in a safe, Christian learning environment. It is praiseworthy for its award- winning excellent academics, with an emphasis on Armenian Christian heritage and culture. High school principals praise our students and wish all their students came from Merdinian.

Founded jointly in 1982 by the Armenian Missionary Association of America (AMAA) and the Armenian Evangelical Union of North America (AEUNA), it has been a beacon of outstanding Armenian Christian education. A substantial donation from Miss Elise Merdinian to the AMAA, earmarked for an Armenian school, prompted the naming of the school after her and sister Charlotte. Miss Merdinian often came to the campus to "see my beautiful children."

Dr. Abdulian was born to Hovhannes and Martha Churukian Abdulian in Kessab, Syria. Their family life was centered around the Armenian Evangelical Church of Kessab. Hovhannes was one of the founding members of this church, and a respected leader in the community. He was also instrumental in bringing the AGBU to Kessab.

Dr. Abdulian has been a long time supporter of the AEUNA, AGBU, and AMAA— serving on its board for many years.

Juliette Ishkanian Abdulian grew up in Aleppo, Syria. When Juliette came to Los Angeles and married Dr. Abdulian, Elizabeth Agbabian invited her to serve on the Merdinian Ladies Auxiliary. The rest is history. Being totally devoted to the school and also a School Board member, she has made her mark in many ways—Involved in many fundraising activities for the school, she was also instrumental in obtaining the $1,000,000 donation for the state-of–the-art Bezjian Family Building; where each classroom has been equipped with the latest in technology.

For information please call: Merdinian (818) 907.8149 or Dr. Vahe Nalbandian (818) 507.9848. Tickets are $125. Sponsorships are encouraged.

# Award-Winning Film "Yeva" Screening at Fresno State

FRESNO — The CineCulture Film Series and the Armenian Studies Program at Fresno State are sponsoring the screening of the award-winning film "Yeva" at 5:30PM on Friday, March 29, in the Leon and Pete Peters Educational Auditorium (5010 N. Woodrow Ave., at the west end of the SaveMart Center, near Shaw and Woodrow Aves.), on the Fresno State campus.

Armenian Studies Program Coordinator Prof. Barlow Der Mugrdechian will be the discussant for the film.

Written and directed by Anahid Abad, "Yeva" is an intimate drama of a woman who suspected of murder, flees to an Armenian village in Karabagk with her young daughter in tow. Yeva has chosen to return to the place she briefly worked as a doctor during the Nagorno-Karabakh war, hoping she won't be recognized. With mines still dotting the hillsides, the conflict remains part of the fabric of this society and people still remember Yeva, although they don't immediately connect her to the stranger in their midst. As she integrates into the rhythm of village life, Yeva's memories of the war come flooding back, and a past tied directly to her current predicament.




Born in an Armenian family in 1969 in Tehran, Iran, Anahid Abad holds a B.A. in Film Directing. During her career she has served as First Assistant Director and Planner to many movie projects in the professional Iranian cinema. Since 2006, she has been a member of the Central Board of Assistant Directors & Program Planners Institute of Iran Cinema and in 2010 she became the head of the Institute.

Admission is free, but seating is limited. The screening is open to the public and free parking is available at any of the adjacent Fresno State parking lots (near the corner of Shaw and Woodrow Avenues).

For more information about the presentation please contact the Armenian Studies Program at 278-2669, or visit our website at www.fresnostate.edu/armenianstudies, or visit our Facebook page at @ArmenianStudiesFresnoState.

# Forest Lawn Memorial Parks Celebrates Armenian Heritage with Armenian Movie Night

LOS ANGELES — In a debut cultural event, Forest Lawn—Hollywood Hills's Armenian Movie Night will celebrate and revive Armenian history and culture as well as pay tribute to Genocide Awareness Month. The FREE, one-night-only event includes the exclusive premiere of the documentary April War Heroes, followed by a Q&A between the film's director, Tsvetana Paskaleva, who is one of the most celebrated Armenian filmmakers, and Hovsep "Joe" Hajibekyan of Forest Lawn—Hollywood Hills. After the screening, Armenian community partners will present artifacts, art, and embroidery that represent historic Armenian regions and recover and reintroduce aspects of Armenian culture that were largely eradicated during the Armenian Genocide of 1915. The event also includes Armenian music performances by Ara Dabanjian from Element Band and Friends and traditional Armenian pastries from local Armenian bakeries.

The premiere screening of Tsvetana Paskaleva's documentary April War Heroes commemorates the third anniversary of the April War or the Four-Day War, which took place over four days in April 2016 and resulted in the death of nearly 100 Armenian soldiers and civilians. The 30-minute film documents the heroic stories of Armenian soldiers who gave their lives during the intense fighting of this war, which began when Azerbaijan attacked the Republic of




Nagorno-Karabakh and ended when the outnumbered Armenian servicemen pushed back the unexpected and overwhelming enemy attack within days. The screening and conversation with Paskaleva, who has been writing, directing, and filming for over 25 years, celebrate the power of Armenian film as a tool for remembering history.

"So much of Armenia's rich history and beautiful culture was lost during the Genocide," says Joe Hajibekyan. "But with the depth of culture incorporated into Forest Lawn's Armenian Movie Night, with film, food, artistry, music, and community, we continue to revive and celebrate this legacy."

"At Forest Lawn, we know how meaningful it is to honor and remember the culture that was important to those who have passed," says Rodolfo Saenz, Forest Lawn's Senior Vice President, Marketing. "With this event, we keep traditions alive while also inviting the community to learn about important aspects of Armenian culture."

Armenian Movie Night takes place on Sunday, April 7, 2019, from 2:30–6:00 PM, inside the Hall of Liberty at Forest Lawn—Hollywood Hills, 6300 Forest Lawn Drive, Los Angeles, CA 90068. Doors open for a pre-show reception at 2:00 PM. Seating is available on a first come, first served basis and will begin at 2:30 PM. Admission and parking are FREE. Visit www.forestlawn.com for more information.

# New Publication: "Western Armenian in the 21st Century"

FRESNO - A co-edited volume by Bedross Der Matossian and Barlow Der Mugrdechian entitled Western Armenian in the 21st Century: Challenges and New Approaches has been recently published by The Press at California State University, Fresno, 2019.




The book is the first in the newly launched Society for Armenian Studies (SAS) Publication Series published as part of the Armenian Series of The Press at California State University, Fresno. Subvention for the publication of the book was provided by the Armenian Communities Department of the Calouste Gulbenkian Foundation.

Modern Western Armenian is considered an endangered language by UNESCO. Today Western Armenian is essentially a Diaspora language which was dramatically impacted by the Armenian Genocide of 1915. The post-Genocide period has posed a great challenge to the continued vitality of this important language. For the past few years, scholars have discussed how to best teach Western Armenian and to transmit the language to future generations. This volume brings together experts in the field of Western Armenian who focus on theoretical questions as well as practical suggestions in dealing with outdated pedagogical approaches. The volume presents the latest research in the field of language acquisition, which benefits from theoretical and practical approaches in the field of teaching minority languages in a diasporic situation. The list of contributors in the order of chapters are: Bedross Der Matossian and Barlow Der Mugrdechian, "Introduction"; Hratch Tchilingirian, "Western Armenian in the 21st Century: Issues of 'thinking' and 'creating' in Armenian"; Ani Garmiryan, "It Takes a Village to Raise a Language"; Jesse Siragan Arlen, "An Innovative Method for Teaching Western Armenian in Diaspora"; Shushan Karapetian, "Eastern Armenian Speakers as Potential Western Armenian Learners: Reflections on Second Dialect Acquisition"; Sylvia Kasparian, "For a Multilingual Approach in Teaching Modern Western Armenian in Diaspora Communities"; Hagop Gulludjian, "Language Vitality through 'Creative Literacy'"; Elizabeth Mkhitarian, "'While I make a poem, I am being made by poetry' Creative Writing in Heritage Language Instruction" and Vartan Matiossian, "In Lieu of a Conclusion."

**Endorsements:**

"This collection of essays is a striking response to the crisis of contemporary Western Armenian. It offers articles from multiple, heterogeneous perspectives, written by experts who have both theoretical and instructional experience and articulate views ranging from the importance of creating linguistic communities to the use of creative writing in language classrooms. Even the most visionary article also offers some strikingly innovative yet practical suggestion. The broader public of the Armenian diaspora and in particular its language teachers, school trustees and administrators, as well as writers, can and must learn from it."

**Khachig Tölölyan, Wesleyan University**

"Western Armenian's future is one of the most frequently debated topics in contemporary discussions of the Armenian diaspora. Reaching beyond the sensationalism that often frames the discourse of language vitality, this compelling collection of essays opens up new approaches to Western Armenian instruction, training, and transmission. The result is a fabulous volume that will become an integral resource for educators, researchers, and language activists."

**Talar Chahinian, UC Irvine**

**About the editors:**

Bedross Der Matossian is an Associate Professor of Middle East History at the University of Nebraska, Lincoln. He is the President of the Society for Armenian Studies (SAS) and the author of the award-winning book Shattered Dreams of Revolution: From Liberty to Violence in the Late Ottoman Empire (Stanford, Calif.: Stanford University Press, 2014) and the co-editor of Routledge Handbook on Jerusalem (Milton Park, Abingdon, Oxon; New York, NY: Routledge, 2018).

Barlow Der Mugrdechian is the Coordinator of the Armenian Studies Program and Director of the Center for Armenian Studies at California State University, Fresno. He is the general editor of the Armenian Series of the Press at California State University, Fresno. He is the editor of Between Paris and France: Armenian Studies in Honor of Dickran Kouyumjian (Costa Mesa, CA: Mazda Press, 2008). He is the former President of the Society for Armenian Studies (SAS).

Copies Western Armenian are available for purchase on Amazon.

# Սիպիլի Համերգն Ուրուկուէյի Մէջ Նուիրուած Արաքս Ռատիօժամի 12-ամեակին



Հայ ժողովուրդի տաղանդաւոր զաւակներ Կոմիտասի եւ Թումանեանի ծննդեան 150-ամեակներուն առիթով, անոնց ասոյթներով համեմուած խօսքով Մօնթէվիտէոյի Սիթառոսա սրահին մէջ, աւելի քան 400 հանդիսատեսներու ներկայութեամբ տեղի ունեցաւ Արաքս ռատիօժամի յոբելենական համերգը:

Անգամ մը եւս ռատիոյի տնօրէն Տիէկօ Գարամանուկեանի, Մարիանա Գարամանուկեանի եւ Յովհաննէս Պոտուքեանի ռատիօհաղորդման նման վարուած համերգը ստացաւ հանդիսատեսներու բուռն ծափահարութիւնն ու ոգեւորող քաջալերութիւնը: Տասներկուերորդ տարեդարձը պսակուեցաւ պոլսահայ երգչուհի Սիպիլի ներկայութեամբ: Հարաւային Ամերիկայի մէջ շրջագայութիւն կատարող երգչուհիին հետ համերգին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ համայնքային ուժեր: Մաեսթրօ Ալվարօ Յակոբեանի տեղական ուժերով կազմած նուագախումբը, որուն միացաւ տուտուկահար Էտգար Մարգարեանը անգամ մը եւս հիացնելով հանդիսատեսը: Սիպիլի՝ հանրաճանաչ տաղանդի համերգին միացան նաեւ երիտասարդ եւ տաղանդաւոր երգչուհի Նեկտար Միրակեանը եւ Պուէնոս Այրէսէն ժամանած պարուհի Տէվորա Պալյեանը:

Սիպիլը Արաքս ռատիօժամի հրաւէրով Մօնթեվիտէօ ժամանեց Մարտ 16 ին, Գորտովա եւ Պուէնոս Այրես կատարած համերգներէն ետք:

Քաղաքի տեսարժան վայրերն ու հանրահայտ Արմէնիա հրապարակը այցելելէն վերջ, այդ երեկոյ, ՍԴՀԿ ի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ առաջին հանդիպումը Ուրուկուէյի հայութեան հետ: Ջերմ մթնոլորտի մէջ երգչուհին պատմեց պոլսահայ համայնքի եւ իր գեղարուեստական կեանքի մասին, թէ ինչպէս կրցաւ հասնիլ այն կարեւոր նպատակին, որն է Թուրքիոյ մէջ եւ Թուրք ունկնդիրներուն մօտ տարածել հայ երգը: Ապա ներկաները կրցան անձամբ զրուցել եւ լուսանկարուիլ երգչուհիին հետ:

Կիրակի առաւօտեան Սիպիլը ներկայ գտնուեցաւ Սուրբ Ներսէս եկեղեցւոյ մէջ: Իր խնդրանքով այդ օրը հոգեհանգստեան պաշտօնը նուիրուեցաւ վախճանեալ Պոլսոյ Պատրիարքին՝ Մեսրոպ Մութաֆեանի յիշատակին: Հաւատացեալները կրցան վայելել անոր կատարմամբ Տէր Ողորմեան:

Իր քարոզին մէջ Առաջնորդ Սրբազան՝ Տ Յակոբ Արքեպիսկոպոս Գլնճեան անդրադարձաւ Մեսրոպ Մութաֆեանի վաստակին եւ յոյս յայտնեց որ արժանապատիւ նոր պատրիարք կ'ընտրուի Պոլսոյ մէջ:

Կէսօրին երգչուհին այցելեց Արաքս ռատիօկայան եւ իր հրաւէրք ուղղեց ունկնդիրներուն:

Երկուշաբթի օրը առաւօտեան, ան հարցազրոյց ունեցաւ տեղւոյս La Tele CANAL 12 հեռուստատեսութեան կայանին մէջ իսկ կէսօրէն ետք այցելեց Նուպարեան Վարժարան, ուր հանդիպեցաւ Նուպարեան եւ Ներսէսեան վարժարաններու աշակերտութեան հետ:

Սիպիլը ընդունեց նաեւ Ուրուկուէյի Զբօսաշրջութեան Նախարար Լիլիամ Քեչիչեանը, որ բարձր գնահատեց երգչուհիին կատարած գործունէութիւնը: Սիպիլն իր հերթին փոխանցեց իր ստացած տպաւորութիւններն Ուրուկուէյի մասին եւ իր երախտագիտութիւնը յայտնեց ջերմ ընդունելութեան համար:

Սիպիլն այցելեց նաեւ Հայ Կաթոլիկ եկեղեցի, ուր երգչուհին դիմաւորեց վարդապետ Անթոնիօ Քեչիչեանը:

Երեքշաբթի, Նոր հարցազրոյց ունեցաւ Ազգային հեռուստատեսութեան TNU CANAL 5 կայանի Buscadores ծրագրին մէջ, ապա երեկոյեան համերգը□

Համերգի ընթացքին թատերասրահին մէջ իշխեց երգ, երաժշտութիւն, պար ու խօսք դարձած հայ ոգին, ազգասիրութեան ու հայրենասիրութեան նոր շունչ հաղորդելով ներկաներուն:

Համերգէն ետք ստեղծուած մթնոլորտէն ոգեւորուած Տիէկօ Գարամանուկեան նշեց, որ ունկնդիրներու պատասխանը ձեռնարկուած համերգին անգամ մը եւս ապացուցեց, որ տասներկու տարի առաջ սկսած մարտահրաւէրը, կը կատարէ իր առաքելութիւնը վառ պահելով հաղորդակցութիւնը, կիսելով երաժշտութիւն, տեղեկութիւն, աւանդոյթներն ու մշակոյթը. ներկայ գտնուելով եւ արձագանքելով հայութեան բոլոր կարեւոր ձեռնարկներուն, դառնալով կամուրջ գաղութի եւ հայրենիքի ու աշխարհասփիւռ միւս հայ համայնքներուն հետ: Տասերկու տարի շարունակ իր ունկնդիրներուն հետ կիսած է հայութիւնը՝ որպէս ինքնութիւն, եւ ապրելակերպ: Տասներկու տարիներու վառ ապրումներն էին, որ մարտ ամսուն միացան ռատիօի պատասխանատուներն ու ունկնդիրները միասին տօնելու երգով, պարով, Սիպիլի բացառիկ ներկայութեամբ եւ համայնքէն ծնունդ առած տաղանդներով, իր տարեդարձը զայն դարձնելով հայ երգի ու երաժշտութեան տօն:

ՌԱՏԻՕ ԱՐԱՔՍ

# Լիբանան
## Հանդիպում ՀՅԴ ԶՈՄ եւ ՍԴՀԿ ՏՈԵՄ-ի Միջեւ



Միջկուսակցական-ուսանողական յարաբերութիւնները ամրապնդելու նպատակով, ՀՅԴ Զաւարեան Ուսանողական Միութեան հրաւէրով, Երկուշաբթի, 18 Մարտ 2019-ին, հանդիպում կայացաւ ՀՅԴ ԶՈՄ-ի վարչութեան ու Քաղաքական Յարաբերական գրասենեակի եւ ՍԴՀԿ Տխրունի Ուսանողական Երիտասարդական Միութեան վարչութիւններու միջեւ, Աբրահամ Աչճեան Երիտասարդական Ուսանողական կեդրոնէն ներս:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան բազմաթիւ քաղաքական, գաղութային, ուսանողական եւ միութենական նիւթեր:

Հանդիպումը իր ջերմ մթնոլորտին մէջ տեւեց աւելի քան երկու ժամ, ուր նաեւ տեղի ունեցաւ աշխատանքներու եւ աշխատելաոճի փոխծանօթացում, ինչպէս նաեւ գաղափարներու եւ միտքերու փոխանակում:

Հանդիպումին մասնակիցները շեշտեցին երկխօսութեան եւ համագործակցութեան կարեւորութեան վրայ, ուր նաեւ պարզուեցաւ յարաբերութիւններու դրական մթնոլորտը գործնական դաշտ փոխանցելու տրամադրութիւնը:

# Գերմանիոյ Երկու Քաղաքներու Մէջ Հայկական Դպրոցներ Բացուած Են



2018 թուականի մարտ ամիսէն Գերմանիոյ մայրաքաղաք Պեռլինի մէջ գործող «Գիտելիք» հայկական դպրոցի հիմնադիրներ Լիլիթ Յակոբեանն ու Մասիս Առաքէլեանը Գերմանիոյ Մեքլնպուրկ-Ֆորպոմերն նահանգի Կրայֆսուալտ եւ Ռոսթոք ամենամեծ քաղաքներուն մէջ յունուարին բացած են «Գիտելիք» դպրոցի մասնաճիւղերը:

Այս քաղաքներուն մէջ հայկական կազմակերպութիւններ, միութիւններ չկան, իսկ այնտեղ ապրող հայերու շփումը կը սահմանափակուի միայն իրար հանդիպելու կամ տուն երթալու մակարդակով: Լիլիթն ու Մասիսն առաջինն են, որ այդ քաղաքներուն մէջ բացած են հայկական դպրոցներ, որ անոնք բացառիկ երեւոյթ կը համարեն: Նախ եւ առաջ տարածք տրամադրելու ակնկալիքով կապ հաստատած են քաղաքային իշխանութիւններուն հետ: Պատասխանը չէ ուշացած. գաղթականներու ընդելուզման պատասխանատուն, իբրեւ ազգային փոքրամասնութիւններու ներկայացուցիչներ, հայկական մշակոյթը տարածելու համար անոնց իր աջակցութիւնը յայտնած է:

«Զնայած հիմնադրումէն մէկ տարի անցած է, սակայն Պեռլինի մէջ գործող մեր դպրոցն արդէն կայացած է եւ բարի համբաւ ունի: Եւ այս քաղաքներուն մէջ ալ արձագանքը չուշացաւ: Տեղի հայերուն կողմէ դպրոց բանալու գաղափարը մեծ ոգեւորութեամբ եւ գրկաբաց ընդունուեցաւ: Ի հարկէ, դժուար աշխատանք կը կատարենք, սակայն պատասխանատուութեամբ կ'իրագործենք սկսած գործը՝ գիտակցելով օտար միջավայրի մէջ հայ երեխաներուն հայեցի կրթութիւն եւ դաստիարակութիւն տալու անհրաժեշտութիւնը»,-«Հայերն այսօր»-ին տեղեկացուց Մասիս Առաքէլեան:

Բարւօք եւ կոկիկ վիճակի մէջ գտնուող վարձակալած դասարաններուն մէջ Լիլիթն ու Մասիսը իւրաքանչիւր շաբաթ օր Պեռլինէն, հաշուի չառնելով հեռաւորութիւնը, կու գան՝ դասաւանդելու երեխաներուն: Լիլիթը հայերէն կը սորվեցնէ, Մասիսը՝ երգ, իսկ պարի դասընթացները համատեղ կը կազմակերպեն: Առաւօտեան Կրայֆսուալտի մէջ, ցերեկը՝ Ռոսթոքի մէջ կը կայանան դասերը:

Շար.ը էջ 16

# Արսէն Կիտուր (Ծննդեան 135 Ամեակին Առիթով)

ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ



*2018-ին տարի լրացաւ ծննդեան 135 ամեակը «Արարատ» օրաթերթի հիմնադիր սերունդի երախտաշատ խմբագիրներէն՝ Արսէն Կիտուրի (1883-1976): Ակնարկ մ՚իսկ անոր կեանքի երկար ու ձիգ տարիներուն վրայ, կը բաւէ տեսնելու թէ ինչպիսի՜ բեղուն եւ արդիւնալից գործիչ մը եղած է ան, ինչպիսի՜ բազմաոլորտ ծառայութիւններ մատուցած է հայ ժողովուրդին եւ թէ ինչպէ՛ս անվախօրէն գտնուած է հայոց պայքարի ամենաթէժ կէտերուն վրայ: Կրթական մշակ, թէ՛ ռազմական եւ թէ՛ հասարակական գործիչ, գաղափարախօս, քաղաքական դէմք, խմբագիր-հրապարակագիր, յուշագրող եւ պատմագիր:*

*Ա. Կիտուրեան ծնած է Պայազիտ քաղաքին մէջ (այժմ՝ Թուրքիա): Կը յաճախէ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանը, որ այդ տարիներուն, կովկասեան ազգային-ընկերային եռուն կեանքի իրադարձութիւններէն ազդուելով, կ՚ապրէր յեղափոխաշունչ մթնոլորտ մը, ուր սաներէն շատեր պիտի անդամագրուէին ազգային-յեղափոխական տարբեր կուսակցութեանց: Յարելով Հնչակեան շարժումին՝ 1905-ին կ՚անդամակցի անոր՝ ընդգրկուելով ուսանողական խլրտումներու մէջ: Այդ շրջանին, Հոգեւոր Ճեմարանի ղեկավարութիւնը, կը խրախուսէր եւ կը մղէր արեւմտահայ շրջանաւարտ սաները, որպէս գործիչներ ուղղուելու Արեւմտեան Հայաստանի տարբեր քաղաքներ, հոն զարկ տալու կրթական-լուսաւորական շարժումին՝ հեռագնայ յստակ նպատակներով (այս հեռատես եւ իրատես քաղաքականութեան ռահվիրան էր Խրիմեան Հայրիկ, որուն հետեւեցաւ նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Բ. Իզմիրլեան Հայրապետը):*

*1908-ին աւարտելէ ետք Ճեմարանը, կ՚անցնի Կ. Պոլիս, ուր 1909-1914 թուականներուն կը յաճախէ տեղւոյն Պետական Բարձրագոյն Ուսուցչանոցը: 1910-ին հիմնադիր անդամներէն կ՚ըլլայ Հնչակեան Կուսակցութեան «Կայծ» ուսանողական միութեան: Միութեան մէջ կ՚ընդգրկուէին երիտասարդ մտաւորական-գաղափարական տարրեր, որոնք յետագային պիտի ըլլային ակնառու գործիչներ: Խորքին մէջ, միութիւնը կուսակցութեան նոր ու խոստումնալից ուժերուն կերտումին հնոցն էր, մտաւորական սերուցք կերտելու դպրոցը, որ ցաւօք ընդհատուեցաւ Առաջին Աշխարհամարտին: Անոնք կը հրատարակեն «Կայծ» ընկերային-գիտական-գրական ամսաթերթը Ա. Կիտուրի, Գեղամ Վանիկեանի (Վանիկ) եւ Եդուարդ Ամատունիի խմբագրութեամբ: Հոն կ՚արծարծուէին գիտական ընկերվարութեան, քաղաքական եւ ազգային հրատապ հարցեր: «Կայծ»ի բովէն անցան բազմաթիւ ուժեր՝ Ա. Էլճանեան, Ժ. Միրզախանեան, Հ. Գալիկեան, Հ. Գալճեան եւ ուրիշներ: Յաճախակի դասախօսութիւններ կազմակերպելու կողքին, «Կայծ»ականներ կը հրատարակեն գաղափարախօսական-փիլիսոփայական գրքոյկներ, ինչպէս Ա. Կիտուրի «Պատմութեան Փիլիսոփայութիւնը» (1911) եւ «Պատմական Մաթերիալիզմ»ը (1914): Ա. Կիտուր միաժամանակ կ՚աշխատակցի Կ. Պոլսոյ հնչակեան մամուլին քաղաքական այժմէական նիւթերով: Այս ընթացքին իր մասնակցութիւնը կը բերէ Հնչակեան Կուսակցութեան Տաճկաստանի երեք պատգամաւորական ժողովներուն՝ 1910, 1912 եւ 1914 թուականներուն:*

*Առաջին Աշխարհամարտի նախօրէին, բոլոր համալսարանականներուն նման կը զօրակոչուի օսմանեան բանակ եւ կը հետեւի սպայից դպրոցի դասընթացքներուն: Երբ հնչակեան գործիչներ կը ձերբակալուէին, կուսակցութեան 7-րդ Կոստանցայի համագումարին որոշումներուն պատրուակով, ինք կ՚ըլլայ այն մարմնին անդամներէն մին, որուն նպատակն էր իրաւական միջոցներով փրկել ձերբակալեալ ընկերները: Մինչ Ազգային Իշխանութեան կողմէ կը նշանակուի Պալըքեսերի ազգային դպրոցի տնօրէն, օսմանեան կառավարութիւնը որպէս պետական հիմնարկէ ընթացաւարտ, զինք կը նշանակէ Պաղտատի պետական վարժարանի ուսուցիչ: Ան խառնակ եւ անորոշ այդ օրերուն, խոհեմութիւն կը նկատէ մեկնիլ Պաղտատ եւ կը սկսի պաշտօնավարել Սուլթանիէ դպրոցէն ներս: Շուտով կը սկսի մասնակցիլ նաեւ ազգային կեանքին՝ ընտրուելով Թաղական խորհուրդի անդամ եւ կը նշանակուի վերատեսուչ Թարգմանչաց դպրոցին:*

*Այստեղէն կը սկսի Ա. Կիտուրի կեանքի ոդիսականը: Որպէս հնչակեան, իթթիհատական լրտեսներու կողմէ կը հալածուի, կը ձերբակալուի եւ կը բանտարկուի 1915-ին: Սակայն, արաբ հակաթուրք ազգային տարրերու օժանդակութեամբ կը յաջողի փախչիլ բանտէն. կ՚օժանդակէ արաբական պայքարին, կը հասնի մինչեւ սուրիական անապատներ, ուր ականատես կ՚ըլլայ հայոց բեկորներու տառապալից կեանքին, սովամահութեանց, առեւանգումներուն եւ կոտորածներուն: Սերտ կապեր կը պահպանէ հիւսիսային Իրաք գտնուող եզտիներուն հետ, կը սիրաշահի անոնց ղեկավարութեան եւ կ՚ապահովէ հարիւրաւոր հայ ընտանիքներու փրկութիւնը, որոնք կ՚ապաստանէին եզտիաբնակ Սինճար շրջանի լեռները: Անոր այս գործունէութեան ոլորտը կը համարուի եթէ ոչ սկիզբը, այլ վստահաբար ամրապնդման օղակը հայ-եզտիական յարաբերութիւններուն:*

*Բարեբախտութիւն պէտք է նկատել այն հանգամանքը, որ ան իր յուշերը գրելով, այս ժամանակաշրջանի մասին գրաւոր ժառանգ ձգած է սերունդներուն («Յուշեր Ու Փուշեր» Պէյրութ, 1956), որոնց մէջ վկայութիւններ կան այդ շրջանի հայոց կապերուն շուրջ՝ արաբներու, եզտիներու եւ ասորիներու հետ, ինչպէս նաեւ այդ օրերու իրաքահայ գաղութին վերաբերեալ: Ի տես հայ խլեակներէ կազմուած դիակներու կոյտերու զարհուրելի պատկերին, ան կը գրէ. «Վերջին անգամ աչքերս դարձուցի Խապուրի եզերքին բլրացած ոսկորներուն եւ ուխտեցի թանկ ծախել անձս, մինչեւ որ կարենամ վրէժ լուծել դժբախտ ազգակիցներուն: Երկար ատեն ասիկա եղաւ իմ հանգանակը»: Ահա այս հոգեվիճակին մէջ, կարծէք կը վճռէ զէն ի ձեռին մարտնչիլ թշնամիին դէմ՝ ինչպէս որ պիտի տեսնենք յետագային: Այս դժուարին պայմաններուն պատճառով կը վարակուի մալարիայէ եւ հարկադրուած կը վերադառնայ Պաղտատ. կը մտնէ հիւանդանոց եւ ապաքինման շրջանէ մը ետք կ՚առողջանայ: Մինչ այդ, կացութիւնը աստիճանաբար կը փոխուի ի նպաստ արաբներու եւ արաբ մարտականներ կ՚ահաբեկեն Կիտուրի մղձաւանջ դարձած լրտես Թեւֆիքը, որ տակաւին կը շարունակէր հալածել իր թիրախը:*

*Հետզհետէ ան կը վերադառնայ իր սովորական կեանքին՝ մտնելով ազգային կեանքէ ներս: Զինք տագնապեցնող առաջին հարցը Միջագետքի անապատին մէջ վերապրած հայոց բեկորներն էին, որոնց հաւաքման եւ փրկութեան համար կը հիմնէ Միջագետքի Տարագրելոց Պաշտպան Մարմինը: Կը շարունակէ դասաւանդել Սուլթանիէ դպրոցէն ներս եւ կը վարէ Պաղտատի Ազգային վարժարանին տեսչութիւնը:*

*Կացութիւնը արմատապէս կը շրջուի, երբ Պաղտատ կ՚իյնայ անգլիական հակակշիռին տակ: 1917-ին թարգմանի պաշտօն կը կատարէ անգլիական բանակի հրամանատարին մօտ եւ կրնայ կապեր ստեղծել դէպի Պարսկաստան յառաջացած ռուսական բանակի ղեկավարութեան հետ: Իր նպատակին իրագործման համար կ՚անցնի ռուսական կողմ եւ արկածախնդրական ուղեւորութեամբ մը կը հասնի Կովկաս՝ Թիֆլիս եւ կը ներկայանայ հայոց ազգային կեանքին ղեկը ստանձնած Ազգային Բիւրոյին, որուն կը ներկայացնէ Միջագետքի հայոց անմխիթար վիճակը: Այս շրջանին կ՚ունենայ ազգային-ռազմական աշխոյժ գործունէութիւն. կը միանայ Արեւմտահայ Խորհուրդին եւ կը դառնայ անոր գործօն անդամներէն մին: Մինչ այդ, ռազմական գործողութիւններ կը ծաւալին Արեւմտեան Հայաստանի մէջ, երբ 1918-ին ռուսական զօրքերը կը քաշուէին ճակատներէն եւ թրքական բանակը լայնածիր արշաւանք կը շղթայազերծէր դէպի Արեւելեան Հայաստան: Գաղթականներ, փախուստ, հայ-թրքական ռազմական գործողու-*

Շար.ը էջ 19



# Պատկառելի 185-Ամեակ Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոց Ի Յիշատակ Մեսրոպ Հանգուցեալ Պատրիարքին Ետիգուլէ, Իսքանպուլ Հիմնադրուած 1834 Թուին



ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## Վախճանում Մեսրոպ Բ Պատրիարքի

*Անցեալ Կիրակի Մարտի 17-ին Կ. Պոլսոյ Ս. Աստուածածին Մայր Եկեղեցւոյ մէջ վախճանեալ Ամենապատիւ Տ. Մեսրոպ Բ Պատրիարք Մութաֆեանի մեծաշուք յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ, ու վերջին Օծումը կատարուեցաւ ձեռամբ Երուսաղէմի Հայոց Ամենապատիւ Նուրհան Պատրիարք Մանուկեանի: Եկեղեցիէն ներս եւ դուրս ծովածաւալ եւ աննախընթաց բազմութիւնը եկած էր հրաժեշտ առնելու տարաբախտ Սրբազան Պատրիարքէն որ տասնամեակ մը ամբողջ գգայազիրկ հիւանդութեան մատնուած կը մնար Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի բժիշկներու խնամքին տակ: Տաս տարիներ երկարաձգել կեանք մը անկողնոյ մէջ հրաշքի համազօր երեւոյթ մը դարձաւ ինձ համար, թէ մէկ կողմէն ինչպէս ապրեցուցին զինք, մինչ միւս կողմէն խորին հաւատքով եւ ազգին միասնական աղօթքներով բոլորս Պատրիարք Հօր առողջութիւն հայցեցինք Ամենակալէն:*

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսին երեք Սրբազան Հայրեր մասնակցեցան յուղարկաւորութեան, ինչպէս նաեւ երկու Սրբազան Հայրեր՝ յանուն Կիլիկիոյ Կաթողիկոսին: Զգայուն եւ համապարփակ դամբանական մը կարդաց Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ Արամ Արքեպիսկոպոս Աթէշեան: Հայաշխարհն ամբողջ կը հետեւէր Ամենապատիւ Մեսրոպ Բ Մութաֆեան Պատրիարք Հօր առողջական վիճակին որ յայտնապէս չտեսնուած հիւանդութեան մը զոհը կը դառնար օր ըստ օրէ: Սակայն անդարմանելին եղաւ նաեւ այն որ Պատրիարք Սրբազանը տաս տարիներ անկողնոյ ծառայելով Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոցին մէջ, ետին ձգեց նոյնքան անդարմանելի Հայոց Պատրիարքութեան աննախընթաց տասնամեայ թնճուկը, մինչ ինք Ազգային Հիւանդանոցին մէջ, Պատրիարքարանը ամէն կարելի միջոց օգտագործել ջանալով կը մնար առանց Պատրիարքի, նոյնիսկ Տեղապահ մըն ալ ընտրելով ըստ կանոնի: Սակայն ամէն ինչ պետութեան մականին ներքեւ մնալով, նորընտիր Պատրիարքի կարելիութիւնը մնաց անգործադրելի:*

*Ի յիշատակ պոլսահայութեան ամենասիրելի Պատրիարք Հօր, երախտագիտութեամբ սոյն գրութիւնը կ՚ընծայեմ ի պատիւ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին որուն հիմնադրութեան 185-ամեակը կը նշէ Պոլսահայութիւնը այս տարի, վաստակաւոր ու հայ ազգին իսկական պատիւ բերող հաստատութիւն մը, որ անբաղդատելի կրնայ նկատուիլ սփիւռքահայ պատմութեան մէջ, անցեալին ու ներկային, իր երկարակեցութեամբ եւ անհուն բարիքներով: Երջանկայիշատակ Մեսրոպ Բ Պատրիարքի հոգին թող լոյսերու մէջ հանգչի եւ Ազգային Հիւանդանոցի բարերար հաստատութիւնը շողայ կենարար եւ կենդանարար լոյսերով ի փառս հայ ազգին որուն անունն ու մականունը արդարօրէն ու բարձրաձայն կը կրէ իր վրայ:*

## Այցելութիւն

*1955 Թուի ամրան, տակաւին նորընծայ հոգեւորական, այցելութեան գացի Իսթանպուլ մեծ մօրեղբօրս Մկրտիչ Դերձակեանի եւ ընտանիքին հիւրընկալութեամբ: Հինգ տարի ետք կրկին այցելեցի, եւ երկու առիթներով ալ աջը առի ծերունազարդ Գարեգին Պատրիարք Խաչատուրեանի: Մեծ մօրեղբայրս առաջնորդեց զիս թէ՛ Պատրիարքարան եւ թէ՛ Ս. Փրկիչ Ազգային Հիւաղանոց, որուն յայտնի բարերաներէն մին եղած էր նաեւ ինք: Հիացումի առիթ ընծայած էր ինծի Ազգային Հիւանդանոցին ընդարձակ համալիրը, եւ որպէս այցելու իմ տպաւորութիւնները արձանագրած եմ այցելուներու մատեանին մէջ երկիցս՝ 1955-ին եւ 1960-ին:*

## Հիւանդանոցին Կառուցումը

*Թուրքիոյ հայութեան արդար հպարտութեան արժանի եղած է միշտ Ետիգուլէի Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը իր տիպար անունով եւ ազգանունով, որ հիմնադրուած է 1834 Թուին բարերար Գազազ Յարութիւն Ամիրա Պէզճեանի կողմէ: Այս տարի Հիւանդանոցը 185 տարիքը կը բոլորէ ըլլալով արժանի, աշխոյժ, եւ օրինակելի գործունէութեամբ յուշակոթող մը Թրքահայ համայնքին եւ զայն հովանաւորող Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան, որոնց շարունակական խնամքին յանձնուած պատկառելի հաստատութիւն մը եղաւ: Հայրենիքէն դուրս դժուար թէ հայկական համայնք մը կարողացած ըլլայ հասնիլ նման մարդասիրական նախաձեռնութեան: Ազգային Հիւանդանոցին համազօր կը կանգնի այսօր Հարաւային Գալիֆորնիոյ Արարատ Տարեցներու Տունն ու հիւանդներու բաժինը ուր կան այժմէական մասնագիտական բոլոր հոգատարութիւնները երկու թեւերու վրայ սփռուած, տարեցներու եւ հիւանդներու յատուկ: Այս հաստատութիւնը եւս օժտուած է մատուռով մը ուր ստէպ Ս. Պատարագ եւ ժամապաշտութիւն կը կատարուի շրջանի հայ եկեղեցական թեմերէն անխտիր:*

*Տարիներու ընթացքին, ինչպէս նկատեցի նուիրատուութեանց յուշատախտակներէն, բարերարներու շարքը անպակաս եղած է, նոյնպէս բազմաթիւ հիւանդներու թիւով, ըլլալով նաեւ բարերար եւ մխիթարական, եւ իսկական աղբիւր անսպառ բարեաց: Իսթանպուլի եկեղեցասէր հայութիւնը, ի պատիւ իրենց, քրիստոնէական պարտք համարած է նիւթական լայն օժանդակութիւն հասցնել Ազգային Հիւանդանոցին պահել կարենալու համար զայն յաչս պետութեան եւ անոր ակնկալութեանց մինչեւ այսօր: Ի պատիւ պոլսահայութեան հարկ է կրկին հաստատել որ հայկական գլխաւոր հիւանդանոցի մը երկար տարիներու պահպանումը որպէս կենսական հաստատութիւն իր որակաւոր բարձրութեամբ, մարդասիրական պարտականութեանց գերազանց երաշխիքը կրնար տալ բոլոր գաղութին իրենց ընձեռած առատաձեռն օժանդակութեան համար:*

## Համալիրը

*Իսթանպուլի Ետիգուլէ թաղամասի արեւմտեան կողմը, սկզբնական իր 22.000 քառակուսի մեթր տարածութեան մը վրայ հաստատ կանգնած է Ս. Փրկիչ հիւանդանոցը տասնեւհինգ շէնքերով եւ օրհնաբեր մատուռով մը, իր երկու գլխաւոր բաժիններով՝ Հիւանդանոցի եւ Պատսպարանի: Հիւանդանոցի բաժինը իր կարգին ունի 20-է աւելի այլազան հիւանդութեանց քննութեան յատուկ դարմանատուներ, տաս յարկաբաժիններ 300-ի չափ անկողիններով: Մասնաբաժինները ներքին եւ արտաքին հիւանդութեանց, ինչպէս նաեւ մանուկներու, կուրծքի եւ թոքերու հիւանդութեանց յատուկ, առաւել մտային եւ հոգեկան հիւանդութեանց, ինչպէս յաճախ կը կարդանք «Սուրբ Փրկիչ» ամսագրի համարներուն մէջ: Բոլորն ալ մասնագէտ բժիշկներու խնամքին յանձնուած:*

## Օժանդակ Բաժիններ

*Հիւանդանոցին յարակից կան նաեւ տասը բժշկական օժանդակ բաժիններ՝ վիրաբուժական գործողութեանց, տարրալուծարաններ, «Ք» ճառագայթի յարկաբաժին, մարմնակրթանքի բաժին եւ դեղարան: Հիւանդանոցին պատսպարանի բաժինը ունի երեք գլխաւոր մասեր՝ Ծերանոց, Հինդլեան Յարկաբաժին, Գազանճեան Հանգստարան: Ծերանոց կ՚ընդունուին անոնք որոնք թաղային խորհուրդներէն, հիւանդանոցին օժանդակ մարմիններէն, եւ կամ աղքատախնամ վարչութիւններէն կը յանձնարարուին, մանրամասնօրէն քննութենէ անցնելէ ետք որպէս պատսպարուելու կարիքը ունեցող ծերեր, աղքատներ, անօգնականներ, ու հոն կ՚ապրին ցկեանս: Հինդլեան Յարկաբաժինը իրականին մէջ անկելանոց մըն է ուր կը պատսպարուին հիւանդ եւ անկար ծերեր ու անբուժելի հիւանդներ: Գազանճեան Հանգստարանին մէջ կը պատսպարուին վճարովի ծերեր, բարերարներ ու մտաւորականներ, որոնք կամ ծեր եւ կամ հիւանդ ըլլալնուն համար կ՚ընդունուին:*

*Քառասուն տարիներ առաջ հիմնական նորոգութիւններ եւ յաւելումներ կատարուած են իւրաքանչիւր բաժնի մէջ: Աւելի կանուխ, 1965-էն սկսեալ, եւ ապա 1969-1973 տարիներուն շինարարական յաւելումներ կատարուած են, որոնց մէջ կարեւոր բաժին մը վերցուցած է Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկը, «որուն լայն յատկացումներով հիւանդանոցը օժտուած է բազմատեսակ եւ արդիական գործիքներով, որոնք մեծապէս նպաստած են հիւանդանոցի վերելքին», ինչպէս կը կարդանք «Շողակաթ» պարբերա-թերթի 1973 Թուականի համարին մէջ: Մօտաւոր անցեալին Ս Փրկիչ Հիւանդանոցը մէկ տարուան մէջ ընդունած է ընդհանուր թիւով 110,000 հիւանդներ եւ պատսպարեալներ: Նոյն ատեն բժիշկներու թիւը անցած է 50-ը, եւ մնացեալ անձնակազմը՝ ատամնաբոյժ, դեղագործ եւ գիտաշխատող՝ դարձեալ 50:*

## Հիւանդանոցին Մատուռը

*Ս. Փրկիչ Հիւանդանոցը օրհնուած է գողտրիկ քարաշէն մատուռով մը՝ փայտաշէն հին մատուռին տեղ, որ Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի օրով կառուցուեցաւ եւ 1906 Թուին օծուեցաւ: Համբարձման տօնը մեծահանդէս կը տօնուի ամէն տարի սոյն մատրան մէջ ուխտաւորներու եւ հաւատացեալներու ներկայութեամբ: Մատուռը ունի իր մնայուն քահանան: Ս. Փրկիչ Հիւանդանոցը տարիներէ ի վեր կը հրատարակէ «Սուրբ Փրկիչ» ամսագիրը 1949 Սեպտեմբերէն սկսեալ, որմէ առաջ «Ընդարձակ Օրացոյց»ներ կը հրատարակուէին: Ամսագրին նպատակը եղած է «Գթութեան տան հետ համայնքի սրտին եւ հոգիի կապը ամրապնդել, իրազեկ դարձնել զայն անցուդարձերուն, բազմատեսակ բժշկագիտական գիտելիքներով»: Սոյն գրութիւնը պատրաստեցի յիշեալ ամսագրի հերթական թիւերու տուեալներուն վրայ:*

## Պատրիարքարանն ու Հիւանդանոցը

*Սոյն երկու մեծ հաստատութեանց գոյակցութիւնը յաչս Օսմանեան եւ ապա Հանրապետական Թուրք պետութեանց մնացած է միշտ ապահով եւ յարգալից, նկատի ունենալով որ միայն հայեր չեն որ հիւանդանոց ընդունուած են, այլ նաեւ երկրին հպատակները անխտիր: Հիւանդանոցի բարելաւման ու մշտական գործունէութեան հսկողները եղած են հոգաբարձական կազմի բժշկական եւ պետութեան մօտ վստահելի ու անուանի անձեր որոնք միշտ հաստատ յարաբերութեան մէջ եղած են թէ պետութեան եւ թէ Պատրիարքարանին հետ: Անկասկած, Հիւանդանոցը որպէս հայկական ազգային հաստատութիւն Թուրք պետական մականին ներքեւ, երկար տարիներու բարուոք եւ բարձրօրակ գործունէութեամբ յաչս պետութեան շատ կարեւոր եւ անհրաժեշտ հիմնարկ մը պէտք է նկատուի, որուն համար*

Շար.ը էջ 16

## Հայ Բժիշկները Փրկած են Երկու Տարեկան Սուրիահայ Երեխային Կեանքը



«Սուրբ Աստուածամայր» բժշկական կեդրոնի բժիշկները փրկած են սուրիահայ Գէորգեաններու երկամեայ զաւկի կեանքը, որ հիւանդանոց տեղափոխուած էր գլխուղեղի ծանր վնասուածքով. երեխային ապրելու հնարաւորութիւնը գնահատուած էր ընդամէնը 1 տոկոս: Այս մասին «Արմէնպրես»-ին տեղեկացուցին Երեւանի քաղաքապետարանի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութենէն:

Հաղորդագրութեան մէջ նշուած է. «Սուրիահայ Գեւոներու՝ Գէորգեաններու ընտանիքը 6 տարի առաջ գաղթեց Հայաստան: Հէնց այստեղ ալ ծնաւ անոնց երկրորդ ու երկար սպասուած երեխան: 2-ամեայ Նարեկը երեք ամիս առաջ տունին մէջ սայլակէն վար կ՛իյնայ եւ կը կորսնցնէ գիտակցութիւնը: Երեխան շտապօգնութիւնը կը տեղափոխէ Երեւանի քաղաքապետարանի ենթակայութեան «Սուրբ Աստուածամայր», բժշկական կեդրոն:

«Երեխան անյաջող կերպով ինկած եւ ծայրայեղ ծանր վիճակի մէջ էր: Գանգուղեղին մէջ կամրջային երակները կտրուած էին եւ ծաւալային արիւնազեղում՝ (հեմատոմա) յառաջացուցած», - կը նշէ բժշկական կեդրոնի վիրաբուժական բաժանմունքի վարիչ Մարգար Մարտիրոսեան:

Հիւանդանոց տեղափոխուելու օրը աւելի քան 3 ժամ տեւողութեամբ բարդ վիրահատութիւնը յաջող անցաւ, թէեւ երեխայի ապրելու հնարաւորութիւնը կը գնահատուէր ընդամէնը 1 տոկոս:

«Բաւական լայն մուտք կատարուեցաւ, հեռացուեցաւ արիւնակոյտը: Մենք կը հասկնայինք, որ եղածը բաւարար չէ, եւ հնարաւոր է ուղեղի այտուց յառաջանայ: Ատոր համար հեռացուած ոսկրային մասը սառեցուեցաւ եւ պահուեցաւ», - կը նշէ Մարգար Մարտիրոսեան:

«Բժիշկները շատ չեն ըսեր, որ կը հաւատան հրաշքներու, բայց այս պարագային իսկապէս բժշկական հրաշք էր»,- կը նշէ «Սուրբ Աստուածամայր» բժշկական կեդրոնի տնօրէն Նիկոլա Դալլաքեան:

Բժիշկները յաղթեցին, բայց կեանքի համար պայքարը շարունակուեցաւ նաեւ յաջորդող երեք շաբաթներուն:

«Երկար ժամանակ՝ մօտ 20 օր, երեխան վերակենդանացման բաժանմունքի մէջ էր՝ արհեստական շնչառութեամբ: Չէր տեսներ, չէր զգար եւ չէր արձագանքեր: Մասնագէտներու աջակցութեամբ հետզհետէ այդ ամէնը յաղթահարեցինք», . կը նշէ Նարեկին հայրը՝ Ներսէս Գեւոն:

«Բժիշկներուն շնորհիւ երեխաս 2-րդ ծնունդ ունեցաւ: Մենք ընդհանրապէս յոյս չունէինք, որ ինք կը վերականգնուի: Կ՛ըսէին՝ կրնայ փրկուիլ, բայց ոչ լիարժէք եւ հաշմանդամ կ՛ըլլայ, բայց ոչ, արդիւնքը կը տեսնենք»,- կը նշէ երեխային մայրը՝ Աստղիկ Մուրատեանը:

Ապաքինման դրական փոփոխութիւնները տեսանելի էին ամէն օր: Սակայն բժիշկներուն համար Նարեկի պատմութիւնն աւարտուած չէր: Մարտ 7-ին կատարուեցաւ երկրորդ վիրահատութիւնը եւ գանգոսկրի հեռացուած հատուածը վերատեղադրուեցաւ:

Այսօր Նարեկն արդէն կը ժպտի, կը հասկնայ ամէն ինչ ու կը փորձէ խօսիլ:

«Նարեկն իմ այն առաջին հիւանդներէն է, որ հրաշքով փրկուած է: Կրնամ վստահօրէն ըսել, որ այս արդիւնքին մէջ շատ մեծ դեր խաղցած է հաւատքը: Հիմա արդէն կը պայքարինք կեանքի որակի համար»,- կ՛ըսէ վիրաբոյժ Նաւա Լալազարեան:

Բժիշկները վստահ են, որ վերականգնողական կեդրոններուն մէջ բուժումը շարունակելէ յետոյ Նարեկը կրնայ լիարժէքօրէն կեանք վերադառնալ:

Նարեկի պատմութիւնը մէկն է այն հարիւրաւորներէն, որոնց մասին քիչերը գիտեն: «Սուրբ Աստուածամայր» բժշկական կեդրոնի անձնակազմը կը պայքարի ու բժշկական հրաշքներ կը գործէ:

«Բժշկական կեդրոնն ամէն տարի կը սպասարկէ աւելի քան 10 հազար երեխայի: Քառակի, հնգակի աւելի է բուժարաններու ծառայութիւններէն օգտուողներու թիւը», - կը նկատէ Նիկոլա Դալլաքեան:

## ՀՀ Կեդրոնական Դրամատունը Շրջանառութեան Մէջ Դրած է «Գալուստ Կիւլպէնկեան-150» Ոսկէ Յուշադրամը




Հայաստանի Հանրապետութեան կեդրոնական դրամատունը Մարտ 22-էն շրջանառութեան մէջ դրաւ «Գալուստ Կիւլպէնկեան-150» ոսկէ յուշադրամը: Այս մասին կը յայտնէ ՀՀ կեդրոնական դրամատան մամլոյ ծառայութիւնը:

Յուշադրամի դիմերեսի նկարին հեղինակը Յարութիւն Սամուէլեանն է, իսկ դարձերեսին՝ Վարդան Վարդանեանը:

Յուշադրամը հատուած է Լիթվայի դրամահատարանին մէջ:

Կիւլպէնկեանի կտակի համաձայն՝ 1956-ին Լիզպոնի մէջ հիմնուած է «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնադրամը, որ ֆինանսական մեծ աջակցութիւն կը տրամադրէ Սփիւռքի հայ մշակութային միութիւններուն, հայկական դպրոցներուն եւ հոգեւոր հաստատութիւններուն, կրթաթոշակներ՝ հայ աշակերտներուն եւ ուսանողներուն:

Կիւլպէնկեան ձեռք բերած է արուեստի գործերու, մետաղադրամներու եւ արուեստագիտական գիրքերու հարուստ հաւաքածոյ, որ այժմ ներկայացուած է Լիզպոնի՝ աշխարհի բացառիկ՝ Գալուստ Կիւլպէնկեանի թանգարանի ցուցասրահներուն մէջ:

## Համահայկական 7-րդ Խաղերը Տեղի Պիտի Ունենան 5-էն 17 Օգոստոս

Փոխվարչապետ Տիգրան Աւինեանի գլխաւորութեամբ՝ Մարտ 19-ին տեղի ունեցաւ Համահայկական եօթերորդ խաղերը կազմակերպող կոմիտէի նիստը: Նիստին ընթացքին քննարկուեցան խաղերու կազմակերպման վերաբերող զանազան հարցեր, կը հաղորդէ "Արմէնփրես":

Համահայկական եօթներորդ խաղերը տեղի պիտի ունենան 5-էն 17 Օգոստոս: Բացման հանդիսաւոր արարողութիւնը տեղի պիտի ունենայ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ:

Այս տարի կը լրանայ խաղերուն կազմակերպման քսանամեակը եւ կ՛ակնկալուի մարզիկներու աննախադէպ մասնակցութիւն, որուն մասին կը վկայէ նախնական դիմումներու մեծ թիւը: Նշենք, որ ծրագիրին մէջ ընդգրկուած են 17 մարզաձեւեր:

## Պատկառելի 185-Ամեակ

Շարունակուած էջ 15-էն

եւս ընտրանի եւ պատասխանատու բժիշկներ եւ ազգայիններ, իրենց որակաւոր ու մասնագիտական տաւեաններով, եւ պոլսահայութեան շարունակական նիւթական աջակցութեամբ ամէն ապահովութիւն ընծայած են Հիւանդանոցին պետութեան հայեացքին ներքեւ:

## Գերմանիոյ Երկու Քաղաքներու Մէջ

Շարունակուած էջ 13-էն

Մասիս Առաքէլեան յոյս յայտնեց, որ աստիճանաբար իրենց գործունէութիւնը կ՛աշխուժացնեն եւ նոր ծիլեր կու տան, քանի որ շփուելով երեխաներու հետ՝ կը հասկնան, որ մեծ ցանկութիւն ունին հայերէն սորվելու եւ անհամբերութեամբ կը սպասեն հանդիպումներուն: անոնցմէ շատերը նոյնիսկ չեն գիտեր, թէ ուր կը գտնուի Հայաստանը, ինչ պատմութեան եւ մշակոյթի կրողներ են:

«Սփիւռքի մէջ հայ երեխաներուն գրաճանաչ դարձնելու, հայերէն խօսիլ սորվեցնելու ամէնօրեայ պայքարի մէջ կը գտնուինք: Աշակերտները հայերէնի տիրապետման տարբեր մակարդակի են, անոնց մէկ մասն ալ գրեթէ հայերէն գրել-կարդալ չի գիտեր: Մենք նաեւ հոգեբանական աշխատանք կը տանինք աշակերտներուն հետ: Պատկերացուցէք, ականատես կ՛ըլլանք այն փաստին, որ հայ երեխան սեփական լեզուն չիմանալու պատճառով դասի ժամանակ կ՛արտասուէ: Թէեւ դժուարին իրավիճակի մէջ կը յայտնուինք, սակայն կեդրոնացնելով ուժերը՝ կը շարունակենք դասաժամը»,-ըսաւ Լիլիթ Յակոբեան:

Աւելցնենք, որ «Գիտելիք» դպրոցի բոլոր մասնաճիւղերուն մէջ կը յաճախեն 70 աշակերտ: Սեպտեմբեր ամսուն դպրոցը մշակութային փառատօնի մասնակցելու հրաւէր ստացած է, ուր Գերմանիոյ տարբեր քաղաքներու մէջ ապրող ազգերը պիտի ներկայացնեն իրենց երկրի մշակոյթը: Արդէն որոշուած է, որ երեք դպրոցներու աշակերտները պէտք է համերգային ծրագիրով՝ երգ ու պարով օտարներուն հաղորդակից դարձնեն մեր ազգային-մշակութային արժէքներուն:

Գէորգ Ջիչեան

www.massispost.com

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Հայաստանի Հաւաքականը Մեկնարկային Խաղում Պարտուեց Պոսնիա եւ Հերցեգովինային




Եւրօ-2020-ի ընտրական փուլի առաջին խաղում Հայաստանի հաւաքականը հիւրընկալուելիս 2:1 հաշուով պարտութիւն կրեց Պոսնիա եւ Հերցեգովինայի ընտրանուց:

33-րդ րոպէին անկիւնայինի խաղարկումից յետոյ գլխի հարուածով հաշիւը բացեց տանտէրերի կիսապաշտպան Կրունիչը: 80-րդ րոպէին իր թիմի առաւելութիւնը կրկնապատկեց Միլոսեվիչը: Լրացուցիչ ժամանակում մրցավարը 11-մեթրանոց նշանակեց տանտէրերի դարպասին, որն անվրէպ իրացրեց Հենրիխ Մխիթարեանը, սակայն այն բաւարար չէր պարտութիւնից խուսափելու համար:

Այսպիսով, Հաճաստանւ ընտրանին մրցաշարում մեկնարկում է պարտութեամբ: Առաջին տուրից յետոյ J խմբի մրցաշարային աղիւսակը 3 միաւորով գլխաւորում են Իտալիայի, Յունաստանի ու Պոսնիա եւ Հերցեգովինայի հաւաքականները:

## «Ռեալ»-ը, «Բաւարիա»-ն, «Արսենալ»-ն ու եւս 9 Ակումբ կը Մասնակցի International Champions Cup-2019-ին

International Champions Cup-2019-ին կը մասնակցեն 12 ակումբներ: Այս մասին հաղորդում է մրցաշարի թուիթերեան էջը:

Հանդիպումները կը կայանան ԱՄՆ-ում, Եւրոպայում եւ Ասիայում:

Մասնակիցներն են Մադրիդի «Ռեալ»-ը, «Միլան»-ը, «Բենֆիկա»-ն, «Մանչեսթեր Եունայթեդ»-ը, «Բաւարիա»-ն, «Արսենալ»-ը, «Եուվենթուս»-ը, «Տոտենհեմ»-ը, «Ինտեր»-ը, «Ատլետիկօ»-ն, «Ռոմա»-ն եւ մեքսիկական «Գուադալախարա»-ն:

## «Չելսի»-ի Երկրպագուները Մտադիր են Պոյկոտել Տնային Հանդիպումները

«Չելսի»-ի երկրպագուները մտադիր են բոյկոտել տնային հանդիպումները, տեղեկացնում է Football Italia-ը:

Աղբիւրի հաղորդմամբ, այդպիսով նրանք ցանկանում են ակումբի ղեկավարութիւնից պահանջել թիմի գլխաւոր մարզիչ Մաուրիցիօ Սարրիի հրաժարականը:

Յայտնի է դարձել, որ աւելի քան 400 երկրպագու հետ է տուել «Վեստ Հեմ»-ի դէմ հանդիպման տոմսերը, 700-ն էլ մտափոխուել է ու չի ներկայանայ «Բարնլի»-ի դէմ խաղին:

Պրեմիեր լիգայի 30 տուրից յետոյ «ազնուականներ»-ը զբաղեցնում է մրցաշարային աղիւսակի 6-րդ հորիզոնականը:

## Մբապեն Մադրիդի «Ռեալ»-ի Գլխաւոր Տրանսֆերային Նպատակն է

ՊՍԺ-ի յարձակուող Կիլիան Մբապեն կարող է կարիերան շարունակել Սպանիայում, հաղորդում է AS-ը:

Սպանական պարբերականը ճշտել է, որ ֆրանսացու տրանսֆերի ձեռք բերումը «արքայական» ակումբի գլխաւոր նպատակն է ամառային տրանսֆերային պատուհանի համար:

Նշւում է, որ «սերուցքայիններ»-ի նախագահ Ֆլորենտինօ Պերեսը կազմի վերակառուցման գործընթաց է սկսում ու թիմի գլխաւոր մարզիչ Զինեդին Զիդանին թոփ տրանսֆերներ է խոստացել:

Յայտնի է դարձել՝ 20-ամեայ ռմբարկուն դժգոհ է, որ փարիզեան ակումբը աւարտել է ելոյթները Ախոյեանների լիգայի մրցաշարում, իսկ ինքը տուգանուել է՝ «Մարսել»-ի դէմ նոյեմբերեան հանդիպման նախախաղեայ հաւաքին ուշացումով ներկայանալու համար: Տուգանքի չափը կազմել է 180 հազար եւրօ:

Յիշեցնենք, որ «Ռեալ»-ը մօտ էր Մբապեի տրանսֆերը ձեռք բերելուն 2017 թուականին, սակայն նա վերջին պահին Փարիզը գերադասեց Մադրիդից:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

## Օղակների Վրայ Արթուր Թովմասեանը 2-րդն է, Վահագն Դաւթեանը՝ 3-րդը




Դոհայում ընթացող մարմնամարզութեան աշխարհի գաւաթի խաղարկութիւնում Հայաստանի մարզիկներն առաջին մետալները նվաճեցին:

Օղակների վրայ վարժութիւնում Արթուր Թովմասեանը 14.833 միաւորով դարձաւ արծաթէ մետալակիր, իսկ մրցանակային 3-րդ տեղը գրաւեց նրա թիմակից Վահագն Դաւթեանը, որը ցոյց տուեց 14.825 արդիւնք: Այս մրցաձեւում յաղթեց չինացի մարմնամարզիկ Խինջիու Լանը:

Մարմնամարզիկ Արթուր Դաւթեանը պրոնզէ մետալ է նուաճել Դոհայում: հենացատկերի վարժութեան եզրափակիչում վաստակել է 14.695 միաւոր եւ զբաղեցրել մրցանակային 3-րդ տեղը: Նա հետ է մնացել կորեացի Հակ Սեոն Յանգից եւ ուկրաինացի Իգոր Ռադիվիլովից:

Այդպիսով, մեր մարմնամարզիկները Քաթարից կը վերադառնան երեք մետալներով:

## Լեռնադահուկորդ Աշոտ Կարապետեանը երկրորդ Տեղն է Գրաւել Թուրքիայում

Հայաստանի ներկայացուցիչ Աշոտ Կարապետեանը Թուրքիայում անցկացուած լեռնադահուկային սպորտի վարկանիշային մրցաշարում Մարտի 16-ին երկրորդ տեղն է գրաւել ոլորավայրէջքում: Այս մասին յայտնում են ՀԱՕԿ-ից:

Փհենչհանի 23-րդ ձմեռային Օլիմպիական խաղերի մասնակիցը 2.54 վայրկեան է զիջել առաջատարին:

Հայաստանի միւս ներկայացուցիչներից Արսէն Ղազարեանը գրաւել է 7-րդ տեղը, Ժիրայր Առաքելեանը՝ 13-րդ, իսկ Մայիս Եղիազարեանը՝ 14-րդ: Յարութիւն Յարութիւնեանը չի հատել եզրագիծը:

Հայ լեռնադահուկորդները ոլորավայրէջքում հանդէս են եկել նաեւ Մարտի 17-ին: Մրցաշարի երկրորդ օրն ամենայաջողը հանդէս եկել է Յարութիւն Յարութիւնեանը, որը գրաւել է չորրորդ տեղը՝ առաջատարին զիջելով 5.24 վայրկեան: Երկրորդ օրը Ժիրայր Առաքելեանը գրանցել է 16-րդ արդիւնքը, Աշոտ Կարապետեանը եւ Մայիս Եղիազարեանը չեն հատել եզրագիծը, իսկ Արսէն Ղազարեանը որակազրկուել է:

## Կնքուել է Սպորտի Պատմութեան Մէջ Ռեկորդային Պայմանագիրը

Ամերիկացի բեյսբոլիստ Մայք Թրաութը 430 միլիոն տոլարի 12 տարուայ պայմանագիր է կնքել «Լոս-Անճելոս Էնճըլս» ակումբի հետ: Պայմանագիրը ռեկորդային է դարձել սպորտի պատմութեան մէջ: Թրաութը տարեկան 36 միլիոն տոլար է ստանալու: Ներկայիս պայմանագիրը ակումբի հետ աւարտուելու է 2020 թուականին:

Նախկին ռեկորդը պատկանում է մէկ այլ պեյսպոլիստի՝ Ջակ Գրինկեին, որը տարեկան 34,4 միլիոն է վաստակում Արիզոնա Դայմոնդբեքսում:

27-ամեայ Թրաութը Լոս-Անճելոսի ակումբում է 2011 թուականից: Նա 7 անգամ մասնակցել է MLB-ի բոլոր աստղերի խաղին, երկու անգամ ճանաչուել է լիգայի լաւագոյն խաղացող:

2018-ի Յունիսին Ֆորբսը բռնցքամարտիկ Ֆլոյդ Մեյուեզերին ճանաչել էր ամենաբարձր վարձատրուող մարզիկ: 2017 թուականին նա վաստակել էր 285 միլիոն տոլար: Երկրորդ տեղում ֆուտպոլիստ Լիոնել Մեսսին է՝ 111 միլիոն, երրորդում՝ Քրիշտիանու Ռոնալդուն՝ 108 միլիոն տոլարով:

## Գրիզմանը Ցանկանում է Կարիերան Շարունակել «Բարսելոնա»-ում

Մադրիդի «Ատլետիկօ»-ի յարձակուող Անտուան Գրիզմանը մտադիր է ամռանը հեռանալ ակումբից: Այս մասին տեղեկացնում է El Mundo Deportivo-ն:

Աղբիւրի փոխանցմամբ՝ ֆրանսացին ցանկանում է կարիերան շարունակել «Բարսելոնա»-ում: Հաղորդւում է, որ խաղացողի ներկայացուցիչներն արդէն սկսել են բանակցութիւնները: Միեւնոյն ժամանակ կատալոնական ակումբն այլեւս չի հետաքրքրւում 27-ամեայ ֆուտպոլիստի ծառայութիւններով՝ չնայած նրան, որ ամրանը փորձում էր ամէն կերպ թիմ հրաւիրել նրան:

Յաւելենք, որ ըստ լրատուամիջոցների՝ Գրիզմանը զղջում է, որ նոր պայմանագիր է ստորագրել մադրիդեան ակումբի հետ:

# Վահան Շիրխանեանի Սենսացիոն Նամակը

Շարունակուած էջ 6-էն

*խնդրով քեզ վրայ գոռացել է Կարէն Դեմիրճեանը բոլորովին ոչ դիւանագիտական լեքսիկոնով եւ, դուռը շրխկացնելով, դուրս եկել քո աշխատասենեակից:*

*12. 1999 թ. Սեպտեմբերին Վազգէնի կառավարական բնակարանում յայտնաբերուեցին 8 ժուչոկներ: Հետեւութիւնը դու արա, թէ ինչպէ՞ս էին նրանք յայտնուել այնտեղ: Լսող սարքեր յայտնաբերուեցին նաեւ վարչապետի աշխատասենեակում:*

*13. 1999 թ. Սեպտեմբեր. ԱՄՆ այցը Վազգէնին մտահոգել էր եւս մէկ խնդրով: Նրան հրամցրել էին մի ցուցակ, որում տարբեր պանքերում անյայտ ծագումով լուրջ գումարներ ունեցող հայ պաշտօնեաներ էին եղել: Այն, որ նման մարդիկ Հայաստանում կային, ամբողջ ժողովուրդը գիտէր, բայց այն, որ այդ մասին ասել էր օտարը, նրան խորը վիրաւորել էր: Նա ինձ զգուշացրեց, որ ուղարկելու է ինձ մօտ մարդկանց, որոնք «կամաւոր» ներդրումներ են անելու արդիւնաբերութեան մէջ: Եկան քո ամենամտերիմ մարդիկ, որոնցից մէկը պարտաւորուեց ներդնել 200 մլն. տոլար՝ Սերժ Սարգսեանը, միւսը՝ 70, յաջորդը՝ 20: Նրանք գալիս էին վարչապետի մօտից քրտնած ու վախուորած: Վազգէնը սկսել էր թալանաթափութեան պրոցեսը, որը հասնելու էր նաեւ քեզ, բայց այն նոյնպէս խափանուեց Հոկտեմբերի 27-ով: Հարցին, թէ ո՞ւմ էր պէտք թալանած փողերի յետգանձման պրոցեսը ձախողել, միգուցէ ի՞նքդ պատասխանես:*

*14. 1999 թ. Հոկտեմբերի 27-ից մի քանի օր առաջ ես եւ Վազգէնը քեզ մօտ էինք՝ «Շողակն» գործարանի վաճառքը քննարկելու համար: Քո՝ Հայաստանի շահերին վնասող առաջարկը եւ պնդումը նրան այնքան զայրացրեց, որ նա քեզ ուղղակի հայհոյեց եւ ասաց՝ «ի՞նչ ես ուզում էս երկրից, ասա՝ տանք պրծնենք», ձեռը գցեց սեղանին, որ շուռ տա քեզ վրայ, բայց զսպեց իրեն: Քո տեսքը չնկարագրեմ, «միակ տղամարդուն» բոլորովին չէր սազում: Դու գրում ես, որ Վազգէնը քո ընկերն էր: Մարդկութեան պատմութիւնում չի եղել դէպք, որ գոռոզ ու ինքնահաւան մարդը ընկեր ունենայ, նրա շրջապատում կարող են լինել միայն քծնողներ, խլուրդներ, արժանապատուութիւնից զուրկ մարդիկ: Ասում ես՝ Լէոնարդը քո ընկերն էր, այդ դէպքում ինչո՞ւ եւ դու, եւ Սերժը արհամարհեցիք նրա իմաստուն խորհուրդը, աղերսանքը՝ չգնալ նախագահական պաշտօնի վրայ՝ ճշգրիտ կանխատեսելով, որ դա կը բերի խորը հակասութիւնների հայութեան երկու հատուածների միջեւ, ինչին մենք բոլորս ականատես եւ վնասների, կորուստների կրողներ եղանք:*

*15. Հոկտեմբերի 27-ին ես ԱԺ-ում էի, երբ դեռ լսւում էին կրակոցներ: Դահլիճում գտնուող Սմբատ Այվազեանից ճշտեցի իրավիճակը եւ անմիջապէս զանգեցի քո օգնական Ալիկին՝ յայտնելով, որ այդ տականքը դահլիճը կ՚ազատի միայն անձամբ քեզ հետ հանդիպելուց յետոյ: Այնուհետեւ զանգել եմ եւս չորս անգամ, քանի որ դու չէիր գալիս: Վերջապէս եկար երեքուկէս ժամ ուշացումով: Քո ուշացումը պայմանաւորուած էր հետեւեալով.*

*1. Վախենում էիր, որ Վազգէնի թիմը քեզ կ՚ոչնչացնի:*

*2. Սպասում էիր կատարուածի արձագանքին՝ յուսալով, որ ժողովուրդը ոճրագործին կը հերոսացնի:*

*3. Սպասում էիր գործողութեան շարունակութեանը՝ նոր ուժերի ներգրաւումով:*

*4. Յոյս ունէիր, որ Վազգէնի թիմը կը գրոհի դահլիճի վրայ, կ՚ոչնչացնի տականքներին, եւ դու կ՚ունենաս թիմը ոչնչացնելու բոլոր հիմքերը:*

*5. Հանդիպումդ տականքի հետ ուշացրիր 13 ժամ, որպէսզի նրանք արիւնաքամ լինեն, եւ եթէ նրանց մէջ լինէր վիրաւոր, փրկելու շանս չմնար: Նման հաշուարկ կարող էիր անել միայն դու:*

*16. Ուշացման այս բոլոր պատճառները եղել են միասնաբար, եւ դու քո ուշացումով սպանեցիր նրանց բոլորին՝ յոյս չթողնելով որեւէ մէկի փրկութեան համար: ԱԺ գալուց յետոյ եւս 9 ժամ սպասեցիր ու նոր միայն հանդիպեցիր վիժուածքին: Ո՞վ էր խաղում զոհերի արեան վրայ՝ իմ ցուցա՞կը, թէ՞ անձամբ դու:*

*17. Երբ դու եկար, ԱԺ-ում իրավիճակը վաղուց եւ լիովին վերահսկում էր Ռազմական ոստիկանութիւնը, եւ քո նկարագրած «խառնաշփոթը» բացայայտ սուտ է: Ինձ, Ջհանգիրեանին եւ Գորիկ Յակոբեանին հրաւիրեցիր Դեմիրճեանի աշխատասենեակ, որտեղ Գորիկ Յակոբեանը քեզ ներկայացրեց ԱԱԾ գործակալ Նայիրի Յունանեանի օպերատիւ գործի թղթապանակը, որը գործին կցելու Ջհանգիրեանի բոլոր յետագայ պահանջները մերժուեցին՝ ԱԱԾ-ի կողմից «նման գործ գոյութիւն չունի» պատճառաբանութեամբ: Միգուցէ յայտնե՞ս, թէ ո՞վ հրահանգեց ոչնչացնել այդ գործը, որը մենք չորս զոյգ աչքերով տեսանք Կարէն Դեմիրճեանի աշխատասենեակի սեղանին:*

*18. «Ալֆա» ստորաբաժանման մասին: «Մի ժամից ինձ զեկուցեցին, որ սպասում են Ռուսաստանից «Ալֆա» ստորաբաժանման ժամանելուն, որը գալիս էր Ելցինի յանձնարարութեամբ: Կարգադրեցի նրանց մեր յատուկ ջոկատայինների հետ տեղաւորել ազգային անվտանգութիւնում»: Նորից ստում ես: Դու ինքդ էիր խնդրել Ելցինին, որ օգնի, բայց դու «Ալֆա» չես տեսել, չես խօսել, չես տեղաւորել, քո մարդկանցից ոչ ոք նրանց հետ չի շփուել, որովհետեւ մենք այդ հնարաւորութիւնները փակել էինք, նրանք անմիջապէս անցել են Վաղարշակ Յարութիւնեանի ենթակայութեան տակ եւ յաջորդ օրը է վերադարձել Մոսկուա: Դու, իհարկէ, շատ կ՚ուզենայիր, որ «Ալֆա»-ն գրոհի ԱԺ դահլիճի վրայ, ոչնչացնի ոճրագործներին, ձեռի հետ նաեւ մի քանի ուրիշներին, որից յետոյ ամբողջ աշխարհը Հոկտեմբերի 27-ի համար մեղադրելու էր ռուսներին, եւ այլեւս ոչ ոք իրական կազմակերպիչներին չէր որոնելու: Ինչ խօսք, փայլուն ու նորից՝ թրքաբարոյ պլան էր:*

*19. ԱԺ գալուց 9 ժամ անց հանդիպեցիր ոճրագործին, ազգի դաւաճանին՝ խախտելով նման դէպքերի համար գոյութիւն ունեցող բոլոր կանոնները՝ առանց ձայնագրման եւ առանց վկայի, բայց քո «դարի ստեղծագործութիւնում» կայ մի պարբերութիւն, որը, կամ չես կարդացել, կամ չես հասկացել: «Անսահման ու չիրացուած յաւակնութիւնների տէր մարդ լինելով, համարելով, որ շատ աւելիին էր արժանի՝ Յունանեանն իր անյաջողութիւնները բացատրում էր նրանով, որ «նեխած համակարգն» իրեն ճանապարհ չի տալիս: Ինքն իրեն համոզել էր, որ իշխանութիւնը նպատակաուղղուած խանգարում է իրեն կայանալու որպէս քաղաքական առաջնորդ, եւ իր համար գլխաւոր սպառնալիք էր համարում Վազգէն Սարգսեանին»: Դու սրանով քեզ լրիւ մերկացրել ես՝ որպէս նրա համախոհ եւ կարեկից: Այս բառերը տուեալ պահին քո հոգեվիճակի արտացոլումն էին: Դէ, իհարկէ, Վազգէնը նաեւ քեզ համար էր գլխաւոր սպառնալիք: Չեմ բացառում, որ ձեր ջերմ զրոյցի ընթացքում ինքդ ես նրան սա առաջարկել՝ որպէս ոճրագործութեան մոտիվ:*

*20. Հիմա ցուցակի մասին, որը քեզ է յանձնուել կէսգիշերին, ոչ թէ երեկոյեան ժամը 8-ին, ինչպէս դու, սովորականի պէս, ստում ես: Այդ ցուցակը 18 տարի դարձրել ես դրօշ՝ առանց հասկանալու, որ այդ ցուցակով դու ոչ կարող ես արդարանալ, ոչ էլ 27-ում քո անմեղութիւնը ապացուցել:*

*Աւելին՝ քեզ ցուցադրում ես որպէս միջակութիւն եւ ղեկավարելու անընդունակ մարդ: Դու պարտաւոր էիր անմիջապէս, անյապաղ նշանակել ժամանակաւոր պաշտօնակատարներ՝ կառավարման համակարգի ճգնաժամը կանխելու համար, պէտք է մտցնէիր երկրում արտակարգ դրութիւն, անմիջապէս ազատէիր Սերժ Սարգսեանին ԱԱ նախարարի պաշտօնից, բանակը բերէիր 1-ին աստիճանի պատրաստութեան, դիմէիր ժողովրդին ուղերձով: Դու սրանցից ոչ մէկը չարեցիր, բայց մոբիլիզացրիր քեզնից սպասելիքներ ունեցող ԱՄՆ, ՌԴ դեսպաններին, կաթողիկոսին եւ այլոց, որոնց ուղարկում էիր մեզ մօտ եւ նրանց բերանով աղերսում, որ քո եւ Սերժի նկատմամբ բռնութիւն չգործադրենք: Չգործադրեցինք եւ սխալուեցինք: Ինչ վերաբերում է ցուցակում նշուած անձանց՝ դրանք բոլորը Վազգէնի ամենամտերիմներն են եւ բարձր որակի մասնագէտներ: Քո նշանակածները տասնապատիկ զիջում էին նրանց մասնագիտական, Հայաստանին մատուցած ծառայութիւնների, հայրենասիրութեան եւ բարոյականութեան առումով:*

*21. Բայց եւ այնպէս ՊՆ-ի եւ դաչայի հանդիպումներից յետոյ դու համակերպուեցիր այն մտքի հետ, որ հրաժարականը անխուսափելի է, եւ մեզանից ժամանակ խնդրեցիր, որ թոյլ տանք մասնակցես Ստամպուլի վեհաժողովին, վերադառնաս ու հրաժարական տաս: Մենք համաձայնեցինք՝ սովոր լինելով տրուած խօսքին հաւատալ: Չեմ ուզում անդրադառնալ քո նկարագրած շահաբասական մուտքին ՊՆ, որը հիմնաւորապէս սուտ է, ախր մարդը պէտք է գոնէ մի քիչ ամօթ ունենայ: Դու գնացիր Ստամբուլ, քո ստորագրութիւնը դրեցիր Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը հաստատող փաստաթղթի տակ, վերադարձար ու գործի դրեցիր քո ամենասիրած կանոնը՝«բաժանիր, որ տիրես», որին դու տիրապետում ես կատարելապէս: Մի քանիսին գեներալական կոչում տուեցիր, միւսներին՝ պաշտօններ, խոստումներ, եւ քեզ յաջողուեց մարտի դաշտում կայացած վազգէնական կուռ թիմը ջլատել, պառակտել, ոչնչացնել եւ հրաժարականի հարցը օրակարգից հանել՝ օգտուելով հարթուած, քո կողմից մշտապէս օգտագործուած խարդախութեան, խաբեբայութեան թրքաբարոյ ճանապարհը: Հետաքրքիր է՝ այս մասին Նոբելեան մրցանակի յաւակնող «գրքումդ» գրե՞լ ես:*

*22. Հիմա եւս մէկ մէջբերում քո ստեղծագործական մտքի փայլատակումից. «Ի դէպ, Շիրխանեանի մասին Վազգէնին մի քանի անգամ ասել էի՝ չե՞ս տեսնում, որ նա խարդախ ու բանսարկու է: Ի՞նչ ես գտել դրա մէջ»: Եթէ դա եղել է քո համոզմունքը.*

*1. Ինչո՞ւ մէկ տարում երեք անգամ անձամբ դու նշանակեցիր ինձ նախարար, այն էլ՝ առաջին փոխվարչապետի կարգավիճակով, ընդ որում՝ երկու անգամ, երբ Վազգէնը արդէն չկար: Այդքան խիզախութիւն, տղամարդկութիւն չունէի՞ր, գոնէ մէկ անգամ ձեռդ խփէիր սեղանին ու հրաժարուէիր ինձ նախարար-փոխվարչապետ նշանակելուց: Փոխարէնը՝ թիկունքից, Վազգէնի ականջին բամբասում էիր, հա՞: Հիմա ո՞վ է բանսարկուն եւ խաբեբան:*

*2. Եթէ ես սահմանից հեռու եմ եղել 100 կամ 50 կմ, իմ՝ Արցախում եղած գիւղերի մէկ տոկոսի չափով դու եղե՞լ ես Հայաստանի սահմանամերձ գիւղերում, թէ՞ դու մինչեւ հիմա չես հասկացել, որ կոնֆլիկտը նախեւառաջ հայ-ատրպէյճանական էր, եւ Նոյեմբերեանից մինչեւ Մեղրի, բոլոր սահմանամերձ գիւղերը Ատրպէյճանի կողմից թիրախաւորուած էին, գնդակոծւում եւ ռմբակոծւում էին:*

*3. Ինչո՞ւ էիր Ստեփանակերտում վազվզում ինձ պատշաճ հիւրասիրելու համար, սեղանին ճոռո կենացներ ասում:*

*Ընդհանրապէս, քո գործը եւ խօսքը երբեւէ համատեղուե՞լ են:*

*23. 1999թ. Դեկտեմբեր. ԵԿՄ համագումարի իմ ելոյթում ասացի, որ իշխանութեան վստահութեան լիմիտը սպառուել է, եւ անհրաժեշտ է անցկացնել նախագահական նոր ընտրութիւններ: Դահլիճը ողջունեց ծափահարութիւններով: Դու եւ Սերժը խուճապի մէջ էիք, գուցէ դա է՞լ էր բանսարկութիւն:*

*Հիմա դու ասում ես, որ վերադառնում ես քաղաքականութիւն: Գալիս ես Մեղրին թուրքերին յանձնելո՞ւ, ազատագրուած հողերը նախկին չեֆերիդ յանձնելո՞ւ, Թիֆլիսում յայտարարելու, որ Հայաստանը Ջաւախքում ոչ մի խնդիր չունի՞, թէ՞ թալանդ շարունակելու: Իսկ ո՞վ է քեզ սպասում: Դու այդպէս էլ չհասկացար, որ հայաստանցիները քեզ ատում են, Սփիւռքը՝ նոյնպէս: Մի՞թէ 10 տարում ոչ մի անգամ չզգացիր, որ դու քո տեղում չես, որ դու ծիծաղելի ես նախագահի դերում: Հիմա դու պէտք է ժողովրդին ասէիր հետեւեալը՝ ներեցէք, հայեր, շանտղութիւն եմ արել, ձեզ թալանելով՝ միլիարդներ եմ կուտակել, շատ վնասներ եմ պատճառել ձեզ, հիմա, ինչքանը որ մնացել է, բերել եմ հետ տամ ձեզ, եթէ կարող էք, ներեցէք ինձ: Եթէ հայ ես, սա պէտք է անես: Հէչ անյարմար չե՞ս զգում, որ քո եւ Սերժի փոխարէն Փաշինեանն է ժողովրդից ներողութիւն խնդրում, մի մարդ, որը ոչ սպանել է, ոչ թալանել է, ոչ էլ կեղծել է, իսկ դու եւ Սերժը երեսներդ պաղոչ դարձրած՝ նորից իշխանութեան էք ձգտում:*

*Առայժմ այսքանը, կը սպասեմ Մինխհաուզենի նոր սխրագործութիւնների հրապարակմանը»:*

## ՄԱՀԱԶԴ



*ՎԱՀԱՆ (VAUGHN) ԳՐԻԳՈՐ*
*(Ծնեալ՝ Հոկտեմբեր 22, 1924ին)*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր, մեծ մեծ հօր եւ հարազատին՝ Վահան Գրիգորի մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, Մարտ 19, 2019ին:*

*Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Մարտ 29, 2019ին, կէսօրուան ժամը 12ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Old North Church մատրան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:*

*Սգակիրներ՝*
*Այրին՝ Ադրի Գրիգոր*
*Դուստրը՝ Էդա Գրիգոր*
*Դուստրը՝ Դոնա եւ Ջան Սմոլդըն*
*Թոռը՝ Նիքըլըս եւ Ալիսըն Մերեդիթ*
*Թոռը՝ Քրիսթին Մերեդիթ եւ Ջէյ Նիւբառր*
*Թոռը՝ Ալեքսանդր եւ Մեգըն Սմոլդըն*
*Թոռը՝ Էրիք Սմոլդըն*
*Ծոռը՝ Էլէնոր Նիւբառր*
*Ծոռը՝ Սայրըս Մերեդիթ*
*Եւ համայն հարազատներն ու բարեկամները*

*Թաղման արարողութենէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան սրահին մէջ, 117 S. Louise St., Glendale, CA 91205 (818-241-1073)*

# Արսէն Կիտուր

Շարունակուած էջ 15-էն

*թիւններ կը յաջորդէին իրար եւ Արսէն Կիտուր կը նշանակուէր Պայազիտ-Ալաշկերտ շրջանի լիազօր ներկայացուցիչ: Կը մեկնի ճակատ՝ ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու եւ միաժամանակ իր փորձառութենէն ելլելով՝ ապահովելու քիւրտերու, ասորիներու եւ եզտիներու չէզոքութիւնը, որ խիստ անհրաժեշտ էր այդ հանգրուանին: Հմտութեամբ կատարելով այս առաքելութիւնը, կրնայ ապահովել հայոց նահանջը եւ գաղթականներու փոխադրութիւնը դէպի Արարատեան դաշտ: Կ'իյնայ Պայազիտը եւ իր գործունէութիւնը կը կեդրոնանայ Արեւելեան Հայաստանի մէջ՝ գաղթականները տեղաւորելով եւ Նոր Պայազիտ (Սեւանայ լիճի ափին) շրջանի թաթար եւ քիւրտ ազգաբնակչութիւնը չէզոքացնելով: Այդ շրջանին մեծ թափով առաջ կը տարուէր Արեւելեան Հայաստանը օտար տարրերէ վնասազերծելու աշխատանքը, ինչ որ յետագային ունեցաւ յոյժ կարեւոր նշանակութիւն՝ Հայաստանը միատարր դարձնելու առումով: Հեռատես քաղաքականութիւն մը արդարեւ:*

*Մինչ 1918 Մարտ-Մայիս վերոնշեալ աշխատանքներուն մէջ էր, տեղի կ'ունենայ Սարդարապատի հերոսամարտը, որուն իր մասնակցութիւնը կը բերէ ան: Կը գործակցի Պանդուխտի հնչակեան գունդին հետ, ապա կը միանայ Զօրավար Անդրանիկի Յատուկ Հարուածող Զօրամասին: Անոր հետ կը հասնի մինչեւ Նախիջեւան, Խոյ եւ Ջուլֆա: Երբ զօրավարը կ'անցնի Զանգեզուր, ինք կը վերադառնայ Երեւան՝ շարունակելով հասարակական գործունէութիւնը՝ 1919 Յունուարին մասնակցելով Արեւմտահայ Բ. Համագումարին. կ'ընտրուի որպէս Արեւմտահայ Խորհուրդի գործադիր անդամ: Կը դառնայ այս խորհուրդէն նշանակուած երեսփոխաններէն մին, որոնք կը մասնակցէին Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանական նիստերուն:*

*Հայաստանի առաջին հանրապետութիւնը կ'որոշէ դիւանագիտական ներկայացուցիչ մը ուղարկել Իրաք, որուն նպատակը պիտի ըլլար հոն մէկտեղուած գաղթականները տեղափոխել նորակազմ Հայաստանի հանրապետութիւն: Միջագետքի եւ Կիլիկիոյ հայութեան դարձը հայրենիք ժողովրդագրական խիստ կարեւորութիւն ունեցող օրակարգ մըն էր: Վարչապետ Ալ. Խատիսեան այդ առաքելութիւնը կը վստահի Ա. Կիտուրի: Այդ պաշտօնը կը կրէր «քօնսիւլ» (հիւպատոս) կոչու- մը: Ան կ'ուղղուի Պաղտատ, որուն մասին կը գրէ. «Պոլսոյ, Կիլիկիոյ եւ Սուրիոյ մէջէն անցնելով Միջագետք հասնիլս, ճամբաներուս վրայ ինկած հայաշատ քաղաքներու մէջ ժողովուրդին կողմէ խանդավառ ընդունելութիւնը (որոնք ինծի կ'անուանէին Նոյեան տապանէն եկած առաջին աղաւնին)»: Ապա՝ «Ամենայնդէպս պէտք կը զգայի բարձրացնել ժողովուրդի բարոյական կորովը, արթնցնել անոր մէջ հայրենասիրական աւիւնը եւ կապել զայն ներգաղթի գաղափարին»: Ան կը վկայէ. «Տէր Զօր հասնելուս պէս՝ Խապուրի բրգացած ոսկրտիքներու վրայ ցցեցի Հայաստանէն հետս բերած հայկական դրօշը՝ ըսելով՝ «ահա ձեր առջեւ ըրած երդումիս գործադրութիւնը»»:*

*Յետագայ տարիներուն կ'ապրի Պաղտատի մէջ, ունենալով հասարակական եւ կրթական բեղուն գործունէութիւն: Սակայն, պատմակերտիչ աշխատանք մըն էր շուրջ 20 հազար իրաքահայ գաղթականներու ներգաղթի կազմակերպումը Խ. Հայաստան (անոնք մեծաւ մասամբ Վան-Վասպուրականցիներ էին՝ 1918-ին տարագրուած Իրաքի հարաւը): Երբ խորհրդային կարգեր կը հաստատուէին, ան կը նշանակուէր ՀՕԿ-ի (Հայաստանի Օգնութեան Կոմիտէ) Իրաքի ներկայացուցիչ: Դարձեալ կը նշանակուէր Ազգ. Թարգմանչաց դպրոցի տնօրէն: Նաեւ բեմի վրայ է ան. պատմաբան Սեդա Օհանեան կը գրէ. «Պաղտատի մէջ առաջին գրական-գեղարուեստական երեկոն, կազմակերպուած 1930 թուականին, նուիրուած էր Աւետիս Ա- հարոնեանի գրական գործունէութեան քառասունամեակին, որուն կը նախագահէր Աւ. Սահակեան (Հայր Աբրահամ) եւ օրուայ բանախօսներն էին Արսէն Կիտուր եւ Գրիգոր Ալեանաք»:*

*Սակայն, բեկումնային եղաւ 1936-ը Արսէն Կիտուրի համար: Իրաքեան իշխանութիւններ կ'արտաքսեն զինք երկիրէն. ահա իր բացատրութիւնը. «քօնսիւլութեանս շրջանին՝ դէպի Հայաստանի «մաքրագործուած» շրջանները ղրկած Միջագետքի մօտ 20 հազար գաղթականներու գործը, նոյնիսկ Սովետական Հայաստանի կառավարութեան հաւանութեամբ, որուն պատճառաւ աքսորուեցայ Իրաքէն իբր «համայնավար»»: «Մաքրագործուած»ը նկատի ունի վերոյիշեալ 1918-ի թաթարներու չէզոքացման քաղաքականութիւնը, որուն մէջ իր ներդրումը ունէր ան: Կը կարծենք թէ այս հայրենակեդրոն եւ ազգահաւաքման քայլը Կիտուրի մեծագոյն գործերէն մին է, քանզի ինչպէս Հնչակեան Կուսակցութիւնը, ինք եւս կը հաւատար հայահաւաքման նուիրական եւ անժամանցելի գործին:*

*Անոր համար կը բացուի կեանքի նոր էջ՝ հրապարակագրական, մտաւոր, գրական եւ կրթական: Կարճ շրջան մը կը մնայ Հալէպ եւ 1937-ին կը տեղափոխուի Պէյրութ եւ հոս կը կատարէ կեանքին միւս մեծ նուիրական գործը՝ «Արարատ» օրաթերթի հիմնադրութեան աշխատանքն ու անոր առաջին խմբագրապետութեան պաշտօնը: Անոր մեկնարկած գործը կը շարունակուի ցայսօր՝ աւելի քան 80 տարիներ ետք: Ան կը դառնայ Լիբանան մէկտեղուած հնչակեան անուանի գործիչներու փաղանգին այն դէմքերէն մին, որոնք կազմակերպեցին եւ ձեւաւորեցին հնչակեան կառոյցն ու անոր գաղափարական ուղին Միջերկրականի այս ափերուն. այդ երախտաւորներէն յիշենք՝ Սարգիս Տխրունի, Միհրան Աղազարեան, Ասատուր Էլճանեան, Արմենակ Էլոյեան, Բագրատ Սիւնիք, Եղիա Տօլպագեան, Միհրան Նաճարեան, Բենիամին Ժամկոչեան, Միհրան Սէֆերեան, Գէորգ Պապոյեան, Արմէն Ղարիպ, Յարութիւն Կուժունի եւ ուրիշներ: Որմէ ետք, զինք նորէն կը տեսնենք իր նախասիրած կրթական ասպա- րէզէն ներս, երբ 1938-40 թուականներուն կը նշանակուի Հալէպի Կիլիկեան վարժարանին տնօրէնը, որ «կը վարէ ձեռնհասօրէն», ինչպէս կը գրուի նոյն վարժարանին Յուշամատեանին մէջ, որ լոյս տեսաւ 1996-ին՝ Հալէպ, Ռուբէն Տիրարեանի խմբագրութեամբ: Ապա՝ 1940-42՝ տնօրէն Զահլէի ազգային Պալըգճեան վարժարանին:*

*Անկէ ետք, առաւելաբար կը դառնայ գրչի մարդ, կը նուիրուի ազգային-կուսակցական գործունէութեան: 1942-ին Պէյրութ հաստատուելէ ետք մինչեւ 1957 թ. ընդմիջումներով կը խմբագրէ «Արարատ» օրաթերթը, հանդէս կու գայ քաղաքական, ազգային, պատմական, յուշագրական, տեսական-գաղափարախօսական առաջնորդող յօդուածներով: Ազգային-հայրենասիրական, միաժամանակ՝ ընկերվարական-յառաջդիմական անշեղ ուղին կ'ըլլայ անոր հրապարակումներուն առանցքը, ընթերցողները կողմնորոշելու իր սկզբունքը: Այդ շրջանին զուգահեռաբար կը դասաւանդէ Դամասկոսի Թարգմանչաց ճեմարանէն ներս: 1962-ին կը պատահի դատապարտելի, բայց այդ օրերուն ընթացիկ երեւոյթ մը, երբ քաղաքական հակառակորդներ իր փոխարէն աչաբեկչութեան կ'ենթարկեն իր որդին՝ Սուրէնը, որ ծանրօրէն կը վիրաւորուի: Ուրեմն՝ թուրք ոսոխին գնդակներէն եւ եաթաղանէն վրիպած գործիչը պիտի զգետնուէր եղբայրասպան սեւ գնդակներով: Ոճրագործներ չեն հասնիր իրենց նպատակին: Այնուհետեւ, մինչեւ կեանքին հրաժեշտ տալը՝ 1976-ին, հաւատարմօրէն կը հետեւի կուսակցական կեանքին, որպէս երէց սերունդի աւանդապահ ներկայացուցիչ կը մասնակցի կուսակցութեան համագումարներուն, ժողովներուն եւ գաղափարական կեանքին: Պայազիտէն ծնունդ առած, կեանքի ալեկոծ յորձանուտին մէջ կոփուած եւ հայութեան անմնացորդ ծառայած Արսէն Կիտուրի վերջին հանգրուանը կ'ըլլայ Պէյրութի ազգային գերեզմանատան Հնչակեան Պանթէոնը:*

*Արսէն Կիտուրի երախտաշատ գործերէն մէկն էր նաեւ իր գրչին արգասիքը՝ պատմական, յուշագրական եւ տեսաբանական գիրքերով, հրապարակագրական բազմահարիւր էջերով: Անոնցմէ յիշենք՝ «Հայ Ազատագրութեան Ճանապարհին» (Պէյրութ, 1949), նուիրուած հնչակեան ֆետայիներ Ժիրայրի, Անտոն Ռշտունիի, Զէյթունցիներու յեղափոխական գոր- ծունէութեան. արդէն անդրադարձանք «Յուշեր Ու Փուշեր»ուն. իսկ ամենակարեւորը, ի հարկէ, «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան» (1962, 1963) երկհատոր կոթողային աշխատութիւնն է, որ իր տեսակին մէջ առ այսօր կը մնայ միակը՝ որպէս կարեւոր աշխատութիւն Հնչակեան Կուսակցութեան մասին: Անկէ մեծապէս օգտուած են անոնք, որոնք ուզած են գրել կուսակցու- թեան շուրջ: Ունի տեսաբանական-փիլիսոփայական գիրքեր եւս, ուր յատկապէս ըմբերանիչ պատասխան տուած է համայնավար այն կարծր գաղափարախօսներուն եւ պատ- մաբաններուն, որոնք կասկածի տակ առած են հնչակեանութեան ընկերվարական վարքագիծը. ոմանք նոյնիսկ ցինիկաբար հեգնած զայն: «Սբագրեցէք Յանուն Արդարութեան» յօդուածաշարքը, որ վերածուած է գիրքի, կը բացատրէ ընկերվարութեան ըմբռնումը, հնչակեաններուն ներդրումն ու տարածումը այդ գաղափարներուն, դասակարգային պայքարի տրամաբանութիւնը, անոր գործընթացն ու ազգայինի եւ միջազգայինի յարաբերակցութիւնը եւ այլն:*

*Ա. Կիտուրի գրչով եւ շունչով դաստիարակուած են սերունդներ, ընթերցողներ եւ համակիրներ: Իր ծննդեան 135 ամեակին առիթով կ'արժէ մէկ կողքի տակ ամփոփել անոր արժէքաւոր եւ մնայուն նշանակութիւն ունեցող հրապարակագրական էջերը:*

*Բիւր յարգանք «Արարատ»-ի առաջին խմբագրապետին, ազգային-կուսակցական գործիչին, տեսաբանին, զէնքի մարդուն, թափառահալած մտաւորականին, որ իր վաստակով, անվարան կը համարուի լուսաւորներէն մէկը Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան երախտաւորներու դասին:*


Հանրակառքերը պիտի մեկնին կէսօրուան ժամը 12-ին
Կլենտէյլէն
Պըրպենքէն
Լա Քրեսէնթա / Թահանկաէն
Փասատինաէն
Մոնթեպելլոէն
Հոլիվուտէն
Նորթ Հոլիվուտէն
Նորթ Հիլզէն
Էնսինոէն
Քանոկա Փարք / Վան Նայզէն
Փոխադրամիջոցներ ապահովելու եւ յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնեցէք (888) 924-1915 թիւին:
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԱՐՇԱՒ
ԱՊՐԻԼ 24
ՄԻԱՍԻ՛Ն ՔԱՅԼԵ՛ՆՔ
ԹՐՔԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ | ԺԱՄԸ 1-ԻՆ
6300 WILSHIRE BLVD , LOS ANGELES, CA 90048
FOR MORE INFORMATION VISIT WWW.MARCH4JUSTICE.COM | ARMENIAN GENOCIDE COMMITTEE
WWW.MARCH4JUSTICE.COM | 888 924 1915